Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Lün
1881

# ԳԱՂՏՆԻՔ ՓԱՐԻԶՈՒ

## ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ ԵՒ Ի ՄԵՏԱՍԱՆ ՊԱՏԿԵՐՍ

ՅԵՕԺԷՆ ՍԻՒԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ
Ի ԳԱՂՂԻԱՐԷՆ ԲՆԱԳՐԷ
ՀԱՅԿ ՅԱԿՈԲ ՏԷՏԷԵԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ



ԶՄԻՒՌՆԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՏԷԵԱՆ
1863

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հֆ. 1888
41881-60

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գաղղիացի մեծահամբաւ Էօժէն Սիւ հեղինակին Գաղտնիք Փարիզու (Les Mystères de Paris.) անուանի վիպասանութիւնը գրեթէ ամեն լուսաւորեալ ազգաց լեզուաւ թարգմանուելով եւ կրկնակի տպագրութիւններով 'ի լոյս ընծայուելով, մեծ ընդունելութիւն եւ համբաւ ստացած է։

Մեր սիրելի ազգը տակաւին այսպիսի գրքերու թարգմանութիւնը վայելելու քանի մը պատճառներու համար զուրկ մնացած է, ուստի փափաքելով որ անոր մէկ փոքրիկ ճաշակը մեր սիրելի ազգին ալ հաղորդենք, ձեռք զարկինք այս հռչակաւոր վիպասանութեան թատերգութիւնը թարգմանել, որ նոյն գործոյն համառօտ դաշնակութիւնն ըլլալով, միանգամայն կրթական, զբօսեցուցիչ եւ հետաքրքրական է։

Հ. Յ. ՏԷՏԷԵԱՆ

ԼԷՕԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

# ԱՆՁԻՆՔ

ԺԱԳ ՖԷՐԱՆ
ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ
ՇՈՒՐԻՆԷՕՐ
ՌՕՏՕԼՓ
ՄՈՐԷԼ
ԲԻԲԼԷ
ԲԻՔՎԻՆԷԿՐԸ
ՊԷՆՈՒԱ
ԳՈՐԾԱԿԱԼ ՄԸ
ԺԷՐՄԷՆ
ԹՕՄ ՍԷՅԹԸՆ
ՊՈՒՔՏԷՆ
ՖՐԱՆՍՈՒԱ
ԳԼԷՐՄՕՆ
ՀԱՅՐ ՐՈՒՍԷԼ
ՊԱՐՊԻԼԻՈՆ
ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼԻ ԾԱՌԱՆ
ՍԱՌԱՅԻ ԾԱՌԱՆ
ԿԱՊՐԻՕՆ
ԲԻԷՐ

ՏԱՍՆԱՊԵՏ ՄԸ
ԱՆՑԱՒՈՐ ՄԸ
ՆԱՄԱԿԱԲԵՐ ՄԸ
ՍԱՌԱ
ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ
ՐԻԿՕԼԷԹ
ԹՕՐԹԻԼԵԱՐ
ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ
ԼԷԹԻԷՐ
ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ
ՏԻԿԻՆ ՎԱՐՆԷՐ
ՏԻԿԻՆ ՏԻԽՊՐԷՕՅԼ
ՑԻԿԻՆ ՄՈՐԷԼ
ՖԷԼԻՔՍ ՄՈՐԷԼ
ԲՆԱԿԻՉՔ ՔԱՂԱՔԻՆ
ՁԻՆՈՒՈՐՆԵՐ
ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ
ՁԻՆԱԿԻՐՆԵՐ
ՊԱՀԱՊԱՆՆԵՐ
ԳԻՒՂԱՑԻՆԵՐ ԵՒ ԳԻՒՂԱՑՈՒՀԻՆԵՐ

# ԳԱՂՏՆԻՔ ՓԱՐԻԶՈՒ

## ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ

### Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ ԵՒ Ի ՄԵՏԱՍԱՆ ՊԱՏԿԵՐՍ

## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

### ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ. — ՔԱՂԱՔԸ։

Թատրոնին դիմացը քաղաքին մէկ փողոցը։ Ձախ կողմի անկիւնը դանակ մը կը տեսնուի դշտիկ նամակատուփով մը։ Աջ կողմը նորաշէն անկատար տուն մը։ Անձրեւ կու գայ եւ մութ գիշեր է։ Փողոցը լապտերներով լուսաւորուած է։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԹՈՐԹԻԼԵԱՐ՝ յետոյ պահապան մը,

ԼԷԹԻԷՐ։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Ըհաւասիկ, Լէթիէր, Լոբէն Պլան բռնած պանդոկը, որ կը փնտռես։

ԼԷԹԻԷՐ.

Շնորհակալ եմ, Թօրթիլեար, երթամ էրկանս ժամադրոյը գտնեմ։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Ի՞նչպէս, այս առտու արբենալով գարշելի կաւեցաւ ուրեմն։

ԼԷԹԻԷՐ.

Այո՛, բայց ո՛րու հետ գործ ունենալնին պիտի հասկընամ։

ԼԷԹԻԷՐ պանդոկը կը մտնէ։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Յաջողութիւն կը մաղթեմ, Լէթիէր։ Ո՛րչափ նեղութիւն կրեցի այս տախտակը ձեռք ձգելու համար, զոր Պուրժէլէի փողոցին պատին վրայ պիտի դնեմ և մէկ ժամ պիտի պոռամ պոռչտեմ. Անցէք, վճարեցէք, անցէք, վճարեցէք։ (Քանի մը դանդո-

նէր շարժելով) այսօր միայն երեք սու * շահեցայ։ Աս քաղաքիս մէջ որչափ մարդիկ հոգ չեն ըներ վրանին մա-քուր պահելու...։ Ոմանք ալ տախ-տակիս քովէն անցնելով վրաս տիղմ կը ցատկեցընեն...։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԹՈՐԹԻԼԵԱՐ. ՐԻԿՈԼԷԹ՝ ձեռքը բաց անձրևոց մը և ծրար մը բռնած։

ՐԻԿՈԼԷԹ՝ Թաւրոնին ներսի կողմը կենալով.

Այսպիսի դէշ օդով խոհեմութիւն է արդեօք խիստ ճերմակ գուլպաներ և գեղեցիկ մուճակներ հագնիլ և դուրս ելլել։ Բարեբաղդաբար ա-ղէկ կօշիկներ ունիմ։

ԹՈՐԹԻԼԵԱՐ՝ զին տեսնելով.

Հա հա՛, Օրիորդ Րիկոլէթ, հոս ի՞նչ բան ունիս։

ՐԻԿՈԼԷԹ.

Դո՞ւն ես, Թորթիլեար, ամեն տեղ քեզ կը պատահիմ։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Գիտեմ, հոս ինչ բանի համար եկած ես, ըստ որում երեք օրէ 'ի վեր Մէթրը ա'Լէքօլ և Ռուէթ՝ Փ. տը Մարին՝ Թամբլը փողոցը ձեր տանը առջև եղած բակին մէջ եր-գելու չըերին։

ՐԻԿՈԼԷԹ.

Ա՛յո, անհանգիստ եմ, արդեօք հիւա՞նդ է։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Փլէօր տը Մարի՞ն, ո՛չ, անհոգ եղիր։ Ռուէթ միայն հազ մը ունի, որ բաւական է Նօթրը-Տամ եկեղե-ցւոյն երգէոնին սաստիկ ձայնը խա-փանել. կ'ուզէիր վեր ելլել և Փլէօր տը Մարին տեսնել։

ՐԻԿՈԼԷԹ.

Այն գարշելի անձանց մէ՞ջ երթամ. երբէք ըլլալու բան չէ։ Խե՜ղճ Փլէօր տը Մարի, ինչպէս խոհեմ, համեստ ու միանգամայն թշուառ է անոնց մէջ։ Ինքզինքս յանցաւոր կը սեպեմ, եթէ քանի մը օր ուշանամ առանց զինքը տեսնելու և անոր սիրտ տալու։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Իրօք՝ չելլելդ աւելի աղէկ կ'ը-նես, ինչու որ դուրս ելաւ։

ՐԻԿՈԼԷԹ.

Ի՞նչպէս գիտես։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Հիմա իմ տախտակիս վրայէն ան-ցաւ, անշուշտ առանց վճարելու... աս յայտնի բան է։ Կարծեմ Ռուէ-թին ողորմուկ ծախու առնելու համար Օտղկանց շուկային ծայրը խատալա-ճառի մը խանութը գնաց, իրեն շնորհած վարդի փոքր փայտը ձեռքը բռնած էր... Ամեն տեղ իր հետը կը տանի... աս ալ ստուգիւ զար-մանալի բան է։

ՐԻԿՈԼԷԹ.

Ակէ զատ բան մը չունի աշխար-հի մէջ, ուստի մարդ կրնայ հասկը-նալ որ խեղճը միտքը անոր վրայ ըլ-լալ պէտք է։

---

* Քսան սուն մէկ Փրանք է։

ԹՈՐԹՈՒԼԵԱՐ՝ որ դէպ 'ի ներս կ'երթայ։

Ահա Ֆլէօր տը Մարին որ կու գայ, շատ չուշացաւ... միշտ միատեղ շատախօսութիւն կ'ընէք. ուստի ձեզ մինակ կը թողում. երթամ զաւաթ մը ըմպելիք խմեմ որ ոտքերս տաքնան։

Պանդուխտը կը մտնէ։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՌԻԿՈԼԷԹ, ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, յետոյ վարդի ծաղկը թուղթի մը վրայ կը դնէ։

Ռիկոլէթ, դո՛ւն ես, ո՛րչափ բաղձացած եմ զքեզ տեսնելուս։

ՌԻԿՈԼԷԹ.

Ըստ որում դուն չես գար, անշուշտ պէտք է որ ես գամ. շրջազգեստդ բերի։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Բարի Ռիկոլէթ. քու օրական աշխատանքէդ զատ՝ ինծի համար ալ աշխատեցար, թէ և չեմ կրնար վճարել...

ՌԻԿՈԼԷԹ.

Միթէ կամքիս ուզածը ընել չեմ կրնար. (Ֆլէօր տը Մարի շարժմունք մը կ'ընէ.) բայց ինչ ունիս։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛վ Աստուած, այսչափ կենալս անգամ շատ է... Ռուէթ ինձ կը սպասէ... եթէ իսկոյն քովերնին չ'երթամ, գուցէ զիս ծեծեն։

ՌԻԿՈԼԷԹ.

Ի՞նչպէս, աս Մէթրը տ'Էքօլը միշտ բռութեամբ կը վարուի հետդ, և այն անօրէն Ռուէթը ամեն ժամանակ կը նեղէ՞ զքեզ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Հիւանդ ըլլալէս 'ի վեր, Ռուէթը աւելի խիստ է հետս։

ՌԻԿՈԼԷԹ.

Ես քու տեղդ ըլլայի, անոր ըրածներուն չէի համբերեր։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ի՞նչ կ'ընէիր։

ՌԻԿՈԼԷԹ.

Կը թողուի կը փախչէի... ըստ որում ըսածնուն նայելով, զքեզ փողոցի մէջ գտնելով իրենց տունը առին, իրաւունք չունին կեանքդ այդչափ թշուառացընելու. դարձեալ կ'ըսեմ, ես քու տեղդ ըլլայի՝ կը փախչէի։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Շատ անգամ ատոր վրայով մտածեցի. բայց զանոնք թողում ու ինչ ընեմ, աշխատիլ չեմ գիտեր։

ՌԻԿՈԼԷԹ.

Ինծի հետ եկո՛ւ, ես կը սորվեցընեմ քեզ... քիչ մը կը խոնջենաս, բայց ցորեկը աղէկ վաստկելէն ետքը, գիշերը ուրախ զուարթ, քիչ մ'ալ անձնապարծ կ'ըլլաս, և աւելի գոհ սրտով կը քնանաս... կը հաւանի՞ս ուրեմն, կու գա՞ս իմ տունս։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Քո՛ւ տունդ, ո՛հ, երբէ՛ք, երբէք. ես չեմ ուզեր զքեզ Ռուէթի և Մէթրը տ' Էքօլի բարկութեան ենթակայ ընել...

Ֆլէօր տը Մարի շարժմունք մը կ'ընէ։

ՌԻԿՈԼԷԹ.

Ինչո՞ւ վախցար,

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Կարծեմ թէ Շուէթը զիս կը կանչէ։

ՌԻԿՈԼԷԹ.

Րոպէ մը ևս կեցիր։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛չ, ո՛չ, չեմ ուզեր զինքը բարկացնելու առիթ տալ... Մնաս բարեաւ... Մնաս բարեաւ։

ՌԻԿՈԼԷԹ, անոր հետ երթալով։

Վաղը տեսնուինք, այնպէս չէ՞։

Ֆլէօր տը Մարի տունը կը մտնէ, Ռիկոլէթ դուրս կ'ելնէ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՌՈՏՈԼՖ. Ետքը՝ ՍԱՌԱ, մարդու հագուստով։

ՌՈՏՈԼՖ, աջ կողմէն ներս մտնելով.

Երեք օրէ 'ի վեր զուր տեղը գիշերները կուգամ, որ ինծի այնչափ քաջութեամբ օգնող մարդը գտնեմ... Այսօր աւելի երջանիկ պիտի ըլլամ արդեօք... (Սառա անոր կը մօտենայ, ու զան կը դիտէ։) Ահա աս է ինծի ցուցըցած պանդոկը։ Ներս մտնեմ նայիմ, և եթէ զան հոն չ'գտնեմ, այս տարօրինակ թաղին ինձ պատճառած զարմանալի դիտողութիւնները ընեմ գոնէ։

ՍԱՌԱ. Ռոտոլֆին պանդոկը մտնելը տեսնելով.

Նոյն ինքն է, խաբուած չեմ։

Ներսը ձայներ կը լսուին։ — Սառա մէկ կողմ քաշուելով.

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՆՈՅՆԵՐԸ, ԹՈՐԹԻԼԵԱՐ՝ պանդոկէն դուրս ելլելով. ԱՆՑԱՒՈՐՆԵՐ ձայներ լսելով կը մօտենան։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Լաքէն պանդոկը եղողներուն գլուխը միշտ տաքցած է։

ԱՆՑԱՒՈՐ ՄԸ.

Ի՞նչ կայ արդեօք ներսը։

ՈՒՐԻՇ ԱՆՑԱՒՈՐ ՄԸ.

Ըստ սովորութեան անշուշտ կռիւ ըլլալ պէտք է։

ԹՈՐԹԻԼԵԱՐ՝ ապտակներուն պարնելով։

Հա՛մ քեզ նայիմ, խա՛ծ զանոնք, պառաւ իկս, խա՛ծ։

ԵՐՐՈՐԴ ԱՆՑԱՒՈՐ ՄԸ.

Աս զարշելի Թորթիլեարը չար մէկն է։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Ի՞նչ բանի համար չար ըլլամ, Լէթիէրը գինովներու ձեռքէն կ'ազատեմ։

ԱՌԱՋԻՆ ԱՆՑԱՒՈՐ.

Ի՞նչ, ներսը Լէթիէր[1] մը կայ։

Ներսը ապտակներուն զարնուելու ձայնը կը լսուի։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Ապակեվաճառն եկա՛ւ։ (Ապակեվաճառի ձայնին նմանցնելով.) ապակեվաճա՛ռ, հա՛ս եկու, ահա՛ քեզ յաճախորդներ։

ՍԱՌԱ, պատի խորշերուն մէկին քաշուելով.

Ո՛հ, աս ինչ ձայներ են, և որչափ բազմութիւն կայ հոս... Հե-

---

1 Գաղղ. ԼԷԹԻԷՐ կաթնավաճառ կին ըսել է։

տանամք քիչ մը ատեն անոնց աչքին առջևէն ։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՆՈՅՆԵՐԸ, ՇՈՒՐԻՆԵՕՐ, ԼԵԹՈՒԵՐ, ՊԵՆՈՒԱ, ՖՐԱՆՍՈՒԱ, իրենց հետ պանդոկէն դուրս ելլող ԲԱԶՄՈՒԹԻՒՆ, ԱՆՑԱՒՈՐՔ ։

Ամենքն ալ ջահերով դուրս կ'ելլեն ։ Լեթուեր ինքզինքը պաշտպանելով անոնց ջահերէն մէկ կողմ կը քաշուի ։

ԼԵԹՈՒԵՐ.

Այո՛, ամենքդ ալ սրիկայ էք, և բնաւ մէկերնէդ չեմ վախնար ։

ՊԵՆՈՒԱ.

Լուէ դուն, թոջած ալիւր վաճառող ։

ԼԵԹՈՒԵՐ.

Ա՛հ, կը ճանչնամ զքեզ. դո՛ւն ես, որ մարդուս հետ անգամ մը կռիւ ընել ուզեցիր ։

ՊԵՆՈՒԱ.

Խելքը թռուցեր է ։

ԼԵԹՈՒԵՐ.

Կամ դուն ես կամ ան (Ֆրանսուան ցուցնելով.) որ ժամացոյցը առիք ։

ՊԵՆՈՒԱ, պոռալով անոր ։

Քիչ մը աւելի բարձր խօսէ այդ, եթէ կը համարձակիս ։

ՇՈՒՐԻՆԵՕՐ, մէջ մտնելով ։

Ես ալ հրաման չունիմ որ անոր դպչիս, ան կին մ'է. երբ ուզես մէկուն բուռ մը իջեցընել, պէտք է անանկ մէկուն դիմացը ելլես, որ քեզ երկու հատ իջեցընելու կարող ըլլայ, ինչպէս ես ։

ՖՐԱՆՍՈՒԱ.

Քեզի ինչ, Շուրինեօր ։

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Ինծի ինչ, ըսիր... ես այսպէս կ'ուզեմ, կը հասկընա՞ք ։

Բազմութեան մէջ ուժգին կը լսուի, Ռօդոլֆ կը մօտենայ ։

ԼԵԹՈՒԵՐ.

Ահաւասիկ աս ձեզի պէս սրիկայ չէ ։

ԹՕՐԹԻԼԵԱՐ.

Հա՛ քեզ նայիմ... խա՛ծ զանոնք, ահա պաշտպանող ունիս ։

ԼԵԹՈՒԵՐ.

Կը կարծէք թէ իմ էրիկս հոս գալու չձգելէս 'ի վեր ձեզ չեմ ճանչնար ամենքդ ալ՝ Մէթրը տ'Էքօլը իր երգէոնովը, իր չար Շուէթը և իրենց պզտիկ Ֆլէօր տը Մարին, որ իրենց պէս պիտի ըլլայ ։

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Ի՛նչ որ կ'ուզես՝ ըսէ Մէթրը տ'Էքօլի համար, որուն հետ նաւակիս պատճառաւ հաշիւ մը ունիմ տեսնելիք, բայց Ֆլէօր տը Մարիին համար մի՛ խօսիր, կը հասկընա՞ս, եթէ ոչ՝ մէկդի կը թողում զքեզ, կնիկ ։

ՊԵՆՈՒԱ.

Լռեցո՛ւր սա կինը ։

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Բայց ինչո՞ւ պիտի լռէ, եթէ իր մարդը կողոպտեր են ։

ՊԷՆՈՒԱ.

Վէճ մը կամայ, Շուրինէօր, չար մի՛ ըլլար... եթէ ո՛չ...

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Եթէ ո՛չ, ի՞նչ:

ԼԵԹԻՒԻՐ, Ֆրանսուային որ փախչելու կ'ուզէ:

փախչի՞լ կ'ուզես, բայց այսպէս աժան ազատիլ չըլլար... օձիքդ չեմ թողուր, և միայն տեսչութեան դուռը պիտի թողում զքեզ:

Ձեռքը օձիքին վրայ կը դնէ:

ՖՐԱՆՍՈՒԱ, բռնութեամբ զայն հրելով,

Հիմա քեզ...

ՇՈՒՐԻՆԷՕՐ, անոր վրայ նետուելով:

Ո՛հ, սիրտդ կո՞ւ կուզէ:

ՊԷՆՈՒԱ.

Դուն ես կռիւ փնտռողը, աՀա՛ ուրեմն...

ՌՕՏՕԼՖ, անոր յետեւէն բռնելով:

Երեք հոգի մէկու դէմ:

ՇՈՒՐԻՆԷՕՐ, զայն ճանչնալով.

Ո՛հ, պարոն, դո՞ւն ես:

ՊԷՆՈՒԱ.

Մեզ կատակ կընէ: Հիմա պիտի տեսնէք...

ՌՕՏՕԼՖ, զայն պատին կը հրմշտէ:

Ձեզ ըսի որ հանդարտ կենաք:

ՊԷՆՈՒԱ.

Ո՛հ, այսքան պզտիկ բազուկին վրայ ինչ երկաթեայ ձեռք մ'է:

ՇՈՒՐԻՆԷՕՐ, Ռօտօլֆին.

Աղէկ ըսեր էիր որ պիտի տեսնուինք:

ՖՐԱՆՍՈՒԱ.

Միայն երկու հոգի են և մէկ կին. վրանին իյնանք:

ԹՕՐԹԻԼԵԱՐ.

Շուրինէօրի համար բաղնիքը պատրաստ է:

ՊԷՆՈՒԱ ԵՒ ՖՐԱՆՍՈՒԱ.

Այո՛, այո՛, վրանին իյնանք:

ՇՈՒՐԻՆԷՕՐ. Ռօտօլֆին ձող յանձնելով:

Գլուխնիդ պաշտպանեցէք:

ԹՕՐԹԻԼԵԱՐ, պոռալով:

Գիշերապահ զօրքերը կու գան, հինգ կարմրազգեստ զօրք, փախեցէք, փախեցէք...

ՊԷՆՈՒԱ.

Փախչինք:

Պէնուա և Ֆրանսուա անկիւնը կ'երթան. Նմանապէս և բոլոր Լաճէն պլանի մէջ գտնուող բազմութիւնը:

ՌՕՏՕԼՖ, Շուրինէօրին:

Աս կինը մէկ տեղ տար, անոնց ձայնէն տաջ:

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Շատ աղէկ, բայց անունդ ինչ է:

ՌՕՏՕԼՖ.

Ռոտոլֆ:

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ո՞ւր պիտի նորէն տեսնուինք:

ՌՕՏՕԼՖ.

Հիմա, հոս:

ԹՕՐԹԻԼԵԱՐ.

Մի՛ վախնար, Շուրինէօր, գիշերապահ զօրքը ես եմ:

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ի՞նչպէս:

ԹՕՐԹԻԼԵԱՐ.

Նայեցայ որ բանը դէշի պիտի երթայ, զօրքերը կու գան, պոռացի, որով փախան:

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Շատ աղէկ ըրիր, ընկեր։

Անոր ձեռքը կը սեղմէ ի նշան բարեկամութեան։

ԼԷԹԻԷՐ.

Եթէ աս բարեկամը չըլլար.... ո՛չ, երբէք չպիտի մոռնամ զան։

ԹՕՐԹԻԼԵԱՐ.

Ուրեմն, Լէթիէր, միշտ յիշէ զիս։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Կեցիր, բարեկամ, ու՛ր կ'երթաս, (Թօրթիլեար կը հեռանայ) եկո՛ւ, Լէթիէր, աս վախու տեղ չունիս դուն։ (Ռօտօլֆին) և դուն պարոն, եթէ բարեկամ մը ունիս, կրնաս ըսել քու վրադ խօսուած ժամանակը թէ. բարեկամ մը ունիմ, որ բուռի հարուածները վայելչութեամբ գանկին վրայ կը յարմարցընէ, մանաւանդ վերջին անգամ, որուն բարեկամութիւն սկսանք ստանալ.... այս ինչ կարկուտ է։

ԼԷԹԻԷՐ.

Երթանք, կը վախնամ որ նորէն չի գան։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Շատ աղէկ... նորէն տեսնուինք, պարոն։

ՌՕՏՕԼՖ.

Նորէն տեսնուինք։

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ՌՕՏՕԼՖ. ՍԱՌԱ, Ռօտօլֆի ճանապարհը կտրելով՝ որ դուրս ելլել կ'ուզէր։

ՍԱՌԱ.

Տէր իմ։

ՌՕՏՕԼՖ.

Ի՞նչ կը տեսնեմ... Մաք-Կրէկօր կոմսուհին... աս զգեստներով։

ՍԱՌԱ.

Պէտք եղաւ աս զգեստները հագնիլ որ քեզ հոս պատահիլ կարենամ...

ՌՕՏՕԼՖ.

Տիկին...

ՍԱՌԱ.

Ամեն փորձ փորձեցի քեզի հետ տեսութիւն մը ընելու առիթը ձեռք բերելու համար, զոր մինչև հիմա ընդդէմ իրաւանց... մերժեցիր...

ՌՕՏՕԼՖ.

Իրաւա՛նց դէմ... մտիկ ըրէ ուրեմն, տիկին, որովհետև բաղդը կ'ուզէ որ հոս, այս աղետալի տեղը տեսնեմ զքեզ այնքան բազմամեայ բաժանմանէ՛մը ետև, զոր ես յաւիտենական կը կարծէի։ Գիտցիր ուրեմն թէ որչափ ատելութիւն կը պատճառես ինծի...

ՍԱՌԱ.

Ո՛հ, խիստ անգութ ես։

ՌՕՏՕԼՖ.

Պէտք է որ ըլլամ։ Տասն ու եօթը տարի կայ, փառասիրութենէ խաբուած, և Մկլմախացի վհուկի մը կանխասացութենէն կուրացած, որ քեզ թագ խոստացած էր, եղբօրդ հետ հօրս պալատը եկար։ Ես խաբուեցայ քու շահաւէր կերքեդ, և շուտ մը անկեղծութեամբ և իմ տասնեվեցամեայ ազնուական անձնանուիրութեամբս սիրեցի զքեզ. ուզեցիր որ ամուսնութիւննիս գաղտնի կերպով ընենք, ու ես եկեղեցւոյ խորանին

առջև զքեզ կինս ըրի ։ Այս գաղտնի միաւորութեան հետևութիւնները զքեզ աշխարհի առջև յանցաւոր պիտի ընէին, ուզեցիր որ ամեն բան հօրս իմացընեմ․ իր բարկութենէն անընկճելի մեծանձնութենէն, և թագաւորական միաւորութեան մը համար ունեցած խորհուրդներէն չվախնալով, մեր ամուսնութիւնը անոր իմացուցի․․․ Իր սրտմտութիւնը սոսկալի եղաւ․․․ Զիս ստիպել ուզեց որ այնպիսի միաւորութիւնը քակեմ, որ օրինաց դէմ է, կ՚ըսէր․․․ ես անոր դէմ կեցայ․․․ բանտ դրուեցայ, բայց խօսքիս վրայ կեցայ, միայն այն դաշամբ զիս բանտէն հանել ուզեցին, որ իշխանութեան իրաւունքներէ զրկուիմ ու եղբօրս թողում․․․ քեզի համար բոլոր իրաւունքներէս զրկուեցայ․․․ Զքեզ այնչափ սիրելս բաւական չէ՞ր ։

ՍԱՐԱ.

Այո՛, այո՛, բայց ես․․․ ես ալ նեղութիւն չքաշեցի՞ միթէ․․․ և իմ ունեցած սէրս ։

ՌՕՏՕԼՓ.

Քու սէ՛րդ․․․ կը համարձակիս քու սիրոյդ վրայօք ինծի խօսելու․․․ եղբօրդ գրած նամակներէդ ետև․․ այնպիսի նամակներ, որ խիստ ուշ ձեռք անցուցի․․․

ՍԱՐԱ.

Ի՞նչ կըսէք․․․ այն նամակները․․

ՌՕՏՕԼՓ.

Այո՛, այն նամակները ձեռք անցան․․․ դուն պաղ ատելութեամբ մը ինծի հետ կը վարուէիր, ու ես քու պարզելի փառասիրութեանդ խաղալիքն եղած էի․․․ Դուն զիս չսիրեցիր, բայց իշխանաւորը․․․ Ուստի տարի մը ետքը ժառանգութիւններէս զրկուեցայ, մեր ամուսնութեան բաժանման հաւանութիւն տուիր, որուն դէմ ես իմ բանտիս մէջէն կը բողոքէի ։ Նաև դուն տեսնելով որ մեր աղջիկը՝ Մաք-Կրեկօր կոմսին հետ ամուսնութեանդ արգելք կ՚ըլլայ, քովէդ հեռացուցիր զան, և վարձկան կանանց ձեռքը յանձնեցիր, սիրտդ դիմացաւ որ քեզմէ հեռու մեռնի․․․ Ասէ ահա քու վարմունքդ․․․ բայց այս օրուան օրս դուն այրի ես, և եղբօրս մահուամբը թագաւորական պսակը ինծի մնաց․․․ Ասոր համար է, տիկին, որ դուն ալ հիմա ետևէս ինկած ես ։

ՍԱՐԱ.

Բայց ինծի համար ունեցած ատելութեանդ գաղտնիքը տ՚ Արվիլ մարքէզուհին սիրելդ կ՚երևի ինձ ։

ՌՕՏՕԼՓ.

Կը կարծես որ պիտի ուրանամ․․․ Երբ ես առանց ապագայի տարագիր մ՚էի, Քլէմանս տ՚Արվիլ ճշմարիտ բարեկամուհւոյ մը խանդակաթ գութը, և քեռ մը ազնիւ անձնանուիրութիւնը ունեցաւ ինծի համար ։ Իրեն հետ կարգուելու համար Գերմանիայէն մեկնեցայ, և քիչ ատենէն պիտի յաղթեմ իր խղճի մտաց անձկութեանը ։ Ուրեմն, տիկին, բոլոր յոյսդ կտրէ ինծմէ․․․ Քեզ քանի տեսնեմ՝ իմ ըրած սխալանացս պատճառը պիտի յիշեմ, որուն փոխարէ-

նը ամէն օր կը ջանամ ընել . . . ինձ պարտք մը ըրած եմ բարիները վարձատրել . . . . . չարագործները հալածել . . . ազնուական թշուառացեալները օգնել . . . և քանի մը հոգի դատապարտութենէ ազատել . . . ահա աս ամէնը պիտի ընեմ . . . որպէս զի քու անողոքելի փառասիրութեանդ և անգութ ինքնասիրութեանդ պատուղէն սխալանացս աղետալի բոլէին թողութեանը արժանի ըլլամ ։

ՍԱՌԱ.

Ներէ ինձ , Ռօտօլֆ ։

ՌՕՏՕԼՖ.

Չկայ ներողութիւն քեզի համար, որ որդին հօրը դէմ զինաւորեցիր. . . չկայ ներողութիւն քեզի համար , որ փոխանակ Աստուածավախութեամբ մեր զաւակին վրայ հսկելու , որուն համար ամէն օր կ'արտասուեմ, թողուցիր զան երեսէ . . . չկայ ներողութիւն քեզի համար , որովհետև մեր աղջկան մահը մեր միացընող վերջին կապը կտրտեց ։

ՍԱՌԱ.

Ո՜հ , գթա ինծի . . . մեղք ըրէ . մեղք ըրէ ։

ՌՕՏՕԼՖ.

Անիծէ՛ լին . . . ուխտադրուժ ամուսին . . . թող տուր զիս ։

ՍԱՌԱ.

Ռօտօլֆ . . . ներէ ինծի ։

ՌՕՏՕԼՖ.

Մայր առանց աղեաց . . . անիծեա՛լ ըլլաս ։

Կը մեկնի ։

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՍԱՌԱ. Ետքը՝ ԹՕՄ ՍԷՅԹԸՆ.

ՍԱՌԱ.

Ո՛վ Աստուած , ա՞յս է ուրեմն եղբօրս ինձ յուսադրած փառասիրութեան արդիւնքը , որով սրտիս բոլոր զգացումները չէջցյ . . . Առանց էրկան , առանց զաւակի մնացի . . . առանձին ու յաւիտեա՛նս առանձին ։

Կը նստի լալ ։

ԹՕՄ ՍԷՅԹԸՆ. Ներս կը մտնէ և աջ կողմէն կը յառաջանայ ։

Վերջապէս դայ Պ. Ֆէրանի ինծի ըսած այն տանը թուահամարը , ուր ժամը իննին ժամադիր եղաւ ։

ՍԱՌԱ.

Աստուած իմ, ինչ ընեմ արդեօք , ինչ ընեմ ։

ԹՕՄ ՍԷՅԹԸՆ.

Ահա՛ փողոցը . . . և ահա՛ անկիւնը եղած տունը . . . բաւական դէշ երեւոյթ մը ունի . . . կ'երևի թէ փընտռած անձինքս իրենց վաանդաւոր պաշտօնէն շատ չեն վասակիր ։

ՍԱՌԱ.

Երթամ Ռօզկանց Վաճառանոցը կառքս գտնեմ ։ Կամաց կամաց վախը և ցուրտը վրաս կը տիրեն ։

Եւ տողնելու ժամանակը Թօմը կը դիտէ ու Էրիխ-ցուէն ձայն մը կը հանէ ։

ԹՕՄ ՍԷՅԹԸՆ.

Սառա , դո՞ւն ես ։

ՍԱՌԱ , ինքնիրեն կամաց հառաչանօք մը ։

Եղբայր իմ ։

ԹՈՄ ՍԻՑԹԸՆ.

Աս զգեստով հոս ինչ կընես։

ՍԱՌԱ.

Իշխանադունը տեսնել ուզեցի։

ԹՈՄ ՍԻՑԹԸՆ.

Իշխանադունը հոս ինչպէս կրնաս տեսնել։

ՍԱՌԱ.

Գիտէի որ ծպտեալ կուգայ...

ԹՈՄ.

Բայց ինչ կը տեսնեմ, աչքերդ բոլորովին արտասուօք են լեցուած։

ՍԱՌԱ.

Ալ յոյս չունիմ,

ԹՈՄ.

Ինչո՞ւ։

ՍԱՌԱ.

Ռոտոլֆ ըսաւ ինծ թէ մեր աղջըկան մահը զմեզ միացընող վերջին կապը կտրեց։

ԹՈՄ.

Ո՛չ. դեռ կրնաս յուսալ։

ՍԱՌԱ.

Ի՞նչպէս։

ԹՈՄ.

Մտիկ ըրէ։ Երբ Մաք Կրէկոր կոմսը քեզ հարսնութիւն և պատուոյ աստիճան տալ ուզեց, որ քու կացութիւնդ անյուսալի կընէր... կը վարանէիր, որովհետև իշխանադունէն աղջիկ զաւակ մը ունէիր, և այն իշխանադունին եղբայրը կրնար օր մը մեռնիլ։ Ամեն յոյս քեզի համար կորսուած չէր. այս յոյսը... պէտք էր բոլորովին ջնջել։ Արդէն դուն քու աղջիկէդ բաժնուած էիր, զոր ես գաղտուկ Վ՝արնէր անուն կնոջ մը յանձնած էի, առանց անոր ըսելու թէ աղջիկը որու զաւակ է, և ժամանակին զան ճանչնալու համար շղթայ մը և մետալ մը տալով անոր, որոնք իշխանադունին իրեն տուած վերջին պարգևներն էին։ Որ և իցէ կերպով կ՚ուզէի քու ամուսնութեանդ դէմ եղող արգելքները ջնջել. փարիզ եկայ... Աս աղջկան պահուստին համար երկու հարիւր հազար ֆրանգ առնող մարդը հաւանեցաւ, որ այս գումարին կէսը առնելով մահուան սուտ վկայական մը տայ ինծ. միւս կէսը աղջկանդ պահուեցաւ, որ ալ չպիտի երևէր, և որուն կեղծ մահը քեզ իմացուցի։

ՍԱՌԱ.

Ուրեմն դեռ կենդանի է աղջիկս. ո՞ւր է արդեօք։

ԹՈՄ.

Երբ դիպուածները նորէն իշխանադունին հետ ամուսնանալու քեզ յոյս տուին, զայն մեղսակիցս գտայ.

ՍԱՌԱ.

Ո՞վ է այդ մարդը։

ԹՈՄ.

Պ. Ֆէրան փաստաբանը, որ կը գտնուի Թամբլը փողոցը, թիւ—17։

ՍԱՌԱ.

Ի՞նչ տեղեկութիւն ունիս անորմէ։

ԹՈՄ.

Պ. Ֆէրանի տուած տեղեկութեանցը նայելով, հոս մօտերը պէտք ենք գտնել զան... բայց վաղը նոյն այս ժամուն իր տունը գնա ու ամեն բան կ՚իմանաս։

ՍԱՌԱ.

Աղջիկս պիտի գտնեմ...բայց իշխանազունը հետս պիտի ամուսնա-նայ ան ատենը...մ՛հ, ան թայը... ի՛նչ յոյս...

ԹՕՄ.

Շուտով աս փաղցէն հեռացիր, ուր մինակ մնալ պէտք եմ հիմա։

ՍԱՌԱ.

Վաղը առտու իշխանազունը պիտի իմանայ որ մեր աղջիկը գուցէ գտա կ'ապրի. և տ'Արվիլ տիկինն ալ իր կողմանէ պիտի վախնայ։

Իրենց հեռանալու ատեն՝ Փլեօր տը Մա-րին ուշադրութեամբ մը Հերնանդէզի դռա-ներուն մէջէն դուրս ելլելը կը դիտէ։

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՓԼԵՕՐ ՏԸ ՄԱՐԻ, յուսահատու-թեամբ դահլիճէն դուրս ելլելով։

Ո՛հ, ալ չեմ կրնար դիմանալ, ալ համբերութիւնս հատաւ... Ես կնկան բնութիւնը ալ չափը անցաւ ...ո՛վ Աստուած, եթէ ներէին ինծ եկեղեցի մը մտնել, կոյսերուն և սուրբերուն պատկերաց առջևը ծըն-կան վրայ անոնց խորհուրդ կը հար-ցընէի....բայց ես իմ սուրբս ու-նիմ...ան կնկան պատկերը որ գը-տայ, անպատկերը որ այնչափ գեղեցիկ և քաղցր աչքեր ունի և սիրելի նայ-ուածք...(Զայն փիլելով։) Այնպէս չէ՞, իմ բարի պաշտպանս, որ ես յանցաւոր չեմ, եթէ անոնց նախա-տանաց և հարուածներուն չեմ տա-նիր և թէ այս կեանքէս նախապատիւ կը համարիմ փախչիլը...թշուառու-թիւնը...գուցէ և անօթութիւնը։ Ուրեմն պաշտպանէ զիս, ո՛վ իմ պաշտպանս, քան զի չեմ ուզեր իմ միակ բարեկամուհի բարի Բիկօլէթիս վրայ ան հրէշներուն բարկութիւնը գրգռել, ո՛չ...որչափ հեռու կըր-նամ պիտի երթամ, պիտի աղաչեմ որ գթան ինծ, ու պիտի խնդրեմ՝ առանց ծեծ ուտելու ինծ գործ մը տան։ Տխրալի՜ թաղ, ո՛ւր ես այնքան թշուառութեամբ անցուցի և ուր տեղ ամենևին ուրախութեան և յուսոյ վայրկեան մը անգամ չունեցայ, մը-նաս բարեաւ...մնաս բարեաւ... Աւելի կ'ուզեմ մեռնիլ քանթէ գէթ նորէն տեսնել...(Դէպ 'ի Փիէլ ծո-ցը կը յառաջանայ և ետ կը դառնայ ը-նելով.) Մէթրը տ'Իզօլն է։ (Ձախ կողմը ուրախութեան ձայներ կը լսուին։) Աս մարդիկը ինծ վախ կը պատճա-ռեն։ (Դէպ 'ի դուռը կ'ուղղէ և կը կենայ։) Ո՛չ, ո՛չ, ներս չպիտի մըտ-նեմ... Աւելի կ'ուզեմ այս անցքին մէջ սպասել, ուր մարդ մը չկայ։

Թօմ Սէյմըրին ճանչցած երեսը ունեցող դռա-նը կը մտնէ։



## ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ, ետքը ՓԷՐԱՆ,
Պալէ-Րուայի պարտէզը.

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ, իր երեսները դառն
ու գլխիկոր քալելով։

Նօթր-Տամի ղանկատունը ժամը ութ ու կէս զարկաւ. ինծի անանկ կ'երևի որ Պարպ-Րուժ (կարմիր մօրուք) մարդը շատ ուշացաւ... ինչ մարդ է աս կարմիր մօրուօք մարդը. ուրկէ կու գայ, և ո՞ւր կերթայ, մարդ չգիտեր... և ինձմէ նորէն ինչ կուզէ արդեօք... ո՛հ, չեմ համարձակիր ետև նայելու, և ապաւինին սպառնալեացը դէմ՝ աս դաշոյնէն ուրիշ զէնք մը չունիմ, որուն ծայրը թունաւորեալ է... Անգամ մը միայն դպչի, ալ մահուան ճանկին ձեռքէն ազատելու ամենևին յոյս չկայ.... Միայն սովորութեանց և կրից բըռնութեամբը ինքզինքս կը պաշտպանեմ. բարկութիւնը երբեմն աննուաճելի է... Հանդարտաբարոյութենէ կը դողամ.... որովհետև ինքզինքս կը գտնեմ։

ՓԷՐԱՆ. Բաժանման ներսի կողմէն մտնելով դէպ ի անոր կը յառաջանայ. և անոր ուսը կը բռնէ. երբ ան խորին մտածմունքեանց մէջ ընկղմեր էր։

Ո՛հ, գո՛ւն ես։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Այո՛, ինչպէս որ կը տեսնես... ճիշդ ժամանակին։

ՓԷՐԱՆ.

Շատ աղէկ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Գո՞հ ես։

ՓԷՐԱՆ.

Գրեթէ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Կը տարակուսիս իմ վրաս։

ՓԷՐԱՆ.

Ո՛չ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Ո՞վ է քեզ նեղութիւն տուողը, արդեօք Շուէթն է։

ՓԷՐԱՆ.

Ո՛չ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Ո՞վ է ուրեմն։

ՓԷՐԱՆ.

Տունդ եղող պզտիկ աղջիկը։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Ֆլէօր տը Մարի՞ն։

ՓԷՐԱՆ.

Այո՛։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Ճշմարիտ... բան մը չգիտեր։

ՓԷՐԱՆ.

Ո՛վ կըսէ թէ մինչև վերջը այդպէս պիտի ըլլայ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Բայց վռնտել ալ չենք կրնար...

ՓԷՐԱՆ.

Ինչու անոր համար տեղ մը չես գտներ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Ըսելը դիւրին է։

ՓԷՐԱՆ.

Ես տեղ մը գտնիմ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Իրաւ (առանձին.) Աս սատանայ մարդը ամեն բանի կը մտածէ։

ՖԻՐԱՆ.

Օ՜ն Պ. Ֆէրանի տունը տար… որ փաստաբան մ'է և թիւմբիւ փողոցը, թիւ 17 կը նստի, խօսք կու տամ…

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Շատ աղէկ, թող անանկ ըլլայ, վաղը կ'երթամ կը գտնեմ աս պարոն Ֆէրանը :

ՖԻՐԱՆ.

Խիստ աղէկ :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Կը ճանչնամ զան :

ՖԻՐԱՆ.

Այո՛, ժանտաբարոյ ու խիստ մէկն է… անոր համար ամէն մարդ աղէկ կը խօսի :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Զարմանք է :

ՖԻՐԱՆ.

Գուցէ :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Երդւօք Ֆլէօր տը Մարին անոր քով գտնելով մեծ շահ մը կը սպասէ անորմէ :

ՖԻՐԱՆ.

Ո՛վ որ կենդանի մնայ՝ պիտի տեսնէ :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Ի՞նչ է ուզածդ ուրեմն. դուն որ ամենևին մտքդ չես յայտներ :

ՖԻՐԱՆ՝ անոր ունկներ տալով.

Համրէ :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Երկու հարիւր ֆրանգ :

ՖԻՐԱՆ.

Յաջողելէ ետև նոյնչափ մը ևս պիտի ընդունիս :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Չորս հարիւր ֆրանգ, ինչ է ուրեմն կամքդ :

ՖԻՐԱՆ.

Մարդ մը :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Թշնամի՞ ունիս :

ՖԻՐԱՆ.

Ո՛չ, բայց զիս կը նեղէ :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ, ձայնով :

Ո՞վ կը նեղէ քեզ. (բարձրաձայն) բայց ո՞ւր պիտի հանդիպիմ այդ մարդուն :

ՖԻՐԱՆ՝ դուռն բանալով :

Ինքը պիտի գայ :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Ե՞րբ :

ՖԻՐԱՆ.

Աս գիշեր :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Հիմա :

ՖԻՐԱՆ.

Ժամը իննին :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Ո՞ւր :

ՖԻՐԱՆ՝ Լալէն Պլանի դիմացն եղած վառը ցուցնելով :

Հո՛ն :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Այն մութ և օձաձև անցքին մէջ.

ՖԻՐԱՆ.

Դուն անորմէ առաջ հոն պիտի սպասես :

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Ե՞ս :

ՖԻՐԱՆ.

Ալ դուրս չպիտի ելլէ անկէ :

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

*Թէ որ մարդասպանը փնտռեն։*

ՖԻՐԱՆ.

*Ո՛չ, պիտի կարծեն թէ այն մարդը ինքզինքը մեռցուց։*

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

*Ի՞նչպէս պիտի կարծեն։*

ՖԻՐԱՆ.

*Եթէ իր կողմանէ նամակ մը գըրուի, ու աս գիշեր նամակատունը դրուի, վաղը բոլոր կասկածները կը փարատուին։*

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

*Ուրեմն առաջ ինքը պիտի գրէ, կամ մէկը իրեն համար...*

ՖԻՐԱՆ.

*Ադ իմ գործս է։*

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

*Ե՞րբ գեղը նորէն պիտի տեսնեմ։*

ՖԻՐԱՆ.

*Ժամը ինը հինգ րոպէ անցած։*

Ֆիրան ներքին խուցէն կը մեկնի։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ, առանձին։

*Աս մարդուն նայուածքը, անոր կարճ և դանակի պէս կտրուկ ձայնը... վրաս կ'իշխէ։ Այս մեղքը... մինակ... ես պիտի համարձակիմ 'ի գործ դնել արդեօք (Շուրինէօրի ձայնը կը լսուի) եթէ կարենայի մէկու մը առաջարկել։ Շուրինէօրը ինծի հետ աղէկ չէ... բայց դատապարտեալ է... աշխատինք անոր բարկութիւնը իջեցնելու։*

## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ, ՇՈՒՐԻՆԷՕՐ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

*Ո՛հ, հո՞ս ես։ (Զայն բռնելով.) ո՞ւր է նաւակս, ո՞ւր տարիր զայն։*

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

*Ես ի՞նչ պիտի ընեմ քու նաւակդ։*

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

*Շանժ կամուրջին լուացարարաց նաւերուն կապած էի, քու զայն առնելդ տեսեր են... և շատ ստոյգ եմ որ դուն անով գետեզերքի բերդին մէջ գողութիւն ընելու գացիր։*

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

*Չեմ գիտեր ի՞նչ ըսել կ'ուզես։*

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

*Չես գիտեր նաև թէ ո՛վ էր ան որ դէպ 'ի գետը քարշել կ'ուզէր ձիաւոր մը որ իր ձիէն վար նետած էին։*

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

*Ամենևին չեմ գիտեր։*

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

*Շատ աղէկ, բայց գիտցած ըլլաս որ այդ բանը գիտնալու համար մէկը ետևէ ինկած է... սակայն իմ նաւակս ի՞նչ ըրիր։*

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

*Ի՛հ, մեծ վնաս մը չէ ըրածդ... որովհետև աւազ հանելով... կոճղներ հաւքելով... բոլոր օրը մարմնոյդ կէսը ջուրին մէջ կ'անցընէիր։*

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

*Արհեստս խիստ է... բայց համեստ... անով հացս կը հանեմ... ասկէ աւելի բան չեմ ուզեր...*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Բայց քու շահուդ համար ես քեզ- մէ աւելի կ'աշխատիմ . . . քեզ աղէկ գործ մը պիտի առաջարկեմ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Դո՞ւն պիտի առաջարկես ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Քառասուն ֆրանգ պիտի շահեցը- նեմ քեզ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ո՞րքան ժամանակուան մէջ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Մէկ քառորդի մէջ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ցորեկ ատեն, ամէն մարդո՞ւ առ- ջև ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ո՛չ, բնաւ մէկը չպիտի գիտնայ.. բայց քան ես կ'աւելցընեմ, վաթ- սուն կու տամ . . .

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Շնորհակալ եմ, այդ հացէն չեմ ուտեր ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Բայց . . . ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Քեզ ըսի որ այդ հացէն չեմ ու- տեր, վասն զի գոյնը կարմիր է . . .

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Աւելի կը սիրես արհեստդ, այն- պէս չէ՞ ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Անշուշտ կ'ընտրեմ արհեստս քան թէ չարագործութիւն մը ընելու . . . բայց երբեմն բարեկամացս չարու- թիւն ընել ուզողները մինչև 'ի մահ կը հալածեմ, որովհետև երբ ասոնք զիրենք պաշտպանելու համար աղէկ շատ մը հարկաւորութիւն ունենան՝ առ իս կը դիմեն . . . դուն ալ աղէկ գիտես որ բազուկներ ունիմ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Բայց մտիկ ըրէ ինձ ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Բաւական է, զարշելի, բաւական է, եթէ ուրիշ անգամ այդպիսի խօսք մը անգամ խօսելու համարձա- կիս, գլուխդ կը ջախջախեմ . . . . կորսուէ՛ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Աղէկ, թո՛ղ ուզածիդ պէս ըլլայ։ (Երբ Շուրինէօր իր բարկութեանը մէջ անշարժ կը կենայ, Մէթրը տ'Էքօլ դան- դաղ մօտեցած կերթայ։ Փլէօր տը Մարի ծառայողուցէն դուռը կեցեր, բայց Մէթ- րը տ'Էքօլը տեսնելով, խոհայն ներս կը մտնէ։— Ինքնիրեն.) Շուէթին եր- թամ մէկ քանի օղի խմեմ, ու ես մինակս փորձեմ։

Իր դուռը կը մտնէ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. մինակ և բարկութեամբ։

Եթէ ինծի սուտ խաբեցիր և իմ նաւակս գողցար, կանուխ կամ ուշ վրէժս պիտի առնում քեզմէ ։

## ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՌՕՏՕԼՖ, Ներքին կողմէն գալով, ՇՈՒՐԻՆԷՕՐ։

ՌՕՏՕԼՖ.

Ի՞նչ ունիս, Շուրինէօր, երեսդ չինդար և կ'երևի թէ բարկացած ես։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Այո՛, բարկացած եմ, և եթէ մէկը չգտնեմ՝ ինքզինքիս հետ պիտի կը-ռուիմ։

ՌՕՏՕԼՓ.

Ուրեմն դեռ ժամանակ քովդ եկայ, ըստ որում քեզմէ ծառայութիւն մը պիտի խնդրէի։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Աւելի աղէկ... ադ բանը զիս պի-տի հանդարտեցընէ, ինչ ծառայու-թիւն կրնամ ընել քեզ։

ՌՕՏՕԼՓ.

Անցեալ գիշեր Մէն գետին եզեր-քը, տ'Արվիյլ բերդին մօտ, վը-րաս յարձակող աւազակներէն ազա-տելու համար օգնեցիր ինծի։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Դո՛ւն էիր թէ ուրիշը՝ չեմ գիտեր, ժամանակը գիշեր էր... քիչ մը փայտ կտրեր քաղաքը կ'իջնայի, երբ մութ ժամանակ տեսայ որ երեք հոգի մէյն մէկ հոգւոյ դէմ կը կռուէին, դուն կարծեցիր թէ ես զքեզ ծեծել կուզէի, և կարկուտի պէս բուռի հարուածներ իջեցուցիր ինծի.... բայց վերջը բանը իմացուեցաւ։

ՌՕՏՕԼՓ.

Խեղճ բարեկամ, ատուցիւ շատ ցաւեցայ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ես բնաւ չցաւեցայ, այն հարուած-ները Մէթրը տ'Էքօլին տալու հա-մար պիտի պահեմ։

ՌՕՏՕԼՓ.

Հիմա ըսէ ինծի, ես կը կարծեմ թէ նոյն իմ վրաս յարձակողներն են տ'Արվիյլի բերդը կողոպտողները։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. Խնդալէն։

Մէթրը տ'Էքօլ և իր ընկերնե-րը (Քարճը) Շատ հաւանական է։

ՌՕՏՕԼՓ.

Թէ որ զանոնք կը ճանչնաս.... հարցուր թէ ադամանդներով զար-դարուած կնոջ մը պատկերը ինչ ը-րին... բոլոր հաճութեամբ դոհար-ները իրենց կը տրուի, միայն թէ պատկերը ետ դարձընեն։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. Բարկութեամբ։

Բայց ինչպէս, կը կարծես թէ գո-ղերը իրենց գործերը ինծի կը հաս-կցընեն։ Զիս գուցէ անոնց ընկեր կը կարծես... բայց, իրօք, դուն իրաւունք ունիս... ես անոնց հետ ծանօթութիւն ունիմ... շատ անգամ անոնց հետ միատեղ եմ.... նմանը իր ընկերը կը գտնէ։ Այնպէս չէ։

ՌՕՏՕԼՓ.

Բայց ինչո՞ւ անոնց հետ կը տես-նուիս։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ինչու որ ուրիշ տեղ չեմ կրնար ապրիլ։

ՌՕՏՕԼՓ.

Ի՞նչ է քու արհեստդ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Մէն փոքր նաւամատոյցը աւազ հանող և փայտահար եմ. ձմեռը սա-ռելով ու ամառը տապկուելով՝ օրը տասնուհինգ ժամ ջրին մէջ կենա-լով կ'ապրիմ... Ահա իմ արհեստս։

ՌՕՏՕԼՓ.

Ընտանիք ունիս։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Փարիզի փողոցի վրայ գտնուած որբ մ'եմ։

ՌՕՏՕԼՖ.

Ո՞վ ուրեմն քեզ մեծցուց։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Կորսուած շուները սնուցանողը... կը յիշեմ խիստ փոքր եղած ատենս գաճի փուռերու մէջ կը պառկէի, և երբ անօթութենէ ոտքերս չէին կրնար քալել... Լուվրի մեծ քարերուն տակ կը պառկէի, և ձմեռ ձիւնէ սպիտակ սաւան կունենայի վրաս։

ՌՕՏՕԼՖ.

Անօթեցար ու գողութիւն չըրի՞ր։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Երբեք, թէև անգամ մը երկու օրի չափ առանց ուտելու կեցայ, ու համբերեցի։

ՌՕՏՕԼՖ.

Երբ մեծցար, ի՞նչ ըրիր։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Զինուոր գրուեցայ։

ՌՕՏՕԼՖ.

Ո՞րքան ատեն ծառայեցիր։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Երեք տարի... կը յուսայի որ զիս Ալճէրիա տանին, բայց դժբաղդութիւն մը պատահելով չկրցայ փափագիս հասնիլ... վայրի անասունի պէս փողոցները մեծցած ըլլալուս... վայրի անասնոյ մը կատաղութիւնը ունէի։ Օր մը տասնապետս զիս յանդիմանեց... ես ալ անոր պատասխանը տուի... Զիս հրեց... ու ծեծեց... գլուխս կրակ դարձաւ, կատղեցայ և ուր զարնելս չգիտնալով, տասնապետը և երկու զինուոր վիրաւորեցի... երեք ամիս ետքը տասներկու գնտակով զարնուելու դատապարտուեցայ։

ՌՕՏՕԼՖ.

Քեզ մահուա՞ն դատապարտեցին։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Կը յուսայի... ըստ որում արիւնթափը, որքան ձեռքերը լուայ՝ միշտ կարմիր են անոնք... բայց իմ պատիժս նուազեցուցին, որովհետև անգամ մը հրդեհի մը մէջ պառաւ կին մը ազատած էի, և ուրիշ անգամ մը գետին մէջէն աղջիկ մը ազատեցի որ խեղդուելու վրայ էր։ Կը տեսնես որ երկակենցաղ եմ. թէ հուրի և թէ ջուրի մէջ կ'ապրիմ։

ՌՕՏՕԼՖ

Ի՞նչ պատիժ կրեցիր։

ՇՈՒՐԻՆԷՕՐ [illegible]

Իբրև զինուոր պէտք էր հրացանի բռնուիլ... բայց հինգ տարուան համար արքունական թիին ծառայելու դատապարտուեցայ. երբ աս իմացայ՝ բանտիս մէջ ինքզինքս խեղդել ուզեցի, բայց ժամանակին վրաս հասնելով զիս ազատեցին։

ՌՕՏՕԼՖ.

Բանտէն ազատելէդ ետև առաջուան պէս գողութիւնը կ'ատէի՞ր։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Միշտ աղէկ ըլլալուս համար նաւամատոյցները կը ծառայեմ ու առանց մէկու մը վնաս տալու ապրուստս կը հանեմ։

ՌՕՏՕԼՖ.

Շատ աղէկ, սիրելիս, դուն տակաւին սիրտ և պատիւ ունիս։

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Ի՞նչ սիրտ և պատիւ . . . զարմանա-լի բան է այս, Պ. Ռօտօլֆ, աս առաջին անգամն է որ այս օրինակ խօսք մը կը լսեմ. որուն համար խիստ գոհ եմ, ու աս խօսքս զիս կը քաջալերէ: (Աչքն կը շփէ ու մտա-ծելով կ'ըսէ.) սիրտ և պատիւ . . .

ՌՕՏՕԼՖ.

Աս բանս կը զարմացընէ զքեզ:

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Այո՛ և ո՛չ: Կը զգամ որ ինձմէ աւելի զօրաւոր եղողներուն հետ մի-այն չար եմ, բայց տկարներուն հետ բարի և միամիտ եմ: Ահա քեզ օ-րինակ մը. հոս Ֆլէօր տը Մարի անուամբ խեղճ աղջիկ մը կայ, գուցէ չհաւատաք, բայց ան՝ քաղցր, խելօք, պարկեշտ ու տասնուվեց տարեկան հրեշտակային դէմքով աղջիկ մ'է. բայց սակայն Մէթրը տ'Էքօլ անուն անձոռնի մէկու մը և անոր Չուէթ անուամբ կնոջը խաղալիկը եղած է, որոնք անոր մանկութեանը ժամանակ փողոցի մը մէջ գտնելով, իրենց տունը տարին:

ՌՕՏՕԼՖ.

Խե՛ղճ զաւակ, և ո՞վ է զան պաշտ-պանողը աս հրէշներուն դէմ:

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Ես՝ երբ հոս եմ, բայց միշտ չեմ կրնար գտնուիլ, ան ատեն այո կամ ո՛չ մը ըսելուն համար զան մեռցը-նելու չափ կը ծեծեն:

ՌՕՏՕԼՖ.

Քու պաշտպանածդ ուշադրութիւնս կը գրաւէ. ո՞ւր է, զան տեսնել կ'ուզեմ:

ՇՈՒՐԻՆԵՕՐ. ձայնը կը ցածցընելով.

Գուցէ հոն է:

ՌՕՏՕԼՖ.

Աս պանդոկին մէջ:

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Խեղճը պարտաւորեալ է Մէթրը տ'Էքօլի և Չուէթի բնակած տե-ղերը բնակելու:

ՌՕՏՕԼՖ.

Դժբա՛խտ աղջիկ:

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Դուն ալ դէմ պիտի կենա՞ս որ անոր չարութիւն ընեն:

ՌՕՏՕԼՖ.

Կարելի է:

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Հապա աղէկ, Մէթրը տ'Էքօլը հիմա հոն մտաւ կարծեմ. թէ որ չես վախնար՝ եկուր:

ՌՕՏՕԼՖ.

Ես չեմ վախնար, հանդարտ եղիր:

Պանդոկը կը մտնեն:

## ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ՔԷՐԱՆ, յանկարծ ներս կը մտնէ, և քիչ 'ի նոր շինուած տունը կը յառաջանայ.

Ամէն բան յաջող է: Փոթորկալից օդը ամէն մարդիկը կը ցրուէ . . . ինծի դէմ միայն մէկ վկայ և մէկ ապացոյց մնաց: Վկայն որ սպա-նացաւ, հիմա պիտի կորսուի. ապա-

ցոյցը Վարնէրի կնոջ շղթան և մի-տալն է․ այս կինը որ հիմա յիմա-րացած է ու իր գոհարագործ Մո-րէլ փեսային տունը կը բնակի ․ ․ ․ այսինքն իմ տանս մէջը կը բնակի․ միթէ այնչափ դժուար է զանոնք թշուառութեան հասցընելով, այն անգին տարկան ձեռք ձգելը․ ․ ․ ․ այն շղթան պէտք է որ ձեռք ձգեմ։ (Մենակներուն ետին պահուելով․) Աս տեղէն ամէն բան կրնամ գիտել։

## ՏԵՍԱՐԱՆ ԺԳ․

ՓԷՐԱՆ, պահուած․ ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ․ Ետքը՝ ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ․ ՌՕՏՕԼՖ․ և ՇՈՒՐԻՆԷՕՐ․

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, առանձ․

Իրաւունք ունէի երբ կ'ըսէի թէ օղին ու Շուէթ գլուխս կը դարձը-նեն, ու ամէն վախկոտութիւնս կը փարատեն․ ․ ․ Բայց աս խեղճ պըզ-տիկը, որ փախչիլ կ'ուզէ և կը հա-մարձակի գրել․ "Ես հոս խիստ դժբաղդ եմ, ալ զիս ընաւ չպիտի տեսնէք"։ Մեզմէ զատուիս, ո՛հ, գարշելի, քեզ ձեռք պիտի ձգեմ, ու քեզ սուղի պիտի նստի․ վաղը անշուշտ քեզ պիտի գտնեմ, և վա՜յ քեզ։ Աս նոր բարկութիւնը գլխս ա-ւելի կը գրգռէ, ալ չեմ կենար։ (Դէպ 'ի Մարիին պահուած անդքը կը մտնէ․ ձայն մը կը լսուի․ Մէթրը տ' Էգօլ դռնէն դուրս կ'ելլէ՝ Փլէօր տը Մարին յետեւէն քաշելով․) Թշուառա-կան, պիտի փախչէիր, այնպէս չէ՞։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ․

Այո՛, փախչիլ ուզեցի՝

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ․

Յարմար առեն չգտար․

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ․

Աւելի կ'ուզեմ յանկարծ մեռնիլ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ խոժոռելով․

Բարկութիւնս մի՛ գրգռեր։

Շուրինէօր և Ռօտօլֆ պանդոկէն դուրս կ'ելլեն։ Շուրինէօր Մէթրը տ'Էգօլին յետեւէն կը բռնէ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ․

Հանդարտ կեցիր, ես չեմ ուզեր որ այս աղջկան դպչիս․ ․ ․ ․

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ․

Քեզի ինչ։

ՌՕՏՕԼՖ․

Մենք կ'ուզենք որ այդ աղջիկը պատուես։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ․

Ո՛հ, շնորհակալ եմ, պարոն։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ․

Է՛հ, շատ աղէկ ուրեմն, թո՛ղ ներս մտնէ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ, կամաց մը Ռօտօլֆին, որ ուշա-դրութեամբ Փլէօր տը Մարին կը դիտէ․

Ան է։ (Մէթրը տ'Էգօլին) Ներս կը մտցընես որ ուզածիդ պէս չա-րութեամբ վարուիս հետը։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ․

Ես Սէնթ-Անթուան գիւղը պիտի երթամ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ․

Ինչու ամէն գիշերուան պէս խաղ չպիտի կանչէ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Օ՛հ չեմ կրնար, աւելի կ'ուզեմ լալ:

ՌՕՏՕԼՖ.

Խեղճ աղջիկ, ընդունէ այս խըրև. երգած խաղիդ փոխարէն :

Ռօտօլֆ անոր ոսկի մը կուտայ: — Կ'որսայ մէկուն ձեռքէն:

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Փոթորիկը սկսաւ, պէտք է որ երթամ գործս տեսնեմ: (Ֆլէօր տը Մարիին) Դուն ներս մտիր: (Շուրինէօրին) Հանդարտ եղիր, բարեկամ:

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Սխալեցաք, պարոն, տուածնիդ ոսկի է:

ՌՕՏՕԼՖ. ԻՆՔՆԻՐԷՆ.

Ո՛հ, ինչ առաքինութիւն....

ՇՕՒՐԻՆԷՕՐ.

Ըլ մի վախնար, պզտիկ Ֆլէօր տը Մարիս:

ՌՕՏՕԼՖ. Ֆլէօր տը Մարիին:

Ո՛չ, ամենեւին չվախնաս, ըստ որում հիմա երկուքս ալ քու պաշտպանդ եմք:

Ֆլէօր տը Մարի ներս կը մտնէ: Ռօտօլֆ եւ Շուրինէօր կը հեռանան. անձրեւը կը տեղայ, եւ ժամացոյցի մը զարնուելուն ձայնը կը լսուի:

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ժամը մէկն կը զարնէ :

Բոլորտած անցքը կը մտնէ: Վերարկուով փաթթուած մարդ մը մութին մէջ կը յառաջանայ. տունը կը գտնէ, ու ծանծաղուն դիմաց՝ դուռը կը զարնէ. Մէթրը տ'էքօլ կը բանայ. ու պան իր առջեւէն ներս կը մըտնէ. Փերան իր պահուած տեղէն դուրս կ'ելլէ. ու ինք մը ալ անոր նոյն տանը մէջ անցածները մտիկ ընելէն ետեւ՝ նամակատուութիւն մէջ նամակ մը կը դնէ:



# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

## ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ. — ԲԻԲԼԷԻ ՏՈՒՆԸ։

Թատրոնը Թամփլը Փողոցին Թիւ 17 տանը բակը կը ներկայացընէ։ Ներքին կողմը եռայարկ եւ պատշգամբով շէնք մը կը տեսնուի։ Դիմացը գետնայարկին վրայ ծառափողոց մը կայ, ուսկից փողոցը կը տեսնուի։ Ծառափողոցին աջ կողմը բակին վրայ, Բիբլէի սենեկին պատուհանը. ծառափողոցին մէջ տեղը, սենեկին ետին, սանդուղք մը կայ, ուսկից վերին դստիկոնը կ'ելլուի։ Սենեկին աջ կողմը բակին մէջ՝ միադուռ պահանոց մը։ Ծառափողոցին ձախ կողմը ոգելից ըմպելիք ծախողի մը խանութին ետեւի սենեակը։ Երկրորդ յարկը պատուհանին մէջ. Թռչուններով վանդակ մը։ Թատրոնին ձախ կողմը, առանձնական փոքր շէնք մը, ուր Ֆէքան կը բնակի։ Գետնայարկին վրայ միափեղկ դուռ մը կայ։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ, ԼԷԹԻԷՐ, ետքը ՄՈՐԷԼ ու ՆԱՄԱԿԱԲԵՐ ՄԸ։

*Տիկին Բիբլէն բակը աւելը կը վերցընէ, Լէթիէր դրան կոճի ամանները կը բերէ, ձանձրոյթ պզտիկ պահանոցին վրայ կը դնելով, ու բոլոր տեսարանին ժամանակը ծոցը կը դնէ։*

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ըհա օրական աշխատութիւնդ լըմընցաւ, Լէթիէր։

ԼԷԹԻԷՐ. *առանց կենալու.*

Կարծեմ քիչ աշխատութիւն չէ, առաւուան ժամը երկուքէն 'ի վեր Անիէրէն մինչեւ հոս ճամբայ ընելը։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Աղէկ, բայց խմս դեռ չըմնցայի. քանի որ Պ. Ֆէրան իր ծառան ճամբեց, իր տանը հոգը իմ վրաս մընաց.... բարեբաղդաբար Թօրթիլեարը քովը առաւ որ հարկաւոր եղածը ծախու առնէ։

ԼԷԹԻԷՐ.

Աս վարշելին ամեն տեղ կը գըտնուի ուրեմն... երէկ Էքլանս հետ կոխ ընող բոլոր սրիկաները փախցուց. բայց անոնցմէ մէկը ուր որ պատահիմ, այնչափ պիտի պոռամ՝ մինչեւ որ բանտ դնեն ու պատժնին տան։

*դուրս կ'ելլէ։*

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Շատ աղէկ կընես, Լէթիէր։ (*Մորէլին, որ իջնելով բակը կը մտնէ։*) Այսպէս շուտ դուրս պիտի ելլես, Պ. Մորէլ, ինչպէս են ձեր տանինները։

ՄՈՐԷԼ. (ուրախութեամբ).

Կինս աւելի աղէկ է, փառք Աստուծոյ, բժիշկը կ'ապահովցընէ թէ գիւղին օդը շատ մը զինքը պիտի աղէկցընէ... երթամ քիչ մը պտըտիմ ու ետքը Ֆօնթէն օ Րուա փողոցը Լըֆէպրը հօր պիտի երթամ և հարցընեմ թէ իր Պէլվիլ ունեցած երկու պզտիկ սենեակները մեզ վարձու կրնայ տալ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Գնա՛ ուրեմն, մէկ տուն՝ քաղաքը և մէկ տուն՝ գիւղը. կը տեսնեմ որ բաւական հարստութիւն ունիս....

ՄՈՐԷԼ.

Այո՛, բոլորովին երջանիկ պիտի ըլլայինք, եթէ կնոջս մայրը...

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Խեղճ պառաւ պառաւինկը... ո՛հ, այո՛, ան ձեզ մեծ նեղութիւն կուտայ։

ՄՈՐԷԼ.

Բայց հոգ չէ, կնոջս մայրն է, ու եթէ մենք հոգ չի տանինք ու գութ չունենանք, ո՛վ պիտի խնամէ զինքը։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Արդարև, Պ. Մորէլ, բարի մարդոց ընտրելագոյնն ես, ինչպէս որ իմ ծեր սիրական Ալֆրէտս դռնապաններուն ընտրելագոյնն է։

ՄՈՐԷԼ.

Դուն ալ դռնապանուհիներուն ընտրելագոյնն ես, տիկին Բիբլէ... մնաս բարեաւ, նորէն տեսնուինք։

(Ծառաներուն դուռէն կ'ելլէ։)

ՆԱՄԱԿԱԲԵՐԸ.

Տիկին Բիբլէ, երեք սու տուէք, պարոն Ֆէրանի համար նամակ մը ունիմ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ, (կարդալով)։

Ահաւասիկ երեք պատուական սու քեզի. (վրայի ըմպելու դրամով.) առտուան առաջին անգամ ցրուած նամակներէն... կ'երևի թէ երէկ գիշեր ձգուեր է նամականեղին։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅՆՆԵՐԸ. ԺԷՐՄԷՆ, (գլուխը բաց ու ձեռքին տոպրակ մը ունենալով)։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Բարիլոյս, Պ. Ժէրմէն, ահա քեզ նամակ մը՝ տիրոջդ Պ. Ֆէրանին ուղղուած, որուն համար երեք սու վճարեցի։

ԺԷՐՄԷՆ. (երեք սու կուտայ և նամակը առնելով)։

Շնորհակալ եմ, տիկին Բիբլէ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Երէկ գիշեր թատրոնը աղէկ զբօսեցա՞ր։

ԺԷՐՄԷՆ.

Խիստ գոհ եղայ. բայց ահաւասիկ դրան բանալիքը որ քեզ կը վերադարձընեմ։ Հիմա ըսէ ինծի, կ'երևի թէ ամենուն հետ այնչափ խիստ չես վարուիր, որչափ ինծի հետ։ Միշտ աս խօսքը կը կրկնես. "Բնաւ մէկը կէս գիշերը անցած տունէն դուրս պիտի չմնայ... կէս գիշեր անցածին պէս ա՛լ բնաւ մէկու մը դուռ չի բացուիր"։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Միշտ կանոնաւոր տուները այսպէս են։

ԺԵՐՄԷՆ.

Շատ աղէկ, երէկ գիշեր բնաւ հարկ չկար դրան բալլիքը տալու որ թատրոն երթամ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Ինչո՞ւ համար։

ԺԵՐՄԷՆ.

Ինչու որ իմ տունը դալէս ետև, դուռը ուրիշի մ'ալ բացիր։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Զարմանալի՛ բան, վերջի եկողը Պ. Ֆէրանն էր, որ տասին քառորդ մնացած եկաւ, վասն զի դէշ օդ ըլլալուն համար, իր լոյնազգեստին մէջ ամփոփուած էր, և ես իր ձայնէն ու կանաչ ակնոցէն ճանչցայ զան։

ԺԵՐՄԷՆ.

Ինչպէ՞ս, կէս գիշերին առենները բնաւ մէկու մը դուռ չի բացի՞ր։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Ինչո՞ւ կը հարցընես։

ԺԵՐՄԷՆ.

Ինչու որ տունը մտնելու ժամանակս, սանդուղքին վրայ մէկու մը պատահեցայ որ վար կ՚իջնէր։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Անշուշտ տան մէջ եղողներէն մէկը։

ԺԵՐՄԷՆ.

Ո՛չ, չճանչցայ ո՛վ ըլլալը։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Ուրեմն երազ տեսեր ես։

ԺԵՐՄԷՆ.

Տեսածս երազ չէր, այլ կանթեղիս լուսովը տեսայ որ կարմիր մեծ մօրուք մը ունէր, թէև անոր երեսը աղէկ մը չկրցայ դիտել։ Անշուշտ դուռը դուն բացած ես։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Բնաւ։ Աւելի հաւանական է որ դուռը աղէկ գոցած չըլլաս դուն։

ԺԵՐՄԷՆ.

Հաւատա՛ որ աղէկ գոցեցի։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Ո՛հ, ինչպէս տխմար եմ, դայեակ ծերուկս, սիրելիս բացած ըլլայ, ու զիս չէ ուզած արթնցընել։

ԺԵՐՄԷՆ.

Տեսա՞ր հիմա.... Ճշմարիտ անհանգստութեան մէջ էի.... հիմա դրատունը կերթամ.... քիչ մը ուշ մնացի այսօր, ու Պ. Ֆէրանը անշուշտ ինձ կը սպասէ։

Ժերմէն Պ. Ֆէրանի բնակարանը կը մտնէ։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ. ՌՈՍՈԼՖ վերջին խօսքերուն վրայ հոն հասնելով ու տունը քննելով։

ՌՈՍՈԼՖ. Ինքնիրեն։

Հոս ըլլալ պէտք է։ Ո՞վ է արդեօք այս Պ. Ֆէրանը, որուն տունը Սառա կոմսուհին այս գիշեր ինձ ժամադիր կըլլայ... Արդեօք դարան մ'է... ափսո՛ս, պարապ յուսով զիս հոս կը բերէ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ, դէպ'ի անոր դառնալով.

Պարո՛ն, ո՞ւր կերթաք։

ՌՈՏՈԼՓ.

Տիկին.....

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Պարոն, որո՞ւ սենեակը կը փընտռէք, այդպէս տան մէջ չեն մնար։

ՌՈՏՈԼՓ.

Տիկին, այս դրան վրայ ծանուցում մը կարդացի և եկայ իմանալ թէ որո՞նք են վարձու սենեակները։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Առաջին յարկը եղող սենեակներն են։

ՌՈՏՈԼՓ, առանձին։

Զան խօսքի բռնեմ։ (Բարձր ձայնով) Կը յուսամ թէ այն սենեակները ինծի յարմար են. կ՚աղաչեմ, տիկին, որ բարեհաճիք ինծի հարկաւոր եղած ծառայութիւնները կատարել։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ինչո՞ւ չէ, պարոն, շատ հաճութեամբ, ափսոս միայն վեց ֆրանք վճարելով իբրև իշխան պիտի պատուեմ ու ծառայեմ ձեզ. դռնապան չպիտի ըլլանք ձեզ համար, այլ բարեկամ։

ՌՈՏՈԼՓ.

Բայց ըսէք ինծի, տիկին...

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Բօմօն - Ֆօրթիւնէ - Տիանա - Անասթազի Բիբլէ։

ՌՈՏՈԼՓ.

Տիկին Բիբլէ, կրնա՞մ առանց անխոհեմութիւն մը գործելու հարցընել թէ ո՞վ կը բնակի աս տունը։ Ընչուչա կրնաք հասկնալ, երբ մէկը տեղ մը բնակիլ ուզէ....

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Իրաւացի է հարցուցածդ, պարոն... Ապահով եղիր որ այս տունը խիստ արժանաւոր ու պատուաւոր անձինք կը բնակին... Առաջին յարկին վրայօք չխօսինք, ըստ սրում դատարկ է. միայն աս կրնամ ըսել թէ վերջին բնակարանը նստողը գարշելի անձ մ՚է, որ սիրելի Ալֆրէտս ծեր էրկանս կեանքը թունաւորեց ու կը թունաւորէ միշտ։

ՌՈՏՈԼՓ.

Ո՛վ Աստուած իմ.... ո՞վ է արդեօք այս թշուառականը։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Կադրիօն անուամբ պատկերահան մը, զոր Աստուած պատժէ, այնչափ ըրաւ որ խեղճ ծերուկս անկայ դարձած է.... ներեցէք, պարոն... (Րիկօլէթը կանչելով) Օրիորդ Րիկօլէթ, այդչափ շուտ մի՛ վազեր։ (Ռօտօլֆին) Մարգարտանման պզտիկ կար կարող մ՚է երկրորդ յարկը բնակող.... միշտ կանխիկ կը վճարէ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՆՈՅՆԵՐԸ. ՐԻԿՈԼԷԹ.

ՐԻԿՈԼԷԹ.

Ի՞նչ կը խնդրէք, տիկին Բիբլէ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ո՛ւսկից կու գաս, աղջիկս։

ՐԻԿՈԼԷԹ.

Ինծի և թռչնոցս համար հարկաւոր եղածները գնեցի։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Նայիմ բերածներդ :

ՌՈՏՈԼՖ. Ինքնիրեն.

Ի՛նչ շնորհալի է այս փոքր աղջիկը :

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ. Ռոտոլֆը ցուցնելով.

Պարոնը այսուհետև հոս պիտի բնակի :

ՌՈՏՈԼՖ.

Ըստ որում այդչափ շնորհալի և գեղեցիկ ես, պէտք ես սիրահարներ ալ ունենալ անշուշտ :

ՌԻԿՈԼԷԹ.

Սիրահա՞ր, ո՛չ, ո՛չ երբէք :

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Այդչափ մի ուրանար. հապա Գ. Ժէրմէնը . . .

ՌԻԿՈԼԷԹ.

Գ. Ժէրմէնը խիստ բարի տղայ է, բարի սիրտ ունի, ազնիւ ու քաղաքավար է. բայց բնաւ իմ սիրահարս չէ . . . Իմ ասանկ բաներու մտածելու ժամանակ ունի՛մ . . . բայց ի՛նչ կուզէիք, տիկին Բիբլէ ;

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Գ. Մորէլը դուրս ելաւ . . . . և ըստ որում իր կինը դեռ արթնցած չէ, խոյդ երթալու ժամանակդ անգամ մը անոր զաւակայը նայէ ;

ՌԻԿՈԼԷԹ.

Ինչո՞ւ չըսիր մինչև հիմա, իսկոյն կարելու գործս Մորէլի սենեակը կը տանիմ. և Ֆլէօր տը Մարիին ինծի վերջին անգամ տուած երգը պիտի երգեմ:

ՌՈՏՈԼՖ.

Կը ճանչնա՞ս զան :

ՌԻԿՈԼԷԹ.

Կը ճանչնամ և շատ կը սիրեմ զան հրեշտակային աղջիկ մ'է, բայց սատանաներու ճիրաններուն մէջ ինկած . . . Մնաք բարեաւ, իմ ապառնի դրացիս :

ՌՈՏՈԼՖ.

Երթաք բարեաւ, օրիորդ Ռիկոլէթ :

ՄԱՐԴ ՄԸ. Բակին մէջէն :

Գ. Մորէլը հո՛ս է :

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ. Բակին մէջէն պատասխանելով:

Դուրս ելաւ :

ՄԱՐԴԸ.

Ոսկերիչին կողմանէ կու գամ:

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Վե՛ր ելիր, տիկին Մորէլին իմացուր :

ՄԱՐԴԸ.

Ո՞ր յարկը :

ՌԻԿՈԼԷԹ. որ իր ձեռքով ամանը չէր առած էր:

Եթէ կուզես գալ, պարոն, ես քեզ դուռը կը ցուցնեմ:

ՌԻԿՈԼԷԹ մարդուն առջևէն կ'երթայ և երկուքն ալ սանդուղքէն վեր կ'ելլեն:

ՌՈՏՈԼՖ.

Ազնի՛ւ զաւակ :

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Ստուգիւ, պարոն . . .

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՌՈՏՈԼՖ. ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ. Ետքը ԲԻԲԼԻ:

ՌՈՏՈԼՖ. չորս կողմը ցուցնելով:

Աս կողմի բնակարանները վարձուած են :

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Այո՛, Պ. Ֆէրանին ձեռքն են:

ՌՕՏՕԼՖ. Խոժոռելէն:

Ան է:

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Պատուարժան և պարկեշտ անձ մ՚է, որուն քովը յաճախողները առաջին կարգի անձինք են, նմանապէս Բարեգործական ընկերութեան անդամներէն:

ԲԻԲԼԷ. Խորունկ հառաչելէն:

Աս ինչ անիրաւութիւն է..... ինչ անաստուածութիւն...

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Իմ սիրելի էրիկս է:

ԲԻԲԼԷ.

Ո՛չ, ո՛չ, չպիտի վճարեմ:

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Կռիւդ որու՛ հետ է, Ալֆրէտ, քեզ ինչ սակ վճարել տալ կ՚ուզեն:

ԲԻԲԼԷ.

Բայց կրնամ ըսել թէ ամեն օրուան գլխատութեան դատապարտուածները այս չարագործ հրէշներուն քով ոչխար են:

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ո՞վ է ան, ո՞ր անզգամն է:

ԲԻԲԼԷ.

Միշտ նոյնը. միթէ աշխարհիս երեսը ուրիշ թշնամի ունիմ:

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ուրեմն զան տեսա՞ր:

ԲԻԲԼԷ.

Ճամբուն վրայ կեցած գրքածախի մը պատկերներուն առջև դրուած ՇԱՐԻՎԱՐԻԻ խեղկատակ պատկերները դիտելու ժամանակս՝ յանկարծ զգացի որ մէկը կռնակիս դպաւ.... Օ՛ոյս դրած գաշկինակս յիշեցի... իսկոյն ետիս դառնալով, ո՛վ տեսնեմ. Կապրիօնը, այն չար Կապրիօնը իր երկու ձեռքերը ձագարի կերպով իր բերանին առջև դնելով, սկսաւ կատաղի կերպով ՇԱՐԻՎԱՐԻ՛ պոռալ.... Ես ալ վախսու... սկսայ փախչիլ, բայց իսկոյն լսեցի որ խիստ բարձր ձայնով ետևէս կը պոռան... Կեցի՛ր... կեցի՛ր... և իսկոյն Օվէրնիացի մը բարկութեամբ մը քովս եկաւ, և հարիւրի չափ շաղանակի գին խնդրեց... Գիտէ՞ք պատճառը, պատճառը կ՚ուզէ՞ք իմանալ:

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Խօսքդ լմնցուր:

ԲԻԲԼԷ.

Խեղկատակ պատկերները դիտելու ժամանակս՝ աս զարշելի Կապրիօնը զգեստիս ետևի կոճակին սանի ծայր մը կապեր է.... և միւս ծայրը շաղանակ ծախողին կրակարանին անցուցած էր.... փախչելու ժամանակս Օվէրնիացիին փոքր կրակարանը միատեղ քաշած էի.... պոչէն կաթսայ քաշելով փախչող շանց պէս....

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ինչև իցէ, սիրելիդ իմ Ալֆրէտ... ալ մոռցի՛ր, սիրելի ծերս, մոռցի՛ր ալ....

ԲԻԲԼԷ.

Մոռնամ... Անասթազի, մոռնա՞մ ըսիր, երբ միայն զան միտքս բերեմ իր երկար մազերովը և սրա-

ծայր գլխարկովը․ իբր անդամալոյծ անշարժ կը մնամ, և իր զարշելի ե-րեսը չտեսնելու համար՝ հազիւ թէ աչքերս գոցելու չափ ոյժ կ'ունենամ։

ՏԻԿԻՆ ՊԻՊԼԷ.

Ինծի նայէ, Ալֆրէտ, աս խուցը նստիր մինչև որ պարոնին ցոյց տամ վարձու եղած սենեակները։

ՌՈՏՈԼՖ.

Ես ալ ետևէդ կու գամ, տիկին . . . (Ինքնիրեն) Աշխատիմ աւելի ու-րիշ բաներ ալ իմանալու։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՊԻՊԼԷ. Ետքը՝ ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ և ԿԱՊՐԻՈՆ.

ՊԻՊԼԷ, մէկը նստելով.

Չարագործի մը պէս տանջեցին զիս. բան մը չեմ անարժեր։

Նոյն ժամանակը կառք մը արտաքին դրան առջևը կը կենայ. ծառայ մը մեծ-յն հագուստով ներս կը մտնէ, ու Գ. Ֆէրանի դուռը կը զարնէ. կը բանայ զան ու ներսը կ'ելնէ.

ԾԱՌԱՆ.

Տիկին տ'Արվիլ կը հարցընէ Գ. Ֆէրանին թէ կրնա՞յ իրեն ընդունե-լութիւն տալ։

Քիչ մը ատեն ետքը ծառան դուրս կ'ելլէ։

ՊԻՊԼԷ.

Ութ օր է որ աս զժբաղդ կոշիկը սկսած եմ, որուն միայն պզտիկ կա-շին դնել պէտք է։ (Չետեւը կոշկին մէջ կ'անցընէ։ Տիկին տ'Արվիլ իր ծա-ռայէն ետևէն գալով, դէսպանին մէջ մեզէն կ'անցնի, ու Գ. Ֆէրանի բնա-կարանը կը մտնէ։) Ամէն վայրկեան ձեռքէս վար կիյնայ . . . գերձանս կը կտրի, ասեղս մատերս կը մտնէ . . . անտանելի բան է . . . միշտ ինծի այնպէս կ'երևի թէ ան զարշելի ո-գին կը տեսնեմ . . . աս գիշեր զան երազիս մէջ տեսայ։

Այս միջոցիս Կապրիոն կ'երևի. ու լուռ և ոտքերու ծայրով Պիպլէի կը մօտենայ անշարժ ոգւոյ մը պէս, Պիպլէի գլխարկը կը վերցընէ. գը-լուխը կը դնէ, ու մէկ ձեռքովի. և մէկ ալ սպառնալի շարժմունքով մօտէն անցնելու խաղեր կ'ընէ։ Ետքը գլխարկը նորէն լաւոր գլուխը կը դնէ. և բուռի հարուածով մը զան մինչև աչքերը կ'իջեցընէ. ետքը փախելով կը հեռանայ անկէ։

ՊԻՊԼԷ, շատ ուշ ձայներ հանելով.

Ո՛հ, ո՛հ, ո՛հ, օգնութեա՛ն հասէք, պահապաններ, հո՛ս եկէք։

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ՌՈՏՈԼՖ. ՊԻՊԼԷ. ՏԻԿԻՆ ՊԻՊԼԷ.

ՏԻԿԻՆ ՊԻՊԼԷ, վազելով.

Ի՞նչ կը լսեմ . . . Ալֆրէտս է, ո՛հ, կարծես թէ իր գլխարկին մէջ թաղուած է։ Դարձեալ Կապրիոնին գործն է։ Բայց ո՛վ Աստուած, ին-չո՞ւ այս զարշելի անձը այսպէս իմ խեղճ էրկանս ետևն է ինկեր։

ՊԻՊԼԷ.

Ո՛հ, ո՛հ, կը խեղդուիմ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԻԼ. անոր օգնելու պատրաստուելով.

Զգուշացիր, քիթդ աղէկ բռնէ որ խիստ չցաւի. . . աՀա լմնցաւ, Հանդըստացա՞ր Հիմա ։

ԲԻԲԻԼ.

Ո՛Հ, նապաստակի մազին Հատը ինչպէս դէշ է ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԻԼ.

Բայց մտիկ ըրէ ։ Արդեօք ինչ կայ, ինչու Մորէլի սենեակը բարձր ձայնով կը խօսին ։ Հիմա ներս մըտնող ոսկերիչը կարծես թէ սպառնալիք կընէ ու տիկին Մորէլը լալով պատասխան կու տայ . . . կերթան ու կու գան . . .

ԲԻԲԻԼ.

Կապրիօնն է ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԻԼ.

Վաղէ, շուտով Պ. Մորէլը կանչէ, Ֆօնբէն օ Բոսս փողոցը Հայր Լըֆէպրին տունն է ։

ԲԻԲԻԼ.

Կապրիօնն ըլլալ պէտք է ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԻԼ.

Ո՛Հ, խենդեցեր ես, Ալֆրէտ. ինչու որ Հոն աղմուկ եղած ժամանակը Կապրիօն քու քովդ էր ։

ԲԻԲԻԼ.

Ստոյգ է ։

ՌՕՏՕԼՖ, որ ժամանակ մը ծածուկին մէջ կեցաւ ։

Այս կառքը . . . աս մարդիկը կարծեմ թէ ինծի անծանօթ չեն ։

ԲԻԲԻԼ, տիկին Բիբիլէի տուած Հրամանը առնելով.

Շատ աղէկ, երթամ . . . . քիչ մը օդ առնելու ալ Հարկաւորութիւն ունիմ . . . . եթէ Կապրիօնը տեսնեմ, ժողովուրդը ոտք պիտի Հանեմ, և պիտի սկսիմ պոռալ թէ կրակ կայ ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԻԼ. զինք մինչև դուռը տանելով.

Գնա, սիրելի Ֆրիկս ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԻԼ ետ դառնալով իր սենեակը կը մտնելու ատենը կը տեսնէ որ Ռօտօլֆ՝ ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼԻ Հետ կը խօսի ։

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՌՕՏՕԼՖ. ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ, Ֆէրանին բնակարանէն դուրս ելլելով.

ՌՕՏՕԼՖ.

Հոս ինչ գործ ունիք, տիկին. . .

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Գործակալիս տունն էի ։

ՌՕՏՕԼՖ.

Պ. Ֆէրանին տունը, բայց աս Ճամբու կառքը որո՞ւ է ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Իմս է ։

ՌՕՏՕԼՖ.

Դո՞ւրս կը մեկնիք ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Հօրս առողջութեանը Համար . . .

ՌՕՏՕԼՖ.

Բայց երէկ . . . բան մը չըսիր ինձ . . . սովորաբար ինձմէ գաղտնիք չես պաՀեր ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Որովհետև կուզես, ուրեմն Համարձակ խօսիմ, պարոն, այս առտու ինձ գրով իմացուցիր թէ տեսութիւն ըրիր Սառա Մաք-Կրէկօր կոմսու-

հուոյն հետ · բայց ամէն բան ինծի չի հաղորդեցիր, կարդա՛ ուրեմն աս թուղթը։

ՌՈՏՈԼՖ · ինքնիրեն·

"Տիկին, իշխանազունը իր կորուսեալ կարծած աղջիկը գտնելու կէտին վրայ է։ Դուն որ իշխանազունին ամուսնացեալ ըլլալը յիշելու կ'արգելուս, իւր հայր ըլլալն ալ յիշելու կրնաս արգիլել" ... Ընանո՛ւն նամակ, վա՛տ անզգամութիւն։ Ինծմէ թաքնուիլ կ'ուզես։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Մինչև ե՞րբ պիտի համբերեմ այսպիսի գրուածներու։

ՌՈՏՈԼՖ.

Հիմա կ'իմանամ թէ այս հարուածը ուսկից կու գայ և թէ ինչ դարան պատրաստուած է ինծի համար։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Ի՞նչ ըսել կ'ուզես։

ՌՈՏՈԼՖ·

Նենգամիտ և չարասիրտ Սառա կոմսուհւոյն գործը պիտի ըլլայ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Տէր իմ, ինչո՞ւ այսպէս շուտով կ'ամբաստանես, եթէ արդարև այդ զաւակը գտնելու յոյս կայ տակաւին...

ՌՈՏՈԼՖ.

Ուրեմն կը կարծես թէ ես աս խղճալի մահուան՝ նիւթական և հաստատ ապացոյցները չունէի...

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Ամենևին չեմ տարակուսիր, տէր իմ, ձեր սրտին ազնիւ հանգամանացը վրայ, և ասոր համար է որ կ'ուզեմ մեկնիլ...

ՌՈՏՈԼՖ.

Ի՞նչպէս։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Եթէ այս զաւակը իրօք կենդանի է, մեծ պարտաւորութիւն մը ունիս զան օրինաւոր ընելու... պէտք է որ ամուսնանաս...

ՌՈՏՈԼՖ.

Սառա կոմսուհւո՞յն հետ, երբեք։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ·

Այս միաւորութիւնը անհրաժեշտ պարտք է։

ՌՈՏՈԼՖ.

Այդ բանը մի՛ ըսեր ինծի։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ·

Այո՛, կըսեմ, ինչու որ մէկը չի կայ որ ինծի չափ ուզէ որ դուն օրինաւորապէս և արիութեամբ քու պարտքդ կատարես, ինչպէս որ մինչև հիմա միշտ ըրիր...

ՌՈՏՈԼՖ.

Ազնի՛ւ տիկին։ Բայց ինչո՞ւ այսպիսի դժուարին և անկարելի գործի մը ետևէ ըլլամ, որով պարապ տեղը ցաւերս պիտի նորոգեմ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ·

Ապահով ըրէ զիս քուն ինծի համար։

ՌՈՏՈԼՖ.

Կը պահանջե՞ս։ Ուրեմն կը խոստանամ, եթէ աղջիկս ստուգիւ ձեռքս հասնի, իրեն պէտք եղածը կ'ընեմ ... բայց ալ չպիտի մեկնիս։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ·

Այո՛, չեմ մեկնիր։ Բայց շարունա-

կէ քու խուզարկութիւններդ , որոնց համար հոս եկած ես։

ՌՈՏՈԼՖ.

Կը հնազանդիմ։ (Տեսնելով որ Ֆլէօր տը Մարի և Մէրիը տ'Էգօլ ներս կը մտնեն։) Մանաւանդ որ հոս առիթ մը կը տեսնեմ բարեգործութեան այն միջոցը 'ի գործ դնելու, որ քեզ հաճելի է միշտ . . . ինչպէս որ դուն խոկ ըսիր։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Այո . . . ինչու որ վեհանձնութեան զօրութիւնը ճանչնալը քեզմէ սորված եմ։

ՌՈՏՈԼՖ.

Թևս կ'ընդունիմ ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Այո, մինչև կառքը։

Ճաշասենեակէն դուրս կ'ելլեն։ Ֆլէօր տը Մարի Ռոտոլֆը կը տեսնէ. և աչքը անոր վրայէն չհեռացըներ։

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ. ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Կրնաս պարոն Ֆէրանի սենեակը երթալ, իմ սիրելի բարեկամս, ո՛հ, համեստ մարդոց օգնութիւն մը ընելու համար ձեռքէս եկածը կընեմ . . .

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Շնորհակալ եմ, տիկին Բիբլէ։ (Բարեւելով մը Ֆլէօր տը Մարին) Հոս ինծի սպասէ ու տեղէդ մի՛ շարժիր . . . գիտես որ ձեռքէս չես կրնար փախչիլ։

Ֆէրանի սենեակը կը մտնէ։

## ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՌՈՏՈԼՖ. ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ռոտոլֆ, էր դառնալով.

Իմ բարի աղջիկս, դարձեալ հոս կը տեսնեմ զքեզ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, ուրախութեան ճիչով մը.

Ե՞տ կը դառնաք, պարոն ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ո՛հ . . . կը տեսնեմ որ իրար կը ճանչնաք, սիրելի պարոն . . . աւելի կ'ուզէի ձեզի հետ խօսիլ, բայց երկանս խանութը քիչ մը կանոնաւորելու ստիպուած եմ։ Քիչ մըէն կը տեսնուինք։

Ներս կը մտնէ։

ՌՈՏՈԼՖ, տիկին Բիբլէին.

Շատ աղէկ . . . Օ՛խ ճանչցայ, Ֆլէօր տը Մարի։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ես զքեզ շատ անենէ 'ի վեր կը ճանչնամ։

ՌՈՏՈԼՖ.

Կը սխալիս, ես փարիզ չէի բընակիր։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Երբէք եկած չե՞ս։

ՌՈՏՈԼՖ.

Չորս կամ հինգ տարի կայ՝ եկայ քանի մը օր կեցայ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Շատ աղէկ կը յիշեմ։ Երէկ՝ որ լոյն զգեստ հագած էիր՝ չճանչցայ, բայց այսօր . . .

ՌՈՏՈԼՖ.

Ըսէ՛ ինծի, աղջիկս, դուն ո՛վ ես և ո՛ւր ինծի հանդիպեցար։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ե՞ս ով եմ... ափսո՜ս, խեղճ պզտիկ աղջիկ մը՝ երեք կամ չորս տարեկան հասակիս մէջ փողոցը գըտնուած, անանկ կնիկէ մը, որ աւելի աղէկ կ'ընէր եթէ թողուր որ մեռնիմ։

ՌՈՏՈԼՖ.

Բայց այդ կինը բարեսիրտ է եղեր, որ զքեզ իր տունը առեր է։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ահա աս բանս շատ անգամ ինքն իրենս կ'ըսեմ, որպէս զի մխիթարուիմ ու զան չանարգեմ՝ զիս սովորականէն աւելի ծեծած օրերը։

ՌՈՏՈԼՖ.

Քեզի պէս դեռահասակ աղջիկ մը կը ծեծէ՜... Բայց ինչո՞ւ համար։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Երբ տասը *** ողորմութիւն չկարենամ բերել՝ զիս կը ծեծէ.... իրիկուն մը... խիստ ցուրտ էր, ու խիստ երկար ժամանակ կայնած էի Շանզ-Էլիզէի ծառի մը քով, որպէս զի ցուրտէն քիչ մը պատսպարուիմ...։ Արդէն ժամանակը ուշ էր, ու ես միայն երեք *** հաւաքած էի... ան գիշերը բոլորովին ուժս կորուսեր էի, ու գլուխս գալիքը գուշակելով, կու լայի... երբ պարոն մը տեսայ և *** մը խնդրելով՝ հեծկլտանօք լալ սկսայ.... Մարդը ուշադրութեամբ սկսաւ դիտել զիս... այնպէս որ իր գութը շարժած կ'երևար, ետ դարձաւ ու հարիւր *** տուաւ... երկու օր ծեծ չկերայ... աս պարոնը դուն էիր։

ՌՈՏՈԼՖ.

Ե՞ս, աղջիկս... բայց հինգ տարի է, այո՛... կարելի է։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛հ, շատ անգամ անցար դարձար, ես զքեզ կը դիտէի ու Ճամբուն մինչև ծայրը աչքս վրայէդ չէի վերցըներ... բայց առանց բան մը խընդրելու քեզմէ... վասն զի առաջին անգամ այնչափ շատ տուիր ինձ։

ՌՈՏՈԼՖ.

Խեղճ աղջիկ, մինչև մեծնալդ ի՞նչ ըրիր։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Քանի մը տարի ետքը, Շուէթ Մէթրը տ'Իւքօլ անուամբ մէկու մը հետ կարգուեցաւ, որ երգեօն կը նուագէ, ան զիս իր հետը փողոցները ու տանց բակերը տանելով, ինձ խաղ կանչել կու տայ։

ՌՈՏՈԼՖ.

Ան ատենը աւելի երջանիկ եղա՞ր։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Շատ անգամ երկուքնին մէկ եղան զիս ծեծելու։

ՌՈՏՈԼՖ.

Ի՞նչպէս, միշտ...

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛հ, երբեմն հանգիստ օրեր ունեցայ... անշուշտ երբ սատակ կը վաստկին, չեն աշխատիր, ու զիս տունը թող կու տան արգիլելով որ դուրս չելլեմ։

ՌՈՏՈԼՖ.

Բայց առանձի՞ն. միշտ առանձին ես։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ոչ, հիմա առանձին չեմ։

ՌՕՏՕԼՓ.

Ուրեմն մէկը կը սիրես։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Զորս օր կայ, Մէթրը տ'Էքօլ և Շուէթ առտու կանուխ դուրս ելած էին. սենեակը մաքրելու ժամանակս գետինը մէկ անկիւնը բան մը գըտայ... բայց չեմ համարձակիր ըսելու, տղայական բան է։

ՌՕՏՕԼՓ.

Ըսէ վնաս չունի։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Փղոսկրի վրայ նկարուած խիստ գեղեցիկ, երիտասարդ ու փառաւոր հագուած կնոջ մը պատկերը գտայ, զան տեսնելով զմայլեցայ։ Բայց այնպիսի քաղցր դէմք մը ունի, որ քիչ քիչ հետը ընտանենալ սկսայ, ու հետը խօսելով հարցուցի անոր թէ բարեկամուհի ըլլալ կ'ուզէ՞... իր ժպիտը... ըսա որում քեզ նայած ժամանակը կը խնդայ, իր ժպիտը այո՛, ըսաւ։ Ու ան օրէն 'ի վեր, երբ ուրախ եմ՝ առջեւս կը դնեմ որ իմ երգերս լսէ. երբ կու լամ՝ անոր երեսը կը նայիմ, և երբ խիստ շատ լամ՝ զան կը համբուրեմ։

ՌՕՏՕԼՓ.

Ազնիւ աղջիկ, որ այնչափ սիրելի ես, և այս անդութները գքեզ կ'ատեն։ Այդ պատկերը՝ որ քեզ այդչափ բարիք ըրաւ, ես արդէն կը սիրեմ զան։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Բայց եթէ տեսնէիր։

ՌՕՏՕԼՓ.

Նայիմ անգամ մը։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Խօսք տուր որ պիտի հաւնիս։

ՌՕՏՕԼՓ.

Կը խոստանամ քեզ... (պատկերը դիտելով.) ինչ կը տեսնեմ, Քլէմանս տ'Արվիլն է...

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Կը ճանչնա՞ս զան։

ՌՕՏՕԼՓ.

Եւ ա՞ս պատկերը գտար։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛վ Աստուած, բարկացած կ'երեւիս... ըսի արդէն, ան անկիւն մը նետուած էր իբրև անպիտան բան մը, գուցէ գէշ ըրի զան առնելս, բայց կրնար կորսուիլ։

ՌՕՏՕԼՓ. (ինքնիրեն խօսելով.)

Այս գողցուած պատկերը աս աղջկան ձեռքը գտնուի՛. ո՛հ, պէտք է որ ամեն բան իմանամ։ (Բարձր.) ո՞ւր կը բնակիս, աղջիկս։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Երէկ գիշեր զիս տեսած տեղիդ մօտ եղած տունը.... հո՞ն պիտի երթաս։

ՌՕՏՕԼՓ.

Ֆլէօր տը Մարի, ինծի բոլոր ըսածներդ սիրտս շարժեց, ու միտքս յիշատակներ ձգեց... ձեռքէս եկածը պիտի ընեմ որ քու այդ վիճակդ փոխեմ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Բայց պատկերը։

ՌՕՏՕԼՓ.

Իմ քովս թող զան, մի՛ վախնար

աղջիկս, և հաւատա քու բարի հըբեշտակիդ ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Նորէն Շանդ Էլիզէ պիտի դամ ։

ՌՕՏՕԼՖ.

Ալ հարկաւորութիւն չպիտի ունենաս երթալու և ինձ հոն սպասելու ։

Արտաքնոց դուռը կը զարնեն ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, ծածանոց մը առնելէն.

Ուրանի թէ իր երջանիկ խօսքերը իրաւ ըլլային ։ Եթէ Աստուած աս խօսքերը լսեց ու կ'ուզէ 'ի գործ դնել աս բարի մարդուն ըսածը, աս մարդոց ձեռքէն այս օրուընէ զիս պիտի ազատէ ։

## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. ՐԻԿՕԼԷԹ. Ետքը՝ ԺԻՐՄԷՆ.

ՐԻԿՕԼԷԹ. տանէն դուրս ելլելով, ու ալեկոծեալ բաժը մտնելով ։

Ո՜վ Աստուած, ինչ դժբաղդութիւն... (կանչելով.) Պարոն Ժէրմէն ։ (Ֆլէօր տը Մարին կը տեսնէ ։) Դուն հոս ես, Ֆլէօր տը Մարի ։ (Ֆերմէնի տան պատուհանին տակը երթալով կը կանչէ.) Պարոն Ժէրմէն... (Ֆլէօր տը Մարիին.) երէկուընէ 'ի վեր ինչպէս ես ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛հ, աւելի աղէկ եմ, կը յուսամ որ քիչ ատենէն ինծի համար երջանիկ փոփոխութիւն մը պիտի ըլլայ ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ո՛հ, ինչ բարեբաղդութիւն ։ (կանչելով.) պարոն Ժէրմէն ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Բայց ինչ ունիս ։

ՐԻԿՕԼԷԹ. Ժերմէնին որ ներս կը մտնէ.

Ահա վերջապէս եկար ։

ԺԵՐՄԷՆ.

Ի՞նչ կայ արդեօք ։

ՐԻԿՕԼԷԹ.

Շուտ մը Մորէլի սենեակը ելիր ։

ԺԵՐՄԷՆ.

Ի՞նչ ընեմ հոն ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ես ինչ գիտնամ. բայց հոն մէկը կայ որ կը պոռայ... ադամանդի մը համար... Տիկին Մորէլը առանձին է ապուշ կնոջ և տղայոց հետ... Չգիտեր թէ որու ունկնդրութիւն ընէ... գնա, գնա ։

ԺԵՐՄԷՆ.

Բայց աս մարդը ինչո՞ւ կը պոռայ ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ոստիկանութեան գործակալը երթալ փնտռելու խօսք կընէ, ասանկ ատեն այն խեղճ կինը մինակ մի՛ թողուր ։ Ամէն բան կիմանաս... գնա՛, գնա՛ ։

ԺԵՐՄԷՆ. երթալով ։

Ահա կ'երթամ, ահա կ'երթամ, օրիորդ Րիկօլէթ, մի՛ վախնար ։

## ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՐԻԿՕԼԷԹ. ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ, *իր խուցին մէջ.*

*Ետքը՝* ԺԻՐՄԻՆ.

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

*Բայց ինչու համար այդչափ վախի մէջ ես, Րիկօլէթ:*

ՐԻԿՕԼԷԹ.

*Մտիկ ըրէ, դրացիներուն սենեկին մէջ աղմուկ լսելով ներս մըտայ... Հոն ոսկերիչ մը կար, որ չար ու բիրտ դէմք մ'ունէր ու գոնէ երկու հազար ֆրանգնոց ադամանդ մը կը պահանջէր, զոր Պ. Մորէլ բերած էր կարելու:*

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

*Ն՞ետքը, այդ ադամանդը ինչ եղաւ:*

ՐԻԿՕԼԷԹ.

*Տիկին Մորէլը իր երկան գործարանը մտաւ, ու դրասեղանին մէջ զան փնտռեց, ու չգտաւ. վար իջաւ բոլոր բալլիքուած տեղերը և պահանոցները բացաւ... բան մը չգտաւ: Ան առենը այս մարդը բարկանալով, ըսաւ թէ իր ադամանդը կուզէ անշուշտ, և առանց որոյ տունէն դուրս չպիտի ելլէ.*

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

*Ո՛հ, խեղճ կինը:*

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ. *(ալեկոծեալ տունէն դուրս ելլելով:)*

*Ո՞վ է այս սանդուղքէն վար իջնողը, որ տունը կը թնթացընէ:*

ԺԻՐՄԻՆ, *(ելլելով:)*

*Ես եմ, տիկին Բիբլէ...*

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ. *(բակին մէջ անոր ետեւէն երթալով:)*

*Ո՛վ Աստուած, ամեն բան կարգի մտա՞ւ:*

ՐԻԿՕԼԷԹ. ԺԻՐՄԻՆ.

*Ի՞նչպէս եղաւ:*

ԺԻՐՄԻՆ.

*Ադամանդ մը գողցուեր է:*

ԵՐԵՔ ԿԻՆԵՐԸ.

*Գողցուե՞ր է:*

ՐԻԿՕԼԷԹ.

*Ո՞վ է գողցողը:*

ԺԻՐՄԻՆ.

*Ո՛վ է, չեմ գիտեր, կուցէ ան մարդը գողցաւ որ երէկ գիշեր... կէս գիշերին հոս հանդիպեցաւ. և որուն վրայօք արդէն քեզի խօսեցայ... տիկին Բիբլէ...*

ՐԻԿՕԼԷԹ.

*Ո՞ր մարդը:*

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

*Այն կարմիր մօրուօք մարդը:*

ԺԻՐՄԻՆ.

*Պ. Մորէլ ադամանդը երէկ գիշեր կտրելը լմնցուց:*

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

*Ո՛վ Աստուած:*

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

*Մեր տունը գո՞ղ մտնէ:*

ՐԻԿՕԼԷԹ.

*Բան մը եկաւ միտքս. գիտե՞ս Պ. Մորէլ այս առտու ո՞ւր գնաց:*

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

*Այո՛, գիտեմ: Լըֆէպըը հօր տունը գնաց, բայց առաջ ուրիշ տեղ ալ պիտի երթար:*

ՌԻԿՕԼԷԹ.

Գուցէ ադամանդը տանելու գընայ ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Այո՛, ոսկերչին բուն հոս եղած ժամանակը ։

## ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ՆՈՅՆՆԵՐԸ. ԲԻԲԼԷ. ՄՈՐԷԼ, ետքը՝ ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

ԲԻԲԼԷ. ճակատը սրբելով.

Ահա բերի Պ. Մորէլը ։

ՌԻԿՕԼԷԹ.

Հիմա կը հասկնանք ։

ԺԷՐՄԷՆ.

Բայց նախ զան չվախցընենք ։

ՄՈՐԷԼ.

Բարի լոյս, դրացիս ... բարի լոյս, քիմ դրացուհիս ... Շատ ուրախ եմ որ խեղճ կինս բոլորովին պիտի առողջանայ գիւղը ։ Պէլվիլի մէջ երկու գեղեցիկ փոքր սենեակներ վարձեցի ։ Բայց ինչ կայ արդեօք, որ Պ. Բիբլէ եկաւ ու զիս Լըֆէպրը հօր տունէն կանչեց ... ան չկրցաւ պատճառը իմացընել ...

ՌԻԿՕԼԷԹ.

Հայր Լըֆէպրին երթալէդ առաջ, ուրիշ տեղ մ'ալ գացի՞ր, պարոն Մորէլ ։

ՄՈՐԷԼ.

Այո՛, սեղանատունէն երեք հարիւր ֆրանգ վերուցի ։

ԺԷՐՄԷՆ.

Ոսկերչին քովն ալ չգացի՞ր ։

ՄՈՐԷԼ.

Չէ, բայց ինչու համար հոն երթայի ։

ԺԷՐՄԷՆ.

Երէկուան կտրած ադամանդդ անոր տանելու համար ։

ՄՈՐԷԼ.

Այն ադամանդը իմ գործարանիս գզրոցին մէջը դրի ... բայց ինչու ամենքդ ալ լուռ կեցած էք ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ նոյն միջոցին Ֆէրանի սենեակէն դուրս կ'ելլէ իր ձեռացը մէջ գըրած չայներ հանելով ։

ԺԷՐՄԷՆ.

Ինչու որ ադամանդը հոն չէ ։

ՄՈՐԷԼ.

Հոն չէ, հապա ո՞ւր է ։

ԺԷՐՄԷՆ.

Չեմ գիտեր, ի՛նչ ըսեմ ...

ՄՈՐԷԼ.

Խօսէ՛, կաղաչեմ, խօսէ համարձակ ։

ԺԷՐՄԷՆ.

Գիտցի՛ր ուրեմն որ ադամանդը գողցուեր է ։

ՄՈՐԷԼ.

Գողցուե՛ր է. անկարելի է. երեք հազար ֆրանգնոց ադամանդ մը գողցուի ... բայց ո՜վ Աստուած, ես կորսուած եմ, բոլորովին կորսուած ... դեռ այս առտու ուրախ ու երջանիկ էի ... այս գիշեր ... Թշուառ արտասուաց մէջ կը գըտնուիմ, ու զաւակներս ... կինս ... իմ խեղճ կինս ...։

Նուաղելով կ'իյնայ ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

*Ո՛չ, եթէ գարշելի գողը ձեռքս անցնէր . . .*

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

*Ֆլէօր տը Մարի, այսուհետեւ Պ. Ֆէրանի ծառայութեան տակն ես։*

## ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ. — ԺԱՔ ՖԷՐԱՆԻ ԳԱՀԼԻՃԸ

Թատրոնը Ժ. Ֆէրանի գրատունը կը ներկայացընէ։ Աջ կողմը Ֆէրանի գրասեղանը, որուն վրայ վառած կանթեղ մը։ Ձախ կողմը Ժէրմէնի գրասեղանը։ Ներքին կողմը մտնելու դուռ։ Երկու կողմնակի դռներ։ Պատուհան մը փեղկերով եւ վարագոյրով։ Ներքին կողմը, պատկերի մը ետին պատին մէջ գաղտնի տեղ մը։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԺԷՐՄԷՆ. Ետքը՝ ՔԼԷՐՄՕՆ.

ԺԷՐՄԷՆ, իր գրասեղանին առջեւ նստած է ու գործը մոռցուած ըլլալով կը սկսի խորհիլ։

*Խե՜ղճ Մորէլ, երբէք ասկէ աւելի խորին եւ յուսահատեցուցիչ ցաւ մը տեսած չէր . . . Աս կորուստը իրեն համար անտանելի է . . . . որչափ նեղութիւն ու թշուառութիւն պիտի կրէ այս մարդը, եթէ ոսկե‿րիչը խօսք չհասկցող մէկն ըլլայ, ինչպէս որ կ'ըսէր . . . դուցէ աս չարութիւն ընողը դիմացնիս ըլլայ ու մենք չկրնանք զան գտնել։*

ՔԼԷՐՄՕՆ, ներքին կողմէն գալով.

*Բարի լոյս, պարոն Ժէրմէն։*

ԺԷՐՄԷՆ, ոտք ելլելով. առանց գրասեղանէն հեռանալու։

*Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս, պարոն Քլէրմոն։*

ՔԼԷՐՄՕՆ.

*Մեր Պ. Ֆէրան բարեկամը պատուիրեց ինծի որ աղաչեմ ձեզ որ*

դրամարկղի գրքին մէջ մեր բարեգործական ընկերութեանը համար մեզ վճարած յիսուն ֆրանգի գումարը անցընէք, նոյնպէս՝ երեսուն հազար ֆրանգ ոսկի ստակ աւանդը. զոր իմ անունովս իրեն յանձնեցի։

ԺԷՐՄԷՆ.

Պ. Ֆէրան ընդունե՞ց զան։

ՔԼԷՐՄՕՆ.

Ճշմարիտ՝ մինչև որ զան համոզեցի . . . մեծ նեղութիւն կրեցի . . . քանզի աս բանս զինքը խիստ կը շփոթէր . . . . և այս պատասխանատուութիւնը իր վրայ առնել չէր ուզեր։ Վերջապէս հարկադրեցայ սաստիկ աղաչելու որ գոնէ մեր բարեկամութեանը համար այս շնորհքը ընէ ինծի։ Իրեն իմացուցի թէ այն գումարը բացակայ քրոջ մը հարստութիւնն էր, զոր իրմէ աւելի հաւատարիմ մէկու մը չէի կրնար յանձնել։

ԺԷՐՄԷՆ.

Գիտէք, Պ. Քլէրմօն, ինչպէս մեր տէրը գործոյ մէջ խիստ և զգուշաւոր է . . .

ՔԼԷՐՄՕՆ.

Աղէկ գիտեմ. և անոր համար է որ անսահման վստահութիւն ու հաւատարմութիւն ունի ամեն մարդ իր վրայ և արդարև ամենուն կարծածէն աւելի արժանաւոր է։ Աւելի իր բարեկամաց շահը կը խնամէ քան թէ իրը, և ըսածիս ապացոյց է իր հարստութեան չափաւորութիւնը։ Ես կը մեկնիմ ասկէ . . . մնաք բարեաւ, Պ. Ժէրմէն։

Ժէրմէն զան մինչև դուռը կը տանի. և Սառա կոմսուհին իր առջևը կ'ելլէ. որ տիկին Բիբլէին առաջնորդութեամբը ներս կը մտնէ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍԱՌԱ. ԺԷՐՄԷՆ. ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ. Ետքը՝ ՖԷՐԱՆ.

ՍԱՌԱ, ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷԻՆ.

Հաճեցէք ըսել Պ. Ֆէրանին որ Սառա Մաք-Կրէկոր կոմսուհին կը փափագի խօսիլ իր հետը։ (Տիկին Բիբլէ ներս կը մտնէ. Ժէրմէն աթոռ մը կը մատուցանէ ու իր գրասեղանին առջև կը նստի։ Սառա կը նստի ու ինքնիրեն կըսէ.) Եղբօրս բացակայութիւնը կ'երկարի . . . . Աս գիտէր իր տունը չդարձաւ . . . Հիմա որ իր խուզարկութիւնները ընելու համար շահասիրութենէ գրգռուած է, գուցէ անգամ մը որ ճամբայ ելած է՝ պիտի փախնայ զան կորսնցընելէ . . . Հոգս չէ, իր ինծի ըրած յայտարարութիւններովը զինեալ՝ այն կեղծ համեստ մարդուն դէմ ելած եմ, որուն հետ մեծ դժուարութիւն պիտի չունենամ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ահա Պ. Ֆէրանը Տիկին կոմսուհի։

Ֆէրան ներս կը մտնէ.

ՍԱՌԱ.

Պարոն, քեզի հետ ունենալու խօսակցութիւնս թէ քեզ և թէ ինձ

կը վերաբերի . . . Հաճեցէք ուրեմն ձեր դուռը գոցել տալ և որ և իցէ մարդ ներս չընդունիլ բայց 'ի Նորին բարձրութիւն Ճէրօլսթէյն մեծ դքսէն, որ հիմա հոս պիտի գայ ։

ՖԷՐԱՆ. Խոնարհելով.

Ինչպէս որ կ'ուզէք, տիկին կոմսուհի ։ Տիկին Բիբլէ, կը լսես, Նորին բարձրութիւն Ճէրօլսթէյն մեծ դքսէն զատ որ և իցէ մէկը ներս մի մտցըներ ։ Պ. Ճէրմէն, քիչ մը ժամանակ մեզ առանձին թող ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Նորին բարձրութիւն մը ։ Երթամ նոր շապիկ մը հագնիմ ։

Աճապարելով դուրս կ'ելլէ. Ճէրմէն իր թուղթերը կը ժողվէ. ու Ֆէրանի ըրած նշանին հնազանդելով անոր դահլիճը կը մտնէ. Երբ անոնք դուրս ելան. Ֆէրան Սառային շինծու ողորմութեամբ ձեռները տանելով անտարբեր կը կենայ. Քիչ մը ետքը կ'ըսէ.

ՖԷՐԱՆ.

Բարեհաճեցէք նստիլ, Տիկին կոմսուհի ։ (Սառա միշտ աչքը անոր վրայէն չհեռացնելով կը նայի, երբ դուռը կը գոցեն ։) Ո՞վ է ան ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ներեցէք, պարոն Ֆէրան, ծառայ մը կոմսուհի տիկնոջ համար այս նամակը բերաւ ։

ՍԱՌԱ.

Ընշուշտ եղբօրմէս է, տուր ինձ . . . (Տիկին Բիբլէ, Ֆէրանի նշանին հնազանդելով ետ կը քաշուի մեծ խոնարհութիւն ընելով.) ո՛չ, իշխանազունէն է, ո՛հ, չպիտի գայ . . . դարձեալ ան կինը իր վրայ կը տիրապետէ . . . ո՛հ, վրէժս պիտի հանեմ անորմէ ։

ՖԷՐԱՆ ։

Ալ զմեզ ընդմիջող մէկը չպիտի ըլլայ, տիկին, և ես ուշադրութեամբ մտիկ կ'ընեմ ձեզ ։

ՍԱՌԱ.

Պարոն . . . . (Երկիւղածութեամբ) Ձեր փորձուած առաքինութիւնը և խոհեմութիւնը բոլոր աշխարհ կը վկայէ ։ Վերջապէս ամենուն անսահման վստահութիւնը գրաւած էք ։ (Ֆէրան խոնարհութեամբ կը ծռի ։) Ես ալ համոզուած եմ, պարոն, որ արժանաւոր էք ձեր համբաւոյն . ապահով եմ որ բոլոր աս առաքինութիւնը կեղծաւորութեան դիմակ մը չէ . . . բայց պատասխան չէք տար, պարոն ։

ՖԷՐԱՆ.

Ի՞նչ բանի պատասխան տամ, տիկին կոմսուհի ։

ՍԱՌԱ.

Իրաւունք ունիք, պարոն . . . ուրեմն բանին էութիւնը բացարձակ պիտի խօսիմ ։ Գրեթէ տասնուհինգ տարի կայ՝ պզտիկ աղջիկ մը փարիզ բերուեցաւ, ու Մարնէի անուն Գերմանացի կնոջ մը հոգատարութեանը յանձնուեցաւ . . . . Աս յայտնի ու ստոյգ գործ մ'է կարծեմ, այնպէս չէ, պարոն ։ (Ֆէրան կը խոնարհի ։) Անցածը ևս նոյնպէս պիտի ըլլայ ։ (Ֆէրան նորէն կը խոնարհի ։) Երկու հարիւր հազար ֆրանգի գումար մը աս աղջկան ապրուստին համար դըրուեցաւ ան ատենը, որ երկու տարեկան էր . . . Աս ալ միւսերուն պէս յայտնի է կարծեմ ։ (Նոյն նշանը կը

ընկէ Ֆերան ։ Սառա երբեմն հոմբերտենը կը սկսի կորսնցընել ։ ) Վերջապէս, պարոն, օր մը, աղջկան վաւերականութիւնը հաստատելու համար հին և թանկագին աշխատութեամբ գործուած շղթայի մը նոյնպէս միտալի կէս մը Վարնէր կնոջ յանձնուած էին . . . բան մը չես խօսիր, պարոն ։

ՖԵՐԱՆ.

Ըսածներէդ բառ մը անգամ չեմ կորսնցըներ . . . Վարնէր կնոջ՝ հին և թանկագին աշխատութեամբ գործուած շղթայի կէս մը յանձնեցին, որմէ կախուած է միտալի կէս մը ։

ՍԱՌԱ.

Բոլոր ըսելիքդ ա՛ս է ։ Սակայն ինծի այնպէս կ'երեւի թէ այսպիսի իրաւացի իրաց առջև . . . անհնարին է որ հակառակը պնդես ։ ( Ֆերան անշարժ կը կենայ ։ ) Պարոն, կը հարցնեմ քեզ . . . կրնա՞ս ըսել թէ աս բոլոր ըսածներս կատարելապէս ճշմարիտ չեն ։

ՖԵՐԱՆ.

Տիկին կոմսուհի . . .

ՍԱՌԱ. հետ հետէ աւելի գրգռուելով.

Պարոն, երկու բառով հասկըցընեմ. ան աղջիկը, որուն վրայօք կը խօսիմ, հինգ տարեկան էր երբ անոր մահը իր մօրը իմացուցին, մահուան հարկաւոր եղած վկայագիրները ղրկելով . . . կը հասկնա՞ս, պարոն ։

ՖԵՐԱՆ.

Շատ աղէկ, տիկին կոմսուհի, խիստ կանոնաւոր գործ մ'է այս ։

ՍԱՌԱ.

Ո՛չ, պարոն . . . բոլորովին անկանոն, ինչու որ մահուան վկայագիրը կեղծ էր . . . աղջիկը մեռած չէր, այլ զան աներեւոյթ ըրած էին, Վարնէր անուն կինը կամ ըստ գիտցայ և կամ մեղսակից ըլլալով չգտնուեցաւ ։ Չի գիտցուիր թէ աղջիկը գտնելու ապացոյցները պահե՞ց թէ ոչնչացուց. սակայն . . .

ՖԵՐԱՆ.

Ո՛հ . ո՛չ, կը տեսնեմ, տիկին կոմսուհի, որ գործը խիստ ծանր է . . . ասկէ աւելի ծանր գործ չկրնար ըլլալ . . . կ'իմանամ թէ ինչու այդպէս խռոված ես ։ Կը տեսնեմ որ վկայագիրներու խաբէութիւն . . . և անձանց կորուստ տեղի ունեցեր են . . . Ասոնք արդարև յանցանք են ։

ՍԱՌԱ. բարկութեամբ մը ։

Ու աս յանցանքները գործողը դուն ես, պարոն, որպէս զի երկու հարիւր հազար ֆրանգին տէր ըլլաս ։ Բայց աս յանցանքները անպատիժ չի պիտի մնան. ինչու որ ես քու կեղծ դիմակդ երեսէդ պիտի քաշեմ հանեմ, ու քու ո՛վ ըլլալդ բոլոր աշխարհքի պիտի հրատարակեմ . . . եթէ իմ աղջիկս ինծի չվերադարձընես . . կը լսե՞ս, պարոն Ֆերան, ո՛վ պարկեշտ մարդ . . . Ի՞նչ մի կարծեր թէ ձեռքէս պիտի ազատիս, Սըր Թօմաս Աէյթըն քու մեղսակիցդ արդէն խոստովանեցաւ ձեր ըրած այս մեղքը ։

ՖԵՐԱՆ. որ բոլորովին շուարած կը մնար, յանկարծակի բարկութեամբ մէկէն ըսաւ. սա ներքին խօսքերուն վրայ՝ դէպ ի Սառա դարձ մը առաւ ։

"Ներեցէք, տիկին կոմսուհի, կը հաճի՞ք այդ անունը դարձեալ կրկնելու:

ՍԱՌԱ.

Սըր Թօմաս Մէյթըն... զոր դուն շատ աղէկ կը ճանչնաս:

ՖԻՐԱՆ. աշխուժիւ մը իր աթոռէն կելլէ, գրասեղանին գզրոցներէն մէկը կը բանայ, նամակ մը կ'առնու. պարագրութիւնը կը դիտէ, ու զարմացման ձայնով մը կ'ըսէ.

Նոյն աս է:

ՍԱՌԱ.

Ի՞նչ ըսել կուզես, պա՛րոն:

ՖԻՐԱՆ.

Ո՛հ, սոսկալի բան է:

ՍԱՌԱ.

Բայց, ըսէ՛ պարոն... այդ նամակը ի՞նչ է:

ՍԱՌԱ.

Ո՛չ, ո՛չ, տիկին... չեմ կրնար... խիստ դժուար պարագայ մ'է այս... Քիչ մը առաջ զարմացմամբ ձեր այսքան տարօրինակ ամբաստանութիւնները մտիկ կ'ընէի, ու ձեր սըխալմանց պատճառը իմանալու կ'աշխատէի, երբ յանկարծ աս նամակը միտքս եկաւ, զոր այս առտու ընկալայ:

ՍԱՌԱ.

Այս առտու:

ՖԻՐԱՆ.

Այո՛, և ես տարադէպ կատակի մը տեղ դրած էի զայն... բայց հիմա ինծի ըսածներէդ, տիկին, կ'իմանամ թէ գործը իրաւի կ'ելլէ.... կ'աղաչեմ, տիկին... իմ շփոթութեանս ներեցէք:

ՍԱՌԱ.

Պարոն, այդ նամակը ինչ որ կ'ուզէ, թող պարունակէ... ես զայն իսկոյն կարդալ կ'ուզեմ:

ՖԻՐԱՆ.

Ո՛չ, յանկարծ այսպիսի դէպք մը իմացընելը անգթութիւն է:

ՍԱՌԱ.

Պարոն, տուր կ'ըսեմ այդ նամակը:

ՖԻՐԱՆ.

Ո՛չ, թէ և այս գրութիւնը ձեր զրպարտիչ սխալմունքը իսկոյն պիտի ուղղէ, բայց և այնպէս ես չեմ համարձակիր...

ՍԱՌԱ.

Եթէ անիրաւութեամբ զքեզ ամբաստանեցի, իմ սխալմունքս պիտի ճանչնամ:

ՖԻՐԱՆ.

Կարկաւ կ'ուզէք:

ՍԱՌԱ.

Եղբօրս գիրն է...

ՖԻՐԱՆ. Նամակը ետ առնել ուզելով.

Եղբօ՞րդ կ'ըսէք... ո՛հ չեմ կըրնար համբերել որ աւելի առաջ երթաք:

ՍԱՌԱ.

Թո՛ղ, թո՛ղ: (կը կարդայ.) "Պա
" րոն, տասն և հինգ տարի կայ
" քու ձեռքդ քանի մը օրուան հա
" մար երկու հարիւր հազար ֆրանգի
" գումար մը յանձնեցի: Միայն
" այս պարագային մէջ, որ ինծի
" համար աղետալի ժամանակ մ'է,
" պարտաւորեցայ զձեզ իբր ինձ
" մտերմակից ընթադրելու աղջկան կո

“ բուստը, եղած գողուհը, կեղծ վկա֊
“ յագիր տալը և ամեն բան քու վը֊
“ րադ նետեցի, բայց անօգուտ տե֊
“ ղը, այսօր բոլոր իմ խորհուրդ֊
“ ներս ամէն կերպով պարապ ելան
“ ...ու փոխանակ աշխարհի առջև
“ ամօթահար ըլլալու, մեռնիլը նա֊
“ խամեծար կ'ընտրեմ....

Վայրկեան մը կը կենայ։

ՓԵՐԱՆ.

Ահա, ասոր համար էր որ ձեզմէ կը պահէի նամակը։

ՍԱՌԱ. նորէն կը կարդայ.

“Գոնէ իմ վերջին մտածմունքս “այն է որ այս ըրած զրպարտու֊ “թիւնս ուղղեմ, որպէս զի մեղացս “թողութիւն ընդունիմ”. (Քիչ մը ատեն լուռ կենալէն ետև.) կորսնցուցի վրէժխնդրութիւնս։

ՓԵՐԱՆ.

Հաւատացէք, տիկին, որ խիստ ցաւակից եմ ձեզ։

ՍԱՌԱ.

Չեմ կրնար իմ դժբաղդ եղբայրս յանդիմանել, թէպէտև ան է պատճառը...

ՓԵՐԱՆ.

Կ'աղաչեմ, ասոր վրայօք չխօսինք։ (Տեսնելով որ կոմսուհին աչքէն կ'ելլէ որ երթայ։) Աս լսածնիդ զձեզ անհանգիստ ըրաւ անշուշտ, հիմա դեռ մի՛ երթաք աս տեղէն... քիչ մը ատեն ևս տունս կենալու պատիւը ըրէք ինծի։

ՍԱՌԱ.

Ներեցէք, պէտք եմ, երթալ։

ՓԵՐԱՆ.

Գոնէ հրաման տուէք որ զձեզ մինչև ձեր կառքը տանիմ... եթէ ինձ պէտք ունենաք, պատրաստ եմ ձեզ ծառայելու։

ՍԱՌԱ.

Խիստ բարեսիրտ էք։

ՓԵՐԱՆ.

Հիմա իմ փորձառութեամբս ձեզ խրատ մը տամ։ փոխանակ խուզարկութիւն մը կամ հրատարակութիւն մը ընել տալու, որ ձեր դերդաստանին պատույն կը դպչի, աւելի խոհեմութիւն է, որ համարձակութիւն առնելով դատաւորի մը երթաք և հոն կրցածնուդ չափ...ո՛հ Աստուած, աղէկ գիտեմ թէ ինչ դժուար է այդ...կրնաք իմացընել այսպիսի դժբաղդ գործ մը յառաջ բերող իրաւացի պատճառաց մէկ մասը։ Աս կերպով, առանց ձայն հանելու գործը բոլորովին հեշտութեամբ պիտի շիջանի։

ՍԱՌԱ.

Իրաւունք ունիս, պարոն. թէև խիստ դժուար է այս գործը, սակայն 'ի գլուխ պիտի հանեմ։ Բայց դարձեալ կը կրկնեմ, պարոն, թէև այս մեր տեսութիւնը ամբաստանութեամբ ու բռնութեամբ սկսաւ, սակայն շնորհակալութեամբ և ներողամտութիւն խնդրելով կը վերջացընեմ։

ՓԵՐԱՆ.

Այդպիսի ժամանակի մը մէջ, խիստ մեծ վեհանձնութիւն մ'է որ ինծի կը մտածէք (զանգակը կը հնչեցընէ, ու—

Բուքը Մարային կը ներկայացնէ։ — Տիկին Բիբըլէն, որ ներս կը մտնէ.) Ճրագը բռնէ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ. պատուհանին մէջտեղէն կը ներսէն.

Օրիորդ Ֆլէօր տը Մարի, տիկին կոմսուհւոյն ճրագ բռնէ։

ՖԷՐԱՆ.

Ըսէք Պ. Ժէրմէնին որ կրնայ իր գործին պարապիլ։

---

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ. Ետքը՝ ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Կոմսուհիներ, իշխանազուններ կու գան կ'երթան հոս, շիտակը պէտք էինք գոռոզանալ՝ եթէ երէկ գիշեր պատահած գողութիւնը անպատուութիւն մը եղած չըլլար մեր տանը... բաւական չէ՞ր արդեօք Կապրիօն մը ունենալը, պէ՞տք էր որ չարագործ մ'ալ երևան ելլէր։ (Ֆլէօր տը Մարի ներս մտնելով, ճրագը ներս կը բերէ։) Ինկա՞ր, աղջիկս, խոստովանիմ թէ շատ բարեբաղդ ես, ինչու որ դռնապանուհին քու պաշտպանդ է, և քու ամենասիրելի օրիորդ Րիկօլէթ բարեկամիդ մօտ կը գտնուիս։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛հ, շնորհակալ եմ, տիկին։ Չէք կրնար հաւատալ թէ որչափ գոհ եմ հոս տեսածներուս և լսածներուս վրայ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Մտոյգը ան է որ, քեզի պէս երիտասարդ աղջկան մը՝ ասկէ աւելի աղէկ տուն մը չէր կրնար ըլլալ. հոս գրեթէ վանքի մէջ եղածի պէս պիտի ըլլաս... Բայց լսէ... ահա պարոնը որ վեր կելլէ... ու չսիրեր որ հոս շատախօսութիւն ընեն.... եկու սենեակդ քեզ ցուցընեմ.... բայց ես մոռցայ... Պարոն Ժէրմէն, կրնաք ձեր տեղը երթալ։

Տիկին Բիբլէ ներս կը մտնէ։ Ժէրմէն կը գրասեղանին առջև կը նստի, Ֆէրան ներսին կողմէն կը դիտէ Մորէլի առջևէն կ'անցնի։

---

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՖԷՐԱՆ. ՄՈՐԷԼ. ԺԷՐՄԷՆ.

ՖԷՐԱՆ.

Ներս մտէք, Պ. Մորէլ, պիտի պատուիրէի Բիբլէին որ աղաչէ ձեզ որ քովս գաք, երբ զձեզ անոր սենեակը տեսայ... բայց, ով Աստուած, ինչ իմացայ քեզի համար։ Ինչ պատահեցաւ։

ՄՈՐԷԼ.

Ափսո՜ս, ինչ որ ըսին՝ բոլորովին ճշմարիտ է։ Երէկ գիշեր ժամը տասն ու մէկին իմ գործատունէս վար իջայ, որ մեր բնակարանին վրայի յարկին ծայրն է, դեռ ադամանդը մը կտրելը նոր լմնցուցեր էի, դըղրոցի մը մէջ դրի ու սենեակիս դու-

ռը միայն բալլիքով կըպեյի, մինչ կրնայի գուշակել . . .

ՖԷՐԱՆ.

Անշուշտ հակառակը մտածելու է, աս ըրածդ անխոհեմութիւն մ'է, բայց համեստ մարդու մը անխոհեմութիւն. սակայն ինչպէս մարդ կասկածի . . . տունը այնչափ ապահով և այնչափ հանդարտ է. բայց ամէն տեղ փնտռեցի՞ր։

ՄՈՐԷԼ.

Ո՛հ, պարոն, ալ հիմա տարակուսելու տեղ չմնաց. եղածը գողութիւն մ'է։

ՖԷՐԱՆ.

Բայց աս քեզի համար մեծ կորուստ մ'է.

ՄՈՐԷԼ.

Ադամանդը երեք հազար ֆրանք կ'արժէ.

ՖԷՐԱՆ.

Բարեբաղդաբար ոսկերիչը այնպիսի վարպետ մ'է, որուն գործերը երկար ատենէ 'ի վեր դուն կը գործես, և կը յուսամ որ այս կորուստին կէսը ինքը պիտի քաշէ.

ՄՈՐԷԼ.

Ափսոս, ընդհակառակն, պարոն։ Աս քիչ ատենէ 'ի վեր գործի ըսկըսող երիտասարդ մը ըլլալով բան մը չկրնար զոհել. հազիւ թէ գլուխ կը ճանչնայ, գուցէ իմ հաւատարմութեանս վրայ կասկածի, ու իր պահանջմունքը խիստ կ'աճապարէ.

ՖԷՐԱՆ.

Հիմա ինչ պիտի ընես։

ՄՈՐԷԼ.

Այս առտուանէ 'ի վեր ամէն ջանք 'ի գործ դրի յուսալով որ կարենամ զինքը հանդարտեցընել։ Միշտ-հիւանդ կնոջս առողջութիւնը ձեռք բերելու համար դրամատունէն առած ստակիս վրայ աւելցուցի ն և տան ամենէն ընտիր կարասեացս գինը, զորոնք ծախեցի։ Ու այժմ ձեռքէս եկածը ըրի. թողուցի իմ տունս, որ երկու սենեակ ունէր, ու ամէնքս ալ վերին յարկը եղած գործատունս պիտի բնակինք, ու այսպէս 200 ֆրանք վարձ տալէ պիտի ազատինք։

ՖԷՐԱՆ.

Ո՛հ, Ճշմարիտ, աս ձեր ըրած զոհը ինծի խիստ մեծ արտմութիւն կը պատճառէ,

ՄՈՐԷԼ.

Սակայն՝ աս ամէն ըրածս դարձեալ չբաւեր։

ՖԷՐԱՆ.

Ինչպէս։

ՄՈՐԷԼ.

Բոլոր ունեցածս ծախելով, վեց հարիւր ֆրանքէն աւելի չկրցայ ժողվել. ոսկերիչը գոնէ կէսինը կը պահանջէ . . . ու իմ ըրած աղաչանացս խիստ և ահարկու սպառնալիքներով պատասխանեց։

ՖԷՐԱՆ.

Ասկէ ուրիշ ակնկալութիւն մը չունիմ.

ՄՈՐԷԼ.

Ամենևին։

ՖԷՐԱՆ.

Սակայն երկու օր առաջ երբ ձեր

սենեակը եկայ՝ գործի մը համար ձեզի հետ խօսակցելու, որ դժբաղդաբար չյաջողեցաւ, ինծի այնպէս երեւցաւ որ ան դժբաղդ կինը… ինչ է անոր անունը… ըստ որում երբէք չեմ կրնար միտքս բերել։

ՄՈՐԷԼ.

Տիկին Վառնէր զոքանչս, որ դժբաղդ դիպուած մը պատահելով յիմարցաւ, և իր էրկանը մահուանէ ետև զան մեր տունը առինք։

ՖԷՐԱՆ.

Ի՛նչպէս բարեսիրտ էք. բայց ինծի այնպէս կը թուի թէ անոր պարանոցը շղթայ մը տեսայ կէս մետալով մը, կարծեմ։

ՄՈՐԷԼ.

Այո՛, պարոն։

ՖԷՐԱՆ.

Ինչո՞ւ ան շղթան ալ չէք ծախեր որ ինծի թանկագին բան մը երեւցաւ։

ՄՈՐԷԼ.

Այն խեղճ կինը իբրեւ սրբոց մասունք կը պահէ զայն, որմէ ուրիշ կերպով ձեռք չձգուիր, բայց եթէ խաբելով կամ բռնութեամբ, ու այս բանն իրեն մահ է։

ՖԷՐԱՆ.

Բայց ինչ ցաւալի բան է այն որ ձեր տանը մէջ բնակի, այսպիսի դժբաղդութեան մէջ ըլլալնիդ տեսնէ, ու փոխանակ ձեզի յանձնելու, այնպէս խստիւ պահէ։ Հիմա քիչ մը առաջ բարեգործական ընկերութեան յիսուն ֆրանգ չտուի՞… ո՛հ, ինչ զարհուրելի բան, յիսուն ֆրանգ չէ քեզ հարկաւոր եղածը, այլ հինգ հարիւր ֆրանգ։

ՄՈՐԷԼ.

Ո՛հ, պարոն, երկնային պարգեւ մը պիտի ըլլայ ինծի։

ՖԷՐԱՆ, ինքնիրեն բարձր ձայնիւ։

Իրօք։ Արդեօք Աստուած զիս կը պատժէ, մարդիկ զիս կը բամբասեն։ (Մօրէլին) Հոս հինգ հարիւր ֆրանգ ունիմ որ իմս չէ, կրնամ ասոնք քեզ տալ քանի մը օրուան համար… իրաւունք ունիս, քանի մը օրը բաւական չէ, երկու ամիս պայմանաժամ դնենք, երեք ամիս թող ըլլայ… ինծի երեք ամսէն վճարելի պարտամուրհակ մը գրէ։ Պարոն Փէրմէն, զմռեալ թուղթ մը տուր։

ՄՈՐԷԼ, պարտաւորանօք։

Բայց… երեք ամսէն…

ՖԷՐԱՆ, զան նուաճեցնելով։

Չգիտի կարենաս վճարել և ո՛չ իսկ ես. բայց այնպիսի դժբաղդութենէ մը պէտք ազատիս, որ դուրէ երեք օր չի սպասէ։ Պայմանաժամը հասած ժամանակը թերհաշիւ բան մը կու տաս, ես ալ անշուշտ քիչ մը կունենամ… (երբ Մօրէլ գրել կ՚ուզէ.) Ներողութիւն մի՛ առներ, միայն ճերմակ թղթին տակը ստորագրութիւնդ դիր։ (Մօրէլ կը ստորագրէ, Ֆէրան կ՚առնու մուրհակը ու գրքոյկ մը մէջ կը դնէ.) ո՛հ, կըսես թէ, հարուստ չես, հարուստ չես։ Ահա աս հինգ հարիւր ֆրանգը քուկդ է։

ՄՈՐԷԼ.

Ո՛վ Աստուած, հաղիւ թէ կրնամ

հաւատալ . . . այդչափ սուտ . . . ո՛հ, ո՛րչափ ուրախ եմ։

ՖԼԵՐԱՆ.

Ո՛հ, իմ սիրելի Պ. Մորէլ, փոթորիկէն ետքը արեւու ճառագայթները կը փայլին։ Ասէ բնութեան օրէնքը։

ՄՈՐԷԼ.

Ես գիշեր բոլոր իմ ընտանիքս քեզ պիտի օրհնէ . . .

Դուռը կը զարնուի։

ՏԻԿԻՆ ԲԻԲԻԼԷ. Ֆլէօր տը Մարիին ձեռնէն ներս մտնելով.

Ահա աս սիրելի աղջիկը տեղաւորեցինք։

ՖԼԵՐԱՆ. ժամացոյցը նայելով.

Ժամանակը անցեր է, Պ. Ժէրմէն։ կրնաս ալ քաշուիլ։ — Տիկին Բիբլէ, դրսէն բոլոր փեղկերը գոցէ։

Ժէրմէն և Տիկին Բիբլէ դուրս կելլեն։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՖԼԵՐԱՆ. առանձին։

Բոլոր դուռները, պատուհանները քննէ և վարագոյրը կը գոցէ։

Ահա մինակ մնացի. օրը լմնցաւ, չարագործութեան դիմակ մը դիմացս վրայ ծանրացած էր, և կեղծաւորութեան քող մը բոլոր շարժմանցս վրայ կը տիրէր. ուստի այս ժամուս հանեմ իմ դիմակս երեսէս, ու ինքզինքս գտնեմ . . . Ազատեցայ այն դիմակէն որ ամեն օր աչացս առջեւէն չհեռանար։ Ուժեղ եմ, աներկիւղ և հանդարտ։ Նուանգս զիս կը բորբոքէ . . . ինչպէս պիտի հանդարտեցնեմ արեանս եռալը։ Ոսկի՛, ոսկի՛, այո՛, ոսկի կ'ուզեմ, որ ոտքիս տակը առնեմ աս անմիտներուն խումբը՝ որ կը խաբեմ և կ'անարգեմ։ Թօմ Մէյթընը սպաննեցի, ու իր քոյրը ինծմէ ներողութիւն խնդրեց և շնորհակալ եղաւ։ Աս Մորէլը կ'ուզեմ որ իմ իշխանութեանս տակը ըլլայ. կ'ուզեմ որ ան շղթան և մատը ինծի տայ, որոնք այնպիսի գոյութեան մը վերջին ապացոյցներն են, որ զիս կը նեղեն և ես զանոնք գրեթէ ոչնչացուցի, կեղծ փոխատուութիւն մը ընելով, որ իր ազատութեանը պայմանաժամը կ'որոշէ, ու Մորէլ զիս իր բարերարը կը կոչէ։ Յիմարներ, յիմարներ, երկիցս յիմարներ։ Հապա աս Ֆէրմօնը ինչ ընենք, որ անշուշտ իմ քովս աւանդ թողուլ կ'ուզէ իր ոսկիները։ (Ֆերան պահարանին մէջ ծալլուած թուղթ մը կը բանայ ու անկէ դեղին ծրարակ մը դուրս կը հանէ.) Աս ո՛րչափ ոսկի է, և ինչպէս գեղեցիկ, ոսկիէն գեղեցիկ ինչ կայ։ Արեգական ճառագայթները ասոր քով մութ են . . . անկէ զատ այս մետաղը ինչ զարմանալի ձայն մը ունի որ կըսէ. « Ոսկին ամեն բան կընէ, ոսկին ամեն բան կրնայ, ոսկին ամեն բան կու տայ։ (Մատները ոսկի տոպրակին մէջ կը դնէ։) Ո՛հ, որչափ կը սիրեմ ոսկիի հետ խաղալը . . . երբ ձեռքերս աս ոսկիին կոյտին մէջ կը դնեմ, չեմ գիտեր ինչ ելեքտրական հեշտութիւն մը երակներուս մէջ

կը մտնէ ու ինծի նոր յուզմունք մը կու տայ և կը տոչորէ զիս . . . Բերէք , բերէք , անմիտներս , ուրիշ ալ բերէք ։ Բերէք իմ առաքինութիւնս, բերէք իմ կեղծաւորութեանս , բերէք մինչև նոյն օրը որ պիտի ըսէք. Էտ տուր մը ոսկին . . . Ձեզ կու տամ ։ Դժոխային խաբեբայութեամբ մը կամ աներկիւղ մեղք մը գործելով պիտի պատասխանեմ անոնց ։ Ն'տ տամ, ինչ, իմ անցեալ ուրախութիւններս , իմ ապառնի երջանկութիւնս ձեզ տամ . . . Փլէօր տը Մարի այնքան գեղեցիկ է . ամեն անգամ որ այս բակին մէջ երգելու կու գար , աս պատուհանին եաևը մօտիկ կ'ըլլէի , և կը զմայլէի անոր ձայնին վրայ , և անոր գեղեցկութիւնը սիրտս կը յափշտակէր . եաքը' գիշերը զան երազիս մէջ կը տեսնէի ու երգելը կը լսէի . . . Եւ երբեմն ցորեկ տանն խիստ ստիպողական գործեր ունեցած միջոցիս անգամ, ինչ տանն պէտք էի բոլոր խելքս վրաս ունենալ , անոր յիշատակը ակամայ վրաս կը տիրապետէր , ու միտքըս կը յափշտակէր ։ Աս աղջկան վրայ ունեցած սիրոյս բնութիւնը ինծի սաստիկ վախ կը պատճառէ ։ Ոսկիները տեղը դնեմ . . . ու Փլէօր տը Մարին կանչեմ ։ (Ձեռքը զանգակին կ'երկնցընէ ։) Տարօրինակ բան մ'է այս , սիրտս կը բաղխէ . . . ձեռքս կը դողայ ։ (Կը հնչեցնէ .) Հիմա պիտի գայ , անգամ մը ևս այս գիշեր ալ դիմակը երեսս դնեմ ու խօսքերուս մէջ մեղր կաթեցընեմ . . .

## ՏԵՍԱՐԱՆ Զ։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ . ՓԵՐԱՆ .

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ .

Զիս կանչեցիք , տէր իմ ։

ՓԵՐԱՆ .

Այո , աղջիկս . . . սեննակդ ցոյց տուի՞ն քեզ ։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ .

Այո , պարոն ։

ՓԵՐԱՆ .

Մօտ եկուր , զաւակս , միթէ կը վախնաս ինծմէ ։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ .

Ո՛չ , ո՛չ , պարոն , դուք բարեհաճեցաք զիս ձեր ծառայութեան մէջ առնուլ , ու զիս իմ խղճալի վիճակէս ազատեցիք , որ ալ չէի կըրնար դիմանալ , ու ես հիմա աշխատասիրութեամբս պիտի ջանամ քեզ հաճելի ըլլալու ։

ՓԵՐԱՆ .

Արդէն ինծի հաճելի եղած ես , սիրելի պզտիկ , բայց օրէ օր կրնաս աւելի աչքս մտնել ։ Անոր համար ոչ միայն եռանդեամբ ծառայութիւն ընել պէտք ես , այլ և համոզուած ըլլալու ես որ քու բաղդդ ինծմէ կախեալ է . . . բաւական է որ ես շնորհակալ ըլլամ , զիս ամեն բանի մէջ գոհ ընես , ու գուն բոլորովին երջանիկ պիտի ըլլաս ։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ .

Անտարակոյս , տէր իմ , միշտ իմ պարտքս պիտի կատարեմ ։

ՖԷՐԱՆ.

Ես լսել կ'ուզէի... նաև աղէկ հասկցիր զաւակս, ...որ ծնողք չունեցող աղջիկ ծառան բոլորովին իր տիրոջմէն կախեալ է. Ենթադրենք թէ, պատճառի մը համար քեզմէ գժգոհ ըլլալով, զքեզ քովս չպահեմ, ո՞ւր պիտի երթաս, եթէ քեզ գէշ վկայագիր մը տամ։ Ամենեւին տեղ մը չես կրնար մտնել, ու ան ժամանակը, կը լսե՞ս, թշուառութեան մէջ կ'իյնաս, այնպիսի թշուառութեան մը՝ որ ամենեւին գըթութիւն չկաներ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛հ, պարոն, մի՛ կարծէք որ ես յանցանք մը գործեմ... Գուցէ ակամայ պակասութիւն մը ընեմ։

ՖԷՐԱՆ.

Քեզ համոզել կ'ուզեմ, զաւակս, որ ամեն մէկ պարագայի մէջ, և որ և իցէ կերպով պէտք չես զիս դժգոհ ընել. վասն զի ես զօրաւոր եմ և դուն տկար, ես ծանօթ եմ և դուն անծանօթ, և ան ատեն դուն կը կորսուիս։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛վ Աստուած իմ, ի՞նչ կ'ըսէք, տէր իմ։

ՖԷՐԱՆ. յոյզը տաղտկացնելով։

Ի՞նչ ունիս, ինչու կը դողդղաս, ո՛հ, հոգ մ'ըներ. նախ և առաջ քեզ վախցընող խօսքեր ընել պէտք էի. բայց եթէ դուն պարկեշտ և հնազանդ ըլլաս...

Կ'ուզէ իրեն մօտենալ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, ինքն իրեն.

Ո՛հ, հիմա աւելի կը վախցընես զիս։

ՖԷՐԱՆ. ինքնին.

Ֆլէօր տը Մարի. (դողդողէն ձայնը կը հնչեցընէ.) Անիծեա՛լ ըլլայ սա եկողը։ (Ֆլէօր տը Մարիին.) Կեցիր... մի՛ բանար։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Բայց, պարոն...

ՖԷՐԱՆ.

Կը հասկընա՞ս ըսածս։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Հիմա ի՞նչ պիտի ըսեն։

ՖԷՐԱՆ.

Թէ սենեակս գացած եմ, ու կը հանգստանամ և դուն չես լսեր. (Զանգակը աւելի ստէպ կը հնչեցընեն.) Ո՛հ, դժոխք։ (Նորէն կը զարնեն.) Գնա՛, բաց։ (Ֆլէօր տը Մարի դուռը կ'երթայ։) Ես ժամուս ո՛վ կրնայ գալ. կայծակը զարնէ սա մեզ անհանգիստ ընողը։

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ՆՈՅՆՆԵՐԸ. ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Ետքը՝ ՌՈՏՈԼՖ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ. Ֆլէօր տը Մարիին։

Ո՛հ, նե՛րէ, քիչ մը աւելի թեթեւաշարժ չէի՞ր կրնար ըլլալ...

ՖԷՐԱՆ.

Կարծեմ թէ արդէն քեզ ըսի որ ամենեւին մէկու մը դուռս չպիտի բանաք։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Այո՛, բայց 'ի Նորին Բարձրութենէն՝ ըսիր։

**ՖԷՐԱՆ.**

Իշխանազո՞ւնն է ։

**ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.**

Նոյն ինքը։ Մէթրը տ'Էքօլ իսկ որ այս առտուանէ 'ի վեր արբեցողութենէ գլուխը չվերցուց, ու վարը տակն ու վրայ կ'ընէ, չէր թողուր որ կառքը կենայ։ Ահա՛ Նորին Բարձրութիւնը։ (Ռօտօլֆ ներս կը մտնէ.) Ո՛հ, դուն ես, իմ այս առտուան վարձու սենեակ ուզող պարոնս։

**ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.**

Իշխանազո՞ւն մ'է աս ։

**ՌՕՏՕԼՖ.** *Ֆլէօր տը Մարիին։*

Քեզ խօսք տուած էի թէ պիտի գամ։

**ՖԷՐԱՆ.**

Ի՛նչպէս, զան կը ճանչնա՞յ արդեօք ։

**ՌՕՏՕԼՖ.** *Ֆէրանին։*

Ներեցէք, պարոն, թէև դեռ կանուխ է, բայց կը վախնամ որ ձեզ նեղութիւն տուած չըլլամ։ Կրնա՞մ քանի մը խօսք ըսել։ (Ֆէրան նշան ընելով, Ֆլէօր տը Մարի և տիկին Բիբլէ կը հեռանան.) Պարոն, երկու գործի համար ձեր քովը եկած եմ... Նախ չափաւոր ամսական մը կ'ուզեմ կապել բարի մարդու մը, որ իմ կեանքըս ազատեց... Հոս ժամադիր եղայ անոր, ու կ'աղաչեմ զձեզ որ այս փոքր պայմանադրութիւնս հաճիք կարգի դնել։

**ՖԷՐԱՆ.**

Պատրաստ եմ ձեր հրամանները կատարել, տէր իմ։

**ՌՕՏՕԼՖ.**

Երկրորդ առաջարկութիւնս աւելի ծանրակշիռ է. տեսաք որ կը ճանչնամ ես այն աղջիկը որ, ինչպէս իմացայ, քանի մը ժամէ 'ի վեր ձեր ծառայութեանը մէջն է ։

**ՖԷՐԱՆ.**

Այո՛, տէր իմ։

**ՌՕՏՕԼՖ.**

Զանազան պարագաներ ինծի այնպիսի զգացումներ ազդեցին, որ կը յուսամ թէ անպտուղ չպիտի մնան։ Բայց միայն այս ժամուս իմացայ թէ այս որբևարին որու ձեռք անցեր է ։

**ՖԷՐԱՆ.**

Շատ գոհ եմ, որ զան իմ տունս առի ։

**ՌՕՏՕԼՖ.**

Բայց կարելի է որ զան ու զան խնդրեն և գուցէ դուք հարկադրիք թողուլ զան որ տանին ։

**ՖԷՐԱՆ.** *ծածուկ անհանգստութեամբ մը։*

Պատրաստ եմ, տէր իմ։

**ՌՕՏՕԼՖ.**

Կ'ուզեմ զան խուզարկութիւններէ հեռու պահել։

**ՖԷՐԱՆ.**

Ձեր Բարձրութիւնը կը ներէ՞ ինձ որ քանի մը հարցում ընեմ իրեն ։

**ՌՕՏՕԼՖ.**

Խօսեցէ՛ք, պարոն ։

**ՖԷՐԱՆ.**

Ձեր Բարձրութիւնը զան իր հետ տանիլ կ'ուզէ ։

**ՌՕՏՕԼՖ.**

Այս գիշեր իսկ ։

ՖԵՐԱՆ.

Ես ո՛ւր տանելու միտք ունի զան Ձեր Նորձրութիւնը:

ՌՈՏՈԼՖ.

Իմ տունս:

ՖԵՐԱՆ.

Ներեցէք, տէր իմ, իմ համարձակութեանս. ձեր գթասրտութիւնը ինձ հաղորդելով՝ անշուշտ, թէև անուղղակի կերպիւ, մաքրընիդ զիս իշխանական կամապաշտութեան մը մեղսակից ընել չէր...

ՌՈՏՈԼՖ.

Այդպիսի կասկածներ չէք կրնար ունենալ:

ՖԵՐԱՆ,

Բայց, տէր իմ, ձեր այս պաշտպանութենէ շահ մը չունենալնիդ ինծի պէս հաւատալ չկրցողները խիստ դատողութիւն մը պիտի ընեն, ինչպէս սովոր է ընել հասարակ ժողովուրդը, զո՛ր դուք ինձմէ աւելի աղէկ կը ճանչնաք... փողոցի երգեցիկ աղջիկ մը իշխանազունի մը տուն ...ո՛հ, ինչ անվայել բան. բայց այս ողորմելի աղջիկը ձեր՝ իրեն ըրած բարեացը փոխարէն պիտի կրրնա՞յ ընել:

ՌՈՏՈԼՖ.

Խելացի և խոհեմ մարդու դատողութիւն է այդ, և ես մաիկ կ'ընեմ ձեզ:

ՖԵՐԱՆ.

Բայց ձեր պաշտպանած աղջիկը պիտի չթողո՞ւք:

ՌՈՏՈԼՖ.

Ամենևին... Եթէ ան թշուառականները իմացած ըլլային աղջկան հոս գտնուիլը, հաւատացէք որ ամենևին անպատեհած չպիտի համարէի զան հոս թողուլը:

ՖԵՐԱՆ.

Բայց անոր տեղը չե՞նք կրնար փոխել արդեօք:

ՌՈՏՈԼՖ.

Ի՞նչպէս:

ՖԵՐԱՆ.

Մէն Մանտէ գիւղին մէջ տուն մը ունիմ. կրնամ գոնէ քանի մը օրուան համար, Ֆլէօր տը Մարին հոն տանիլ, իսկոյն վաղը... այս գիշեր իսկ:

ՌՈՏՈԼՖ.

Ես չհամարձակեցայ աս բանս ձեզմէ խնդրելու:

ՖԵՐԱՆ.

Ուրեմն ինձ հրաման տուէք որ առանց ուշանալու այս գործը կատարեմ:

Զանգակը կը հնչեցնէ. Տիկին Բիբլէ և Ֆլէօր տը Մարի ներս կը մտնեն:

ՌՈՏՈԼՖ. Ֆլէօր տը Մարիին.

Աղջիկս, այս գիշեր աս տունէն պէտք ես հեռանալ:

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ե՞ս, տէր իմ:

ՖԵՐԱՆ. Տիկին Բիբլէին:

Բսէ էրկանդ որ երթայ կառք մը բերէ ինձ:

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ, դուրս ելնելով.

Այս ինչ զարմանալի բաներ են:

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Տէր իմ, ո՞ւր պիտի երթամ:

ՌՈՏՈԼՖ.

Պ. Ֆէրանի գիւղի տունը:

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ձեզի՞ հետ, տէր իմ:

ՌՕՏՕԼՖ.

Ո՛չ, առանձին, պարոնին հետ.

ՖԷՐԱՆ, Ֆլէօր տը Մարիին։

Կը յիշե՞ս, աղջիկս, քիչ մը յառաջ քեզ տուած խրատներս․ ․ ․ (փոքրը աղաչանքներ կը լռեցնէ.) Ի՞նչ կայ հոն։

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՆՈՅՆՔԸ. ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ. ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ. ետքը՝ Պ. ԲԻԲԼԷ. և ՇՈՒՐԻՆԷՕՐ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ, վախով ներս մտնելով։

Ճշմարիտ՝ աշխարհս կը դողացնէ. կը լսէ՞ք, կը լսէ՞ք։

ՖԷՐԱՆ.

Բայց ո՞վ է ան։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Դռան քով աղմուկ կը հանէր. երբ լսեց ըսելս թէ՝ Ալֆրէտ, դնա՛ կառք մը փնտռէ Ֆլէօր տը Մարին տանելու։ — Ֆլէօր տը Մարին տանի՛լ ըսիք, պոռաց։

ՌՕՏՕԼՖ.

Բայց որո՞ւ խօսքը կ'ընես։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԷ.

Որո՞ւ խօսքը, նայէ․ ․ ․ Մէթրը տ'Էքօլի։

Ֆլէօր տը Մարի վախնալով Ռօտօլֆի քով կը պատսպարուի։

ՖԷՐԱՆ, Մէթրը տ'Էքօլին.

Ի՞նչ կը խնդրես։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, արհեստով, բայց առանց յանդգնելու. մէյն իր ձայնը աւելի հաստ և իր մարմինը կը տատանի իր երկու-մէջան փոփոխը դէպ մը պէտք կը պատճառէ իր վրայ։

Ոչինչ, բայց չէի ուզեր, ամենքդ ալ աղէկ կը լսէք, չէի ուզեր որ Ֆլէօր տը Մարին ասկից դուրս հանեն։

ՖԷՐԱՆ, Մէթրը տ'Էքօլին։

Բայց անշուշտ պիտի հրաման տաս որ իմ հետս գայ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, դէպ ի Ֆլէօր յառաջանալով.

Դուրս չպիտի ելլէ։

ՖԷՐԱՆ, մեղմով. բարեկամաբար մը։

Բարկութիւնս գլխս կը զարնէ։

ՌՕՏՕԼՖ, Մէթրը տ'Էքօլին։

Ի՛նչ, իր տիրոջը հետ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Եթէ այդպէս է, ինծի տուէք, ես զան տունս պիտի տանիմ։

Ֆլէօր տը Մարիին վրայ կը նետուի, ու ան Ռօտօլֆի քով կ'ապաստանի։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, Ռօտօլֆին։

Ազատէ զիս անոր ձեռքէն։

ՌՕՏՕԼՖ.

Ե՛տ քաշուէ, թշուառական։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Վերջը դէշի պիտի երթայ։

ՌՕՏՕԼՖ, յառաջանալով։

Անոր չպիտի դպչիս։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Չպիտի՞ դպչիմ։

Ռօտօլֆի վրայ կը յարձակի, որ ոտքով մը կը հրէ զան. Մէթրը տ'Էքօլ մէկ ծունկին վրայ գետինը կ'իյնայ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, ոտք ելլելով։

Դուն չե՞ս գիտեր որ երբ արբեցած ըլլամ, դիմացս վեց հոգի կ'ուզեմ․ ․ ․

ՇՈՒՐԻՆԷՕՐ, ներս մտնելով։

Ես ալ՝ եօթը հոգի, երբ բարեկամացս օգնութեան կը հասնիմ։

Մէթրը տ՚Էքօլը կը բռնէ և ուժովին կը սեղմէ։

ՄԻԹՐԸ Տ՚ԻՔՕԼ.

Շուրինէօր, թո՛ղ զիս։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Պարոն Ռօտօլֆ, գիտեմ, վերջին անգամուան պէս բռունցքներ իջեցընելով... պիտի յաղթէիր անոր.... բայց ձեռքերդ պիտի աղտոտէին։

ՌՕՏՕԼՖ, Շուրինէօրին։

Շնորհակալ եմ, բարեկամ։ (Փէբռնէն) փախիր, Ֆլէօր տը Մարին հետդ տար։ (Ֆլէօր տը Մարիին.) Ամենևին մի՛ վախնար։

ՓԻՐԱՆ, ինքնիրեն. Ֆլէօր տը Մարին հետը տանելով։

Աս աղէկ է, աղջիկը ինծի տալու համար իրարու հետ կռուեցան։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Շնորհակալ եմ... ազատեցայ ալ։

ՄԻԹՐԸ Տ՚ԻՔՕԼ.

Շուրինէօր, վրէժս պիտի հանեմ քեզմէ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ, Մէթրը տ՚Էքօլին։

Մարէլէնը երբեք եթէ կը հաճիս, բայց տեղէդ մի՛ շարժիր։



# ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

## ՊԱՏԿԵՐ ՉՈՐՐՈՐԴ · — ՐԻԿՕԼԷԹԻ ՍԵՆԵԱԿԸ ·

Րիկօլէթի սենեակը։ Ամէն կողմ կարգ, կանոն եւ մաքրութիւն կը տեսնուի։ Կրակարան մը՝ վրան ծաղիկներ եւ ըզգալի ժամացոյց մը։ Ննջարան մը՝ վարագոյրներով, որուն աջ կողմը դամիջան մը։ Սեղանի մը վրայ դերձանիկներ ու վանդակ մը։ Ձախ կողմը՝ դուռ մը որ նիգով մը կը գոցուի։ Աջ կողմը՝ սանդուխին դուռը։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՐԻԿՕԼԷԹ. առանձին։

Սեղանի մը առջեւ նստած է, ու ծախսագրքով ձեռքին ծախսատետրի մը վրայ կը գրէ.

Հիմա հաշուենք. Մայիս ամսոյ վարձք՝ տասն երկու ֆրանք. մէկ մուշտակ՝ երկուք ու կէս ֆրանք... ծաղկանց երկու աման՝ վեց սու... Ահա զուարճանքի համար ըրած ծախքերս...

ՏԻԿԻՆ ԲԻԲԷԼ.

Կրնամ ներս մտնել։

### ՏԵՍԱՐԱՆ Բ·

ՐԻԿՕԼԷԹ. ՏԻԿԻՆ ԲԻԲԷԼ.

ՐԻԿՕԼԷԹ.

Բարի լոյս, տիկին Բիբէլ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԷԼ.

Բարի լոյս, օրիորդ Րիկօլէթ, ահա քու փոքրիկ հացդ։

ՐԻԿՕԼԷԹ.

Շնորհակալ եմ, տիկին Բիբէլ, խիստ բարի էք։

ՏԻԿԻՆ ԲԻԲԷԼ.

Իմ գործիս համար վեր կ'ելլէի, սակայն խիստ գոհ եմ այսպէս առտու ձեզ տեսնելուս, ինչպէս որ առոյգ, մաքուր և զուարթ էք։ Աս բանս պզտիկութիւնս կը յիշեցնէ ինծի, Ալֆրէտի կինը ըլլալէս առաջ.

ՐԻԿՕԼԷԹ. ամէն բան խորհրդաւորելէ ետև.

Ի՞նչ նոր լուր ունիս, տիկին Բիբէլ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԷԼ. նստելով.

Բան մը չկայ. երեք ամիսէ 'ի վեր աս խեղճ Պ. Ֆէրանը ոտքի վրայ կը մաշի, լիմոնի պէս կը դեղնի,

ու Ճերմակ նապաստակի մը պէս աչ- քերը կարմրեր են. մարդ չգիտեր թէ ինչ պատահեցաւ իրեն ։ Ստու- գիւ՝ ա՛լ նոյն մարդը չէ ։ Միւս օ- րը, հաւատա՛ ինձ, առանց ձայնի իր սենեակը մտայ. ծունկի վրայ ե- կած էր, ու կու լար, Ճշմարիտ կ՚ը- սեմ, կու լար, ու կ՚ըսէր. Եկո՛ւր, եկո՛ւր, եկո՛ւր ։

ՐԻԿՕԼԷԹ.

Որո՞ւ կ՚ըսէր որ գայ ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Ո՛հ, չեմ գիտեր, բայց Մէթրը ա՚նկօլին չէ ըսածը, որ երկու կամ երեք օրը անգամ մը կու գայ, կը- ուխ կ՚ընէ և կը յանդիմանէ զինքը՝ փլէօր տը Մարին յափշտակելուն համար ։

ՐԻԿՕԼԷԹ.

Խեղճ փլէօր տը Մարի... ի՞նչ եղաւ, ո՞ւր է... Արդարև աս տար- օրինակ բան մ՚է ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Այո՛, խիստ տարօրինակ... շատ աղէկ ըսիր... դեռ աչքիս առջևն է այն օրը, երբ Պ. Փէրան զան Սէն Մանտէ պիտի տանէր... լալով իշ- խանազունին ականջը երկու խօսք ը- սաւ, ու իսկոյն... փոխանակ կառքը հեծնելու... մէկ մ՚ալ նայիս՝ իշխա- նազունին հետ մեկնեցաւ բազմաթիւ ծառաներով շրջապատեալ ։

ՐԻԿՕԼԷԹ.

Շատ աւելի աղէկ եղաւ, չիտակը խոստովանել պէտք է... կը յիշե՞ս քու Պ. Փէրանիդ երեսը, հէ՞...

(Ոտնաձայնով ։) Քիթը...

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Սոյդ է որ ուրախ չէր... Բայց որչափ ցաւալի է աս խեղճ Մօրէլէ ընտանեաց դժբաղդութիւնը... Ա- ղամանդը գողցուելէն 'ի վեր՝ զոր- ծերնին աւելի գէշ գնաց ։ Առաջ ինչպէս երջանիկ և ինչպէս հանգիստ էին, բայց հիմա վերնայարկը բնա- կելու ստիպուեցան... Ծեր Մօրէ- լը՝ ամէն բան ծախելէ ու դրաւ դնե- լէ ետև՝ ինքն ալ հիւանդացաւ... հիմա ոսկերիչը անորմէ իր տանելի- քին կէսը առած է, ու միւս կէսն ալ կը պահանջէ... խեղճերը ամէն կող- մանէ զրկուած են, և երկու փոքր տղայքը գրեթէ կիսամերկ են և անօ- թութենէ կը տանջուին ։ Բայց ո՞վ է դուռը զարնողը ։

ԺԵՐՄԷՆ. դուրսէն.

Ես եմ։

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Ո՛հ... Պ. Ժէրմէնն է, որ չուզեր միւս կողմէն դառնալ, ու կ՚ուզէ որ այս արգիլեալ դռնէն մտնէ... բա- նա՛մ դուռը ։

ՐԻԿՕԼԷԹ.

Բա՛ց... բա՛ց...

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՅՆԵՐԸ, ԺԵՐՄԷՆ.

ԺԵՐՄԷՆ.

Բարի լոյս, օրիորդ Րիկօլէթ, կարելու համար ինձ տուած զրիչ- ներդ բերի ։

ՐԻԿՕԼԷԹ.

Աղէկ ատեն հասար... կ'ուզե՞ս քիչ մը գրել... քու գեղեցիկ գիրդ իմ գրքիս պատիւ է: Միայն երկու յօդուած մնաց գրելու, խաղողի համար երկու տող, և ջուրի աման մը...աւելցուր ամսականս ալ:

ՏԻԿԻՆ ԲԻԲԼԻ.

Ես Ալֆրէտիս քով երթամ, մէկ ժամէն աւելի է որ սանդուղքին վրայ եմ, ստոյգ եմ, ստոյգ եմ որ ինծի համար անհանգիստ եղած է, մնաս բարեաւ, օրիորդ Րիկօլէթ.

ՐԻԿՕԼԷԹ.

Երթաք բարեաւ... տիկին Բիբլէ... երթաք բարեաւ...

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՐԻԿՕԼԷԹ. ԺԷՐՄԷՆ.

ԺԷՐՄԷՆ.

Վերջապէս, ահա մինակ մնացինք:

ՐԻԿՕԼԷԹ.

Է՛, ինչ կ'ըլլայ՝ եթէ մինակ մնանք:

ԺԷՐՄԷՆ.

Ան կ'ըլլայ որ կրնամ քեզի հետ խօսակցիլ:

ՐԻԿՕԼԷԹ.

Ադ ինչ խօսք է, մի՞թէ ուրիշի առջև ըրած խօսքերնիս՝ խօսք չեն սեպուիր:

ԺԷՐՄԷՆ.

Անշուշտ, բայց բաւական չեմ խօսիր:

ՐԻԿՕԼԷԹ.

Շատ աղէկ. անտարակոյս՝ զուարճալի խօսքեր պիտի ընես. ուրեմն կարս առնում ու քեզ մտիկ ընեմ:

ԺԷՐՄԷՆ.

Ո՛չ, կ'աղաչեմ, օրիորդ Րիկօլէթ, առանց կատակի խօսինք:

ՐԻԿՕԼԷԹ.

Այո՛, առանց կատակի... ուրեմն զուարճալի խօսքեր չպիտի խօսիս: (Դերձան կծկել ուզելով.) Ձեռքերդ ինծի երկնցուր, քիչ մը քեզ պիտի աշխատցընեմ:

ԺԷՐՄԷՆ.

Օրիորդ Րիկօլէթ, կը սիրեմ զքեզ:

ՐԻԿՕԼԷԹ.

Հապա ե՛ս:

ԺԷՐՄԷՆ.

Կը սիրե՞ս զիս:

ՐԻԿՕԼԷԹ.

Անտարակոյս. դուն բարի, պարտաւորող և քաղցր երիտասարդ մ'ես ...կրնա՞մ զքեզ չսիրել:

ԺԷՐՄԷՆ.

Բայց ըսէ ինծի ճշմարիտ, ո՛չ, ճշմարիտն ըսէ, ինչպէս զիս կը սիրես:

ՐԻԿՕԼԷԹ.

Ճշմարիտ, ճշմարիտ, քեզ իբր ազնիւ դրացի մը կը սիրեմ:

ԺԷՐՄԷՆ.

Բայց իմ ուզածս այդ չէ. ես կ'ուզէի որ իբր սիրահար սիրես զիս:

ՐԻԿՕԼԷԹ.

Իբր սիրահա՞ր, ո՛չ, աս զարմանալի բան է, այդպիսի գաղափար մը ո՞ւստի ունեցար, իբր սիրահա՞ր, ո՛չ, մի՛թէ ես այդպիսի բանի ժամանակ ունիմ:

ԺԻՐՄԷՆ.

Այս բանիս համար ժամանա՛կ պէտք է։

ՐԻԿՕԼԷԹ.

Անտարակոյս. պէտք ես գիտնալ որ ինծի համար ժամանակը ամեն բան է...ո՛հ, բաւական է որ քեզմէ նախանձիմ, և սրտիս ցաւ մը պատճառես. ինչ կը կարծես, միթէ ես այնքան ստակ կը վաստկիմ, որ քեզի համար լալով և ցաւով երկու երեք օր կորսնցընել կարենամ, և յուսահատութեան մէջ իյնամ՝ եթէ զիս խաբես...Ահա այս հարուածը չընդունելու համար աս բանէն բոլորովին ետ կենալ կ'ուզեմ...

ԺԻՐՄԷՆ.

Բայց ես կ'ուզեմ որ զիս սիրես, միտքս քեզ էրիկ ըլլալ է։

ՐԻԿՕԼԷԹ.

Ինձ էրի՛կ ըլլալ. բայց դուն ինծի պէս աղքատ ես։

ԺԻՐՄԷՆ.

Ծերունի հօրեղբայր մը ունիմ, որ ինծի գոնէ հազար թալեր պիտի թողու։

ՐԻԿՕԼԷԹ.

Հազա՛ր թալեր, շատ աղէկ. բայց հիմա բան մը չ'ունինք։ Խայէ Մորէլը... ինչ թշուառութեան մէջ ինկած է։

ԺԻՐՄԷՆ.

Բայց եթէ հիւանդանաս, ինչպէս պիտի աշխատիս։

ՐԻԿՕԼԷԹ, ծիծաղելով.

Ե՞ս հիւանդանամ, զարմանալի բաներ կ'ըսես...Հա՛, հա՛, որո՞ւն համար կ'ուզես որ հիւանդանամ։ Անօթեցած ատենս կ'ուտեմ, ծարաւցած ատենս կը խմեմ, թռչնիկի մը պէս կը քնանամ, արտուտի մը պէս կ'երգեմ. ձեռքս կար ունիմ, տասնևութ տարեկան եմ...սիրտս՝ ազատ, եւ՝ ուրախ և զուարթ... այսպիսի վիճակի մէջ եղողը կը հիւանդանա՞յ երբէք։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՆՈՅՆԵՐԸ. ԲԻԲԼԷ.

ԲԻԲԼԷ.

Ո՛հ, օրիորդ Րիկօլէթ, աթոռ մը տուր կ'աղաչեմ, աթոռ մը տուր։

ՐԻԿՕԼԷԹ.

Ո՛հ, Աստուած իմ, պարոն Բիբլէ. ինչպէս գոյնդ նետեր է։

ԲԻԲԼԷ.

Օրիորդ, հրէշը հիմա իմ տնական հանգստութեանս թշնամի եղած է։

ՐԻԿՕԼԷԹ.

Դա՛րձեալ Կապրիօնն է արդեօք։

ԲԻԲԼԷ.

Գիտե՞ս ինչ կ'ընէ հիմա. կ'ուզէ հաւատացընել Անասթազիին որ ես ուրիշ ընթացքներու ետեւէ եմ, քիչ մը առաջ...քիչ մը առաջ...փողոցէն խարտեաշ գեր կնկան մը հետ կ'անցնէր, ու կինը անամօթութեամբ սենեկիս պատուհաններուն վրայէն ինձ համբոյրներ ղրկեց...ես այս կինը չեմ ճանչնար։ Կնիկս աս տեսնե-

յով, վրաս կասկածներ ունեցաւ, ու ինծի հետ անվայել խօսքեր ըրաւ, իսկ ես պատույս վրայ կ՚երդնում . . (Ճակատին կը զարնէ.) Ո՛հ, Աստուած իմ, ինչ զարհուրելի բան, ո՛հ, ան գարշելին . . .

ԺԻՐՄԷՆ, առանց երեսը դարձնելու.

Ի՞նչ ունիս.

ԲԻԲԼԷ.

Աս հրէշը այնքան զիս կը չփոթէ, որ միտքս եղածն ալ կը մոռնամ . . . օրիորդ Բիկօլէթին նամակ մը կը բերէի . . . ո՛հ, գարշելի Կապրիօն ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ինծի՞ նամակ մը, հա՛, հա՛, ես երբէք նամակ առած չունիմ ։

ԺԻՐՄԷՆ.

Պատուական շքանշաններ ունեցող դեղեցիկ կնիքով մը ։

ԲԻԲԼԷ.

Նա ալ կ՚ուզէի Կապրիօնի թաղման հանդիսին համար նամակ մը առնուլ ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ո՛հ, ո՛րչափ բարեբաղդ եմ, Ֆլէօր տը Մարիէն լուր առի ։

ԺԻՐՄԷՆ.

Ո՞ւր է ան, ինչ կ՚ընէ արդեօք ։

ՐԻԿՕԼԷԹ.

Մտիկ ըրէ . " Սիրելիդ իմ Բի-
" կօլէթ, միայն այսօր հրաման ու-
" նեցայ որ քեզ իմ վրայօքս լուրեր
" հաղորդեմ, ա՛յնչափ զգուշութիւն
" բանեցուցին որ քանի մը չարագործ
" մարդիկ չկարենան զիս գտնել ։ Նս
" Ճշմարիտ շատ երջանիկ եմ . միայն
" բանի մը վրայ կը ցաւէի, այն է
" քեզ գիր գրել չկրնալուս վրայ,
" որ ամենէն առաջ զիս սիրողը ե-
" ղար, բայց սակայն հիմա միշտ
" մնացիր ։

ԺԻՐՄԷՆ.

Ահա Շուրինէօրին տալու աղէկ լուր մը, որ վաղը պիտի գայ իր փոքր ամսականը առնելու ։

ՐԻԿՕԼԷԹ.

" Կարծեմ որ քիչ ատենէն խիստ
" հեռու տեղ մը պիտի երթամ,
" բայց խիստ հեռու, սակայն նախ
" զքեզ տեսնելու պիտի գամ ։ Այն
" անձը, որուն հետ անգամ մը խօ-
" սակցեցար, և որ իմ պաշտպանս
" եղաւ, այսօր կամ վաղը պիտի գայ
" զքեզ տեսնելու . և այս խոստումը
" ինձ ըրած օրէն 'ի վեր զինքը ա-
" ւելի կը սիրեմ ։

ԺԻՐՄԷՆ.

Իր պաշտպա՛նը, անշուշտ իշխանազունը պիտի ըլլայ ։

ԲԻԲԼԷ, ձախին դառնալով.

Ո՛հ, սրիկան ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ն՛հ, զիս վախցուցիր, Պ. Բիբլէ ։

ԲԻԲԼԷ.

Բոլորովին չփոթեց զիս . . . Մոռցայ որ հաս Պ. Մորէլի համար զմռեալ թուղթ մը ունիմ ։

ՐԻԿՕԼԷԹ.

Այդ զմռեալ թուղթը ինչ կը պարունակէ ։

ԺԻՐՄԷՆ, Բազուկը առնելով.

Հրաման մ՚է ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ինչ ըսել է հրաման մը ։

ԺԵՐՄԷՆ.

Եթէ այսօր մինչեւ իրիկուն չվճարէ՝ վաղը իր բոլոր ունեցածը գրաւելու իրաւունք պիտի ունենան։

ՌԻԿՕԼԷԹ.

Ո՛հ, գրեթէ բան մը չունին...

ԺԵՐՄԷՆ.

Ու խեղճ Մորէլը բանտ դնելու։

ՌԻԿՕԼԷԹ.

Բայց Պ. Ֆէրանը, որ անոր փոխ տուաւ աս ստակը, չպիտի հաւանի աս բանիս։

ԺԵՐՄԷՆ.

Պարտամուրհակը իր ձեռքը չէ ալ, պէտք է որ ինքը վճարէ աս թուղթը, ու կ'ըսէ թէ ամենեւին միջոց մը չունի վճարելու։

ՌԻԿՕԼԷԹ.

Բայց ան չար նոտարը միշտ անոր ծառայն ինկած է, գուն իրեն առհաշիւ ստակ ալ տուիր արդէն։

ԺԵՐՄԷՆ.

Ո՛հ, Ըստուած իմ, այո՛...

ՌԻԿՕԼԷԹ.

Ո՛հ, երանի թէ խնայողութեամբ պահած ստակներ ունենայի, ան ատեն բոլոր իմ դրամանոցներս պիտի կտրէի... (Ժերմէն շարժում մը կ'ընէ, ու Ռիկօլէթը կ'ամչնայ.) Փրասմունդ կ'երթաս։

ԺԵՐՄԷՆ.

Նախ հաս մօտ տեղ մը պիտի երթամ։

ՌԻԿՕԼԷԹ.

Ի՞նչ ընելու ես։

ԺԵՐՄԷՆ.

Քիչ մը ետքը պիտի իմանաս, ու չպիտի ցաւիս, վայրկենէ մը պիտի վերադառնամ, ու այս դուռը պիտի զարնեմ։

Ներսէն խուցին դուռը գոցելով։

ՌԻԿՕԼԷԹ.

Ես ալ պիտի բանամ քեզ. հիմա Պ. Բիբլէին հետ Մորէլի սենեակը պիտի ելլեմ, ու պիտի աշխատիմ որ զան մխիթարեմ։ Նորէն տեսնուինք, իմ գրացիս։

ԺԵՐՄԷՆ.

Քիչ մըէն։

ԲԻԲԼԷ. ԺԵՐՄԷՆ.

Պ. Ժէրմէն, ինծի մեծ ծառայութիւն մը ըրէ... վար իջնելու ժամանակդ նայէ թէ Կապրիոնը դեռ փողոցին մէջն է։

ԺԵՐՄԷՆ.

Շատ աղէկ, Պ. Բիբլէ, քեզ կ'իմացընեմ։

ՌԻԿՕԼԷԹ.

Եկո՛ւ ուրեմն, Պ. Բիբլէ։

ԲԻԲԼԷ.

Ըհա՛ եկայ։ (Երթալու ժամանակը.) Միայն թէ իր գեր խարանաշ կնոջ հետ դեռ հոն չըլլայ։

Երեքն ալ դուրս կ'ելլեն։

---

ՏԵՍԱՐԱՆ Զ

ՖԵՐԱՆ. առանձին.

Երբ ամենքն ալ իր խուցէն դուրս կ'ելլեն,
յետ խուցին դրան մօտենալուն կը խօսի։

Մարդ մը չկայ. իրենց խօսքերէն բան մը չկրցայ հասկընալ... Այն նամակը, որ հիմա վարը տեսայ,

այն նամակը, որ տ'Արվիյլ մարքէզուհւոյն զինանշանովը կնքուած ու Րիկօլէթի ուղղուած է, ո՛ւր է արդեօք: Աս կար կարող աղջիկը տեսնին տ'Արվիյլը չճանչնար, բայց իշխանազունը կը ճանչնայ զան, ու երեք ամիսէ 'ի վեր Ֆլէօր տը Մարին իր ձեռքն է: Երեք ամիսէ 'ի վեր, աշխատութիւն, հնարք, յարատեւութիւն, խոնջէնք, ամեն բան անօգուտ եղան, բայց ո՛ւր արդեօք պահած է զան: Ո՛հ, այն նամակը, այն նամակը կ'ուզէի տեսնել . . . (փնտռտելով.) Չկայ, չկայ: (Խորհելով կը նայի.) Ե՛ս, ե՛ս, իմ տարիքիս մէջ այսպէս յաղթուիմ: Եթէ խղճի խայթերու տեղ՝ կատաղիներ գըտնուին՝ այս սոսկալի սէրը սրտիս մէջ ձգեցին: (Բարկութեամբ.) Բայց հանեցէք ուրեմն իմ սրտէս այս երկաթեայ ձեռքը, որ կը ճնշէ զան, այն հուրը, որ կը կրծէ զան . . . ո՛հ, գլուխս, գլուխս, որ ինքնիրմէ ելած է, որ ճշմարտութիւնը կը մոռնայ, և կ'երազէ ու միշտ երազի մէջ է . . . (Ոտք ելլելով.) Հիմա թէոր զան վրայ հասնիմ . . . (Ուրախութեան ձայն մը հանելով.) Ո՛հ, ահա՛ նամակը, ինքն է զորը: (Կը ծիծաղի.) տեսնին տ'Արվիյլի տունն է . . . ո՛հ, այս անգամ ալ իմս ես, այո՛, իմս ես այս անգամ, ըստ որում եղած տեղդ գիտեմ . . . անվախութիւնը ու ոսկին մնացածը 'ի գործ կը դնեն . . . Այո՛, անոր համար իմ ոսկիս . . . արիւնս . . . պիտի զոհեմ . . . աշխարհիս մէջ բան մը աչքիս չէ, բան մը . . . Ամեն բան աչքիս պիտի առնում . . . (Սպառնալեօք.) ժամանակը, բացակայութիւնը, արգելքները, փոխանակ կիրքս հանդարտեցընելու՝ զան աւելի կատղեցուցին:

ԺԻՐՄԷՆ, դուրսէն դուռը զարնելով:

Հո՞դ ես դրացուհի . . . կրնա՞մ ներս մտնել:

ՓԻՐԱՆ.

Պ. Ժէրմէնն է . . . Օ՜խ հոս չէր զանէ: Այս նամակը տեղը դնեմ:

Մէկալ դուռէն դուրս ելլել կ'ուզէ, բայց յանկարծ կը կենայ:

ՐԻԿՕԼԷԹ, դուրսէն:

Լիլի, բաց հօրդ որ հիմա վեր պիտի ելլեմ:

ՓԻՐԱՆ.

Րիկօլէթի ձայնը կը լսեմ . . . ո՛հ, աս դահլիճին մէջ պահուիմ:

Կը պահուի:

## ՏԵՍԱՐԱՆ Ի.

ՐԻԿՕԼԷԹ. Ետքը՝ ԺԻՐՄԷՆ, ՓԻՐԱՆ.

ՐԻԿՕԼԷԹ, երգելով.

“ Իմ Նորմանտիա տեսնելու կ'երթամ ”

ԺԻՐՄԷՆ, դուրսէն.

Դրացուհիս . . . պատասխան տուր . . . կրնա՞մ ներս մտնել:

ՐԻԿՕԼԷԹ.

Ահա՛, ահա եկայ, նիգը դրած եմ եղեր:

ԺԻՐՄԷՆ, մտնելով.

Ձայնս չէի՞ր լսեր:

ՐԻԿՕԼԷԹ.

Գիտես հիմա սենեակս մտայ... հի-մա ըսէ նայինք, քու այցելութեանդ պատճառը կրնամ իմանալ։

ԺԷՐՄԷՆ.

Աղէկ լուր պիտի հաղորդեմ քեզ, հարուստ բարեկամի մը գացի ու ա-ղաչեցի որ հազար ֆրանգ փոխ տայ ինձ։

ՐԻԿՕԼԷԹ.

Հազար ֆրա՛նգ, ինչ հարկաւո-րութիւն ունիս դուն հազար ֆը-րանգի։

ԺԷՐՄԷՆ.

Միթէ չե՞ս գուշակեր.... ան խեղճ Մորէլը... եթէ զան բանտ դնեն։

ՐԻԿՕԼԷԹ.

Արդեօք անոր պարտքը վճարել կ'ուզէիր։ Ո՛հ, Պ. Ժէրմէն.... ամենեւին չեմ զարմանար, ո՛չ, այլ շատ ալ գոհ կ'ըլլամ։

ԺԷՐՄԷՆ.

Բարեկամս վաղը առատ ճամբոր-դութիւն մը պիտի ընէ, բայց ինծի խօսք տուաւ որ իր մեկնելէն առաջ ինծի աս գումարը տալու համար ձեռքէն եկածը պիտի ընէ։

ՐԻԿՕԼԷԹ.

Կ'ուզէի շուտով Մորէլի սենեա-կը ելլել ու իմացընել անոր...

ԺԷՐՄԷՆ.

Կեցիր, թէեւ ինծի հաստատ խօսք տուաւ... բայց դեռ ստակը ձեռքս չէ... պէտք չենք անոնց կեղծ ու-րախութիւն տալ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ո՛հ, Աստուած իմ, ստոյգ է, դեռ ստակը ձեռքդ չէ....

ԺԷՐՄԷՆ.

Հանդա՛րտ եղիր, այսօր նորէն պիտի երթամ աղաչեմ զան։

ՐԻԿՕԼԷԹ.

Ո՛հ, քեզ նայիմ, յուսանք. հի-մա դուն գործիդ գնա, ես Մէն Տընի փողոցը՝ կարած կարս պիտի տանիմ։ Շալս ինծի տուր, իմ դրացիս, ու գնդասեղով մը փոխա-պէս կպցուր զան... բայց կամաց, զգուշացիր, մարմինս չծակես։

ԺԷՐՄԷՆ, հառաչելով։

Ո՛հ, օրիորդ Րիկօլէթ...

ՐԻԿՕԼԷԹ.

Ի՞նչ ունիս։

ԺԷՐՄԷՆ.

Չեմ ուզեր քեզ աղախնոյ մը ը-նելու ծառայութիւնը ընել։

ՐԻԿՕԼԷԹ.

Շատ աղէկ... քալէ երթանք ուրեմն, դեռ բան մը չըրի.... դրանս նիգը կը դնեմ.... կարս առնեմ... բան մը մոռցա՞ծ եմ արդ-եօք. թեւդ ինձ շնորհէ մինչեւ վար իջնելնիս.... դուն խիստ բարի տղայ մ'ես, իմ դրացիս։

Դուրս ելլեն։

ՓԷՐԱՆ. տանէն դուրս ելլելով ու ծոցատետրի մը վրայ գրելով։

Միայն խօսք մը ըսեմ իմ պաշ-տօնատարիս, ու վաղը լուսնալուն պէս, Մորէլ բանտ կը դրուի.... շղթան կ'առնում ու այնուհետեւ

այն դարչելի ձեռմ՚նին վրայ կը դառնար, թող սակ փոխ առնու, ու երբ գող բանտ թող դրուի․․․ մէկ ժամէն Մէթրը ո՚նջօլ պիտի խմանայ Փլէօր ու Մարիին ուր ըլլալը ։



## ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ․ — ՄՈՐԷԼԻ ԸՆՏԱՆԻՔԸ․

Թատրոնը տան մը վերնայարկը կը ներկայացնէ ։ Ներքին կողմը փոքր ապայք ու տիկին Վառնէր կը գտնուին ։ Աջ կողմը, Մատլէն Մորէլ՝ մեծ թեւաթոռի մը վրայ նստած ։ Ձախ կողմը՝ գործարան մը կարող գործիքով մը ։ Քովը քանի մը ժանկագին քարեր կը փայլին ։ Ձախ կողմը դուռ մը կայ ։ Բոլոր սենեակը սեղանի մը վրայ դրուած կանթեղի մը տկար լուսովը լուսաւորուած է ։ Մորէլ խոնջէնքէն ու անքունութենէն տկարացած գլուխը հատու գործիքին վրայ դրած կը քնանայ ։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՄՈՐԷԼ․ ՄԱՏԼԼԷՆ․ ՏԻԿԻՆ ՎԱՌՆԷՐ ԵՒ ՏՂԱՅՔ ։

ՏԻԿԻՆ Վառնէր, որուն բոլոր արտաքին երեւոյթը երջանկութիւնը կը ցուցնէ․ կամաց մը կ'ելլէ․ սենեկին բոլորտիքը կը դառնայ ու գործարանին քովը կ'երթայ․

ՄԱՏԼԼԷՆ, ցած ձայնով․

Մայր իմ, ո՞ւր կ'երթաս, հոն մի՛ երթար․․․ ադամանդներուն մի՛ դպչիր ։ Գիտես որ մեզ ո՛րչափ սուղի նստած է ։

ՏԻԿԻՆ Վառնէր յետեւէն խանթեղին կ'երկընցընէ որպէսզի նէ, ետքը՝ ադամանդները ուշադրութեամբ դիտելու համար ձեռքը կ'առնէ․ ու ձայն մը կը հանէ ։

ՄՈՐԷԼ, արթննալով․

Ի՞նչ ունիս, մայր իմ, քնացի՞ր նորէն ու ձայն մ՚ հաներ․․․ Մատլէն ու տղայք կը քնանան ։

ՏՂԱՅՈՑ ԱՆԴՐԱՆԻԿԸ, գլուխը վեր վերցնելով ։

Ես չեմ կրնար քնանալ․

ՄԱՏԼԼԷՆ․

Վախցայ քեզ արթնցընելու, Մա-

ջել, եթէ ո՛չ քեզմէ ջուր պիտի խնդրէի . . .

ՄՈՐԷԼ.

Գնա, Ֆէլիքս, խեղճ մօրդ ջուր բեր: (Ցէմորէն.) Ի՛, ինչ է աս, մինչև երբ չպիտի քնանաս: Բարկութիւնս կը դրդես, շուտով գնա պառկէ: Անկողինդ, անկողինդ, գնա:

Պառաւը մրմռալով կը պառկի:

ՖԻԼԻՊՈՍ. դէպ ՚ի հօրը քով կը վազէ գոչելով.

Հայր իմ, հայր իմ:

ՄՈՐԷԼ.

Ի՛նչ կեանք է աս. աս ինչ կեանք է:

ՄԱՏԸԼԷՆ, լալով.

Մինթէ յանցանքը իմս է՝ եթէ մայրս յիմար է:

ՄՈՐԷԼ.

Մինթէ իմս է: Այս ինչ կեանք է որ ձեզի համար աշխատութեան մէջ ինքզինքս կը մաշեցրնեմ . . . Չեմ գանգատիր . . . որքան ոյժս տեղը ըլլայ, պիտի աշխատիմ. բայց չեմ կրնար աշխատիլ և միանգամայն խևերու, հիւանդաց և տղայոց պահապան ըլլալ:

ՄԱՏԸԼԷՆ.

Ո՛վ Աստուած իմ, ինչպէս ծառայցած եմ:

ՄՈՐԷԼ. Ֆիլիպին.

Շուտով տուր, Ֆէլիքս: (Կենալով.) Բայց խիստ ցուրտ ըլլալ պէտք է, աս քեզ պիտի վնասէ:

ՄԱՏԸԼԷՆ.

Աւելի աղէկ. ամէն բան պիտի վերջանայ:

ՄՈՐԷԼ.

Մատըլէն, այդ կերպով մ՚ խօսիր ինծի հետ, ինչու որ ես արժանի չեմ . . . կ՚աղաչեմ, ինծի ցաւ մի պատճառեր:

ՄԱՏԸԼԷՆ.

Ո՛վ Աստուած, քեզ ցաւ չեմ ուզեր պատճառել . . . բայց երբ կը տեսնեմ թէ քեզ ինչ օգուտ ունիմ, մեր տղայքը ինչ օգուտ ունին . . .

ՄՈՐԷԼ.

Մեր տղայքը, անոնք ինծի սիրտ և քաջալերութիւն տալու կը ծառայեն. եթէ անոնք չըլլային՝ աշխատութեան մէջ ինքզինքս չէի մոռնըներ, եթէ անոնք չըլլային՝ շատ ատենէ ՚ի վեր ոյժէ կտրուած . . . յուսահատութեան մէջ ինկած էի . . .

ՄԱՏԸԼԷՆ.

Այո՛, բայց աս զաւակները՛, աս զաւակները . . .

ՄՈՐԷԼ.

Կը տեսնես որ մեզ օգտակար են:

ՄԱՏԸԼԷՆ. խիստ ցած.

Վրաս դող կու գայ, ոյժ անգամ չունիմ դողալու:

ՄՈՐԷԼ. իր ծածկոցը հանելով՝ ինքզինքը ծառաները կը ծածկէ:

Տաքցիր ուրեմն, կինս:

ՄԱՏԸԼԷՆ.

Ո՛հ, խիստ բարի ես . . . Քիչ մը առաջ մեղք գործեցի, ներէ ինծի . . . Ու երբ կը խորհիմ որ սա տեղ եղած ադամանդներէն մէկը եթէ . . .

ՄՈՐԷԼ.

Բայց անոնք մերը չեն, սիրելիս:

ՄԱՏԼԼԷՆ.

Աստուած իմ, ո՛րչափ դժբաղդ եմք։

ՄՈՐԷԼ. առանձին ընէին վրայ նստած եւ անոր մէկ ձեռքը իր ձեռքերուն մէջ բռնելով։

Սիրելի ամուսինս, ամէն մարդ աշխարհի վրայ իր ցաւերը ունի, մեծերուն պէս պզտիկներն ալ անոր ենթակայ են. ըստ որում մենք ալ թշուառութեան մէջ չպիտի ըլլայինք եթէ այն աղամանդը չկորսուէր, որուն համար պարտաւորեցանք վճարել։ Աշխատութեամբ եւ չափաւորութեամբ միթէ բաւական գիրութիւն եւ երջանկութիւն չէինք վայելեր։

ՄԱՏԼԼԷՆ.

Այո՛, բայց այսու ամենայնիւ հացագործը ալ ապառիկ հաց չպիտի տայ... ինչ պիտի ընես։

ՄՈՐԷԼ.

Ես ալ չեմ գիտեր։

ՄԱՏԼԼԷՆ.

Ահա լուցեր է, ճրագը անցուր որ պարապ տեղը չվառի, (Մորէլ խնդալը կ'անցընէ։) Բայց ինչո՞ւ կը մտածես, բան մը չես խօսիր։

ՄՈՐԷԼ.

Այն պարտամուրհակին վրայօք կը խորհիմ, որուն համար գիս դատաստանի պիտի կանչեն։

ՄԱՏԼԼԷՆ.

Թող պարոն Ֆերանը վճարէ։

ՄՈՐԷԼ.

Բայց, աղջիկս, Պ. Ֆերանին պարտքը չէ, ըստ որում ստակը մենք առինք։

ՄԱՏԼԼԷՆ.

Ո՜հ, ինչպէս անողորմ են հարուստները։

ՄՈՐԷԼ.

Ո՛վ Աստուած, հարուստները միթէ աւելի չար չեն... բայց չեն գիտեր... եւ չեն կրնար կարծել թէ մեզի պէս դժբաղդ մարդիկ կը գտնուին։

ՄԱՏԼԼԷՆ.

Ո՛հ, դուն ինծմէ աւելի բարի ես, եւ գուցէ իրաւունք ունենաս։ Սիրելի ամուսինս, առ բաճկոնդ վրայէս, ու նայէ որ քիչ մը հանգստանաս. ուստի քիչ մը քնացիր որ մոռնաս։

ՄՈՐԷԼ. իր գործարանը երթալով։

Քնանամ, մոռնամ, ո՛չ, ո՛չ. ժամանակ չունիմ, պէտք է որ աշխատիմ։

---

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՆՈՅՆԵՐԸ. ՊՈՒՐՏԷՆ. ՄԱԼԻՔՕՐՆ.
ետքը՝ ՐԻԿՕԼԷԹ։

ՊՈՒՐՏԷՆ. ներս մտնելով.

Պ. Մորէլ...

ՄՈՐԷԼ. զարմանալով.

Աս երկու մարդիկը հոս ինչ կուզեն։

ՏՂԱՅՔ. ներսէն ու դրէնց մօրը քով կը վազեն.

Մա՛յր, կը վախնանք։

ՄԱՏԼԼԷՆ.

Սիրելիս, ետ կեցիր։

ՄՈՐԷԼ. առաջ երթալով.

Ինչ կ'ուզէք, պարոններ։

ԳՈՒՐՏԷՆ.

Ժերօմ Մորէլը դո՞ւն ես։

ՄՈՐԷԼ.

Ես եմ։

ԳՈՒՐՏԷՆ.

Ազգամանդագահատ վարպետը։

ՄՈՐԷԼ.

Ես եմ։

ԳՈՒՐՏԷՆ, սեղանին մէջտեղը պարզապէս դիտելով.

Սխալմունք չ՚ըլլայ։

ՄՈՐԷԼ.

Դարձեալ կ՚ըսեմ, ես եմ... ինչ կ՚ուզէք, իմացուցէք մաքերնիդ...

ԳՈՒՐՏԷՆ.

Եթէ պահապան զօրաց հարկաւորութիւն ունեցող մը ըլլայ, մենք ենք, ըստ որում մեզ պիտի օգնեն զքեզ բանտ տանելու, եթէ դէմ դնելու ըլլաս։

ՄՈՐԷԼ.

Բա՞նտ պիտի տանիք զիս։

ԳՈՒՐՏԷՆ.

Այո՛, Կլիշի պիտի տանինք։

ՌԻԿՕԼԷԹ ներս կը մտնէ, ու ապշած և լուռ կը կենայ։

ՄՈՐԷԼ.

Կլիշի՞ պիտի տանիք։

ԳՈՒՐՏԷՆ.

Բանտ պիտի տանինք զքեզ պարտքի համար, մենք վաճառականութեան պահապաններ ենք։

ՄԱՏԼԷՆ.

Ո՜հ, Աստուած իմ, Պ. Ֆերանի պարտամուրհակն է։

ԳՈՒՐՏԷՆ.

Ահա կանոնաւոր վճիռը։

Ամենուն վրայ ամօթահարութիւն մը կը բերէ։

ՌԻԿՕԼԷԹ.

Ո՜հ, կարծես թէ գիտէի որ այսպէս պիտի ըլլայ... շատ աղէկ ըրի որ Պ. Ժերմէնին իմաց տուի...

ՄԱՏԼԷՆ.

Մորէլ, գնա՛ Պ. Ֆերանը գտիր։

ԳՈՒՐՏԷՆ.

Պ. Ֆերանին գործը չէ աս, Պ. Բըթի Ժանն է աս գատը վարողը։ Պատասխան տուէք, պիտի վճարէ՞ք թէ չէ։

ՌԻԿՕԼԷԹ.

Բայց, պարոններ, կը տեսնէք որ չկրնար վճարել։

ԳՈՒՐՏԷՆ.

Ուրեմն քալենք։

ՄՈՐԷԼ.

Բանտը պիտի երթամ, եթէ կ՚ուզէք։

ՄԱՏԼԷՆ.

Մորէլ, սիրելիս։

ՄՈՐԷԼ. հեծկլտալով.

Բայց բանտին մէջ չպիտի կարենամ աշխատիլ... հո՛ն ինծի քար չի պիտի վստահին տալու... պիտի կարծեն թէ ես սրիկայ մ՚եմ։

ՄԱՏԼԷՆ. Յետոյ անոր ձեռքերը սեղմելով, ան աղաչելով.

Ո՜հ, իմ խեղճ Էրիկս, խեղճ Էրիկս։

ՌԻԿՕԼԷԹ.

Բայց Պ. Ժերմէնը ինչո՞ւ կուշանայ, գուցէ իր բարեկամը Թողույ մեկնեցաւ առանց ստակը անոր տալու։ (Պատուհանին քով երթալով.) Եթէ ամիսը քեզ 8 կամ 10 ֆրանգ խոստանամ։

ՊՈՒՐՏԷՆ.

Հինգ հարիւր ֆրանգ և ծախքերը վճարելու համար, ո՛չ, ո՛չ, կանխիկ ստակ կ'ուզենք։

ՌԻԿՕԼԷԹ.

Իմ ընկուզի փայտէ պահարանս կը ծախեմ։

ՊՈՒՐՏԷՆ.

Մէկդի կեցիր։ (Մօրէլին.) Վերջին անգամ կ'ըսենք, մեր ետևէն եկուր։

ՄՈՐԷԼ.

Շատ աղէկ ուրեմն, ձեր արհեստը կատարեցէք 'ի գործ դրէք.... գլխս բռնող ձեռքերս քաշեցէք, մէկդի առէք, կնոջս բազուկները պարանովս քակեցէք, ու զմեզ թշուառութեան ու դժբաղդութեան վերջին ծայրը հասուցէք, ես աղաչել կամ ուրիշ բան չեմ կրնար ըսել։

ՊՈՒՐՏԷՆ.

Հա՛, բարի մարդ, դուն ինքդ ուզեցիր որ այդպէս ընենք։ Պէտք է որ մեր պարտքը կատարենք։

ՌԻԿՕԼԷԹ, ուրախութենէն ձայն մը հանելով.

Ահա Պ. Ֆէրմէնը։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՅՆՆԵՐԸ. ՃԷՐՄԷՆ, ետքը՝ ՇՈՒՐԻՆԷՕՐ. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ ՄԸ. և ՓԷՐԱՆ։

ՊՈՒՐՏԷՆ և ՄԱԼԻՔՕՌ.

Ի՞նչ է ան։

ՃԷՐՄԷՆ.

Թողուցէք այդ մարդը։

ՊՈՒՐՏԷՆ՝ անոր դառնալով, և դէմ կենալով.

Դուն օրինաց դէմ դնել կ'ուզես։

ՃԷՐՄԷՆ.

Ո՛չ. այլ անոր պարտքը պիտի վճարեմ։

Ամէնքն ալ զարմացման ձայն մը հանեն։

ՊՈՒՐՏԷՆ.

Շատ աղէկ, բայց ինչ զարմանալի բան։

ՄՈՐԷԼ, անոր մօտենալով.

Բայց Պ. Ֆէրմէն... դուն զիս չես ճանչնար։

ՃԷՐՄԷՆ.

Մարդ եղբայր օգնելու համար՝ միթէ ազգական կամ բարեկամ ըլլալ պէտք է։

ՄՈՐԷԼ. Մարքիզին.

Քեզ չէ՞ի ըսեր թէ հարուստները բարիք կ'ընեն, երբ իմանան թէ խեղճ մարդիկ կը գտնուին։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. Ներս մտնելով.

Պ. Մօրէլ, մեր իմացայ թէ հոս քու բնակարանդ աղմուկ կայ. ուստի վազեցի եկայ... եթէ օգնութեան հարկաւորութիւն ունիս, աջակից եմ....

ՌԻԿՕԼԷԹ. ձեռքերը շփելով.

Ալ բանի մը հարկաւորութիւն չի մնաց, ան վճարեց։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. ձեռքին կէտը բռնելով.

Շատ աղէկ ըրիր, շատ գոհ եմ։

ՌԻԿՕԼԷԹ, Պուրտէնին ու Մալիքօռին.

Պարոններ, երկար ատեն սպասելու հարկ չկայ, աս բարի երիտասարդին տուած դրամին հաշուրդը տուէք և կրնաք երթալ։

ՊՈՒՐՏԷՆ. երբ Մալէ օրն գործակալին վրայ նետէ.

Ըհա՛, օրիորդ ։

Հինգ փրանգնոց մը կու տայ ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ի՛նչպէս, քեզ հինգ հարիւր փրանգ պարտք ունին ու հազար փրանգի վրայ միայն հինգ փրանգ ետ կու տաս ։

ՊՈՒՐՏԷՆ.

Հինգ հարիւր փրանգ մայրն է, ասկէ զատ չորս հարիւր յիննսուն և հինգ փրանգ ծախք ունի ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ո՛հ, Պէտուրիններըը . . . . ո՛հ, Թշուառութեան գուները բայողնե- րը . . . (Տէրտէրեան գործակալը ներս կը մտնէ ։) Ըհա՛ Պ. գործակալը ։

ՄՈՐԷԼ. գործակալին, ու կ'երթայ մը.

Պարոն . . . ի՞նչ կ'ուզէք ։

ԳՈՐԾԱԿԱԼԸ.

Պ. Ժէրմէնը կը փնտռեմ ։

ՐԻԿՕԼԷԹ.

Ըհաւասիկ աս է, Պ. գործակալ, որ Պ. Մորէլի համար հիմա հազար փրանգ վճարեց ։

ՊՈՒՐՏԷՆ.

Սուտ է, Պ. գործակալ ։

Ֆէրան դրամ առջև նետելէ ։

ԳՈՐԾԱԿԱԼԸ. Ժէրմէնին.

Պ. Ֆէրանի քով գրագիր ես ։

ԺԷՐՄԷՆ.

Այո՛, պարոն ։

ԳՈՐԾԱԿԱԼԸ.

Պարոն, քեզի դէմ ամբաստանու- թիւն մը եղած ըլլալուն, սախպուած եմ զքեզ վերցընելու ։

ԱՄԷՆՔԸ, Ֆէրանէ զատ.

Զա՛ն ։

ԺԷՐՄԷՆ.

Զի՛ս, պարոն . . . սխալմունք մը կայ ։

ԳՈՐԾԱԿԱԼԸ.

Կ'ամբաստանեն թէ քեզ յանձ- նուած դրամարկղէն խարդախու- թեամբ հազար փրանգնոց երեք մուր- հակ գողցեր ես ։

ԺԷՐՄԷՆ.

Ո՛վ է աս ըսողը ։

ՖԷՐԱՆ.

Ես եմ, պարոն, որ անկրաւու- թեան ամենևին չեմ կրնար ներել ։

ԺԷՐՄԷՆ.

Ընկրաւ զրպարտութիւն մ'է այդ ։

ՖԷՐԱՆ.

Պարոն, քանի մը օր առաջ ինծ- մէ յիսուն փրանգ փոխ ուզեցիր, ուրեմն հիմա աս վճարած սակդ ու՞ր գտար, որ անտարակոյս այս գողու- թենէն յառաջ եկած է ։

ԺԷՐՄԷՆ.

Իրօք, այս սակը իմս չէ ։

ԳՈՐԾԱԿԱԼԸ.

Ուրեմն ուրկից ըլլալը իմացուր մեզ ։

ԺԷՐՄԷՆ.

Բարեկամ մը այս առտու զան ինծ փոխ տուաւ ։

ԳՈՐԾԱԿԱԼԸ.

Այդ բարեկամին անունը ի՞նչ է, պարոն, անոր վկայութիւնը խիստ կարևոր է ։

ԺԷՐՄԷՆ.

Անունը, Պ. Հանրի տ' Իրպէն

է, որ Օթէլ-տը-Վիլ հրապա-րակը, թիւ 10 կը բնակի:

ԳՈՐԾԱԿԱԼԸ.

Շատ աղէկ, պարոն, անոր տու-նը երթանք ուրեմն:

ԺԷՐՄԷՆ.

Դժբաղդաբար հիմա փարիզէն մեկնեցաւ:

ՖԷՐԱՆ.

Ես բան մը ըսելիք չունիմ, Պ. գործակալին կը թողում որ այսպիսի վկայութեան մը արժէքը դատէ:

ՌԻԿՕԼԷԹ.

Բայց ես գիտեմ, որ ստոյգ է, Պ. Ժէրմէն երէկ այս բարեկամին գնաց, ու 'ի դարձին ըսաւ ինծի թէ այսօր ստակը կը յուսար առնուլ:

ԳՈՐԾԱԿԱԼԸ.

Պ. Ֆէրանի պէս մարդէ մը ե-ղած ամբաստանութենէ և քու տը-ւած անորոշ վկայութենէդ ետև, կը ցաւիմ, պարոն, որ պիտի ստիպուիմ ծանր պարտաւորութիւն մը 'ի գործ դնելու: (Պուրտէնին:) Պարոն, ինծի տուր…

ՄՈՐԷԼ. Ժէրմէնին.

Ի՞նչ, ինծի՞ համար այս գործը ըրիր:

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Հոգ չէ, երկուքդ ալ բարե-սիրտ էք:

ԺԷՐՄԷՆ.

Ո՛հ, Պ. գործակալ, աներկիւղ հետդ պիտի գամ, Պ. Ֆէրանի ըս-խալմունքը, եթէ սխալմունք է, պի-տի ճանչցուի: Հանգիստ եղիր, օ-րիորդ Ռիկէլէթ:

Գործակալը Ժէրմէնին նշան կ'ընէ որ եկե-ղեն երթայ. Ռիկօլէթ առաջին պարտ-ճառաբանմբ անոնց հետ կ'ընկերանայ:

ՇՈՒՐԻՆԷՕՐ, Ռիկօլէթին մօտենալով կըսէ ցած ձայնով մը.

Մի լար, օրիորդ. բանտի մէջ բարեկամի մը հարկաւորութիւն պի-տի ունենայ… ես հոգ կը տանիմ ու անոր ընկեր կ'ըլլամ հոն:

Դուրս կ'ելլէ:

ՊՈՒՐՏԷՆ. առաջը եկ ղալէ ետև,

Ե, նայինք հիմա, գեռ գործեր-նիս չկրցանք լմնցընել, ուրեմն, Մալիքօրն, ամեն ունեցածնին գը-րաւենք:

ՖԷՐԱՆ. Նոտարին.

Կեցիք: (Մորէլին որ շփոթած մնա-ցեր էր:) Պ. Մորէլ, քեզ նայիմ, խելքդ գլուխդ ժողվէ, կը տեսնես որ ամեն մարդ ինչպէս քու վրադ կը ցաւի. քեզ քիչ մը ստակ փոխ տամ, բայց ամենը չեմ կրնար վճարել, օգնէ ուրեմն ինծի:

ՄՈՐԷԼ.

Պարոն, բան մը չունիմ:

ՖԷՐԱՆ.

Ըն չղթան ունիս, որ թանկագին բան է:

ՄՈՐԷԼ.

Քեզ ըսի որ մայրս…

ՖԷՐԱՆ.

Ո՛հ, Աստուած, այսպիսի վայր-կենի մէջ միթէ խենթ կնոջ մը կամ-քը կատարել պէտք է: Քեզ նա-յիմ, անոր քուն եղած ժամանակը զանէ գործ տեսիր:

ՄՈՐԷԼ.

Վերջապէս յաղթեցիր ինձ, ըն-

*տանիքս մինակ ու առանց պաշտպանի թող տալու մտածմունքը զիս կը ըստիպէ :*

Ռոտոլֆ ներս կը մտնէ · ու Պուրտէնին մուրհակ մը կուտայ , որ պահանջած գումարը ընդունելով Մալիգորնին հետ դուրս կ'ելլէ :

ՄՈՐԷԼ , տիկին Վարներին կը մօտենայ · կը պատրաստուի որ շղթան տայ , բայց կը կենայ · ու յուսահատութեամբ մը կ'ըսէ :

*Ո՛հ , չեմ համարձակիր . . . աս շղթան իմս չէ , տիկին Վարներինն ալ չէ :*

ՖԼՐԱՆ · անհամբերութեամբ ·

*Գ · Մորէլ :*

ՄՈՐԷԼ ·

*Աս շղթան աս կնոջ քով տրուած է , աւանդ մ'է , որ աղջկան մը ծնողացը կը վերաբերի :*

ՌՈՏՈԼՖ · որ աս վերջին խօսքերը լսեց ·

*Ո՛վ Աստուած իմ , ինչ կը լսեմ :*

ՖԼՐԱՆ , Տիկին Վարներին պարանոցէն շղթան առնելով ·

*Ահ , ահա՛ ձեռքս է :*

ՄՈՐԷԼ ·

*Այդ շղթան՝ տիկին Վարների քովէն զողցուած աղջկան մը ծնողացն է :*

ՌՈՏՈԼՖ , Փերանի յետեւէն շղթան յափշտակելով

*Աղջկանս է :*

ԱՄԵՆՔ'Ն ԱԼ ·

*Անո՛ր աղջկանը :*

ՌՈՏՈԼՖ ·

*Ո՛վ բարի Մորէլ , իմ զողցուած և կորսուած աղջիկէս բոլոր մնացածը այս է :*

ՄՈՐԷԼ ·

*Ո՛հ , ներեցէք մեզի :*

ՄԱՏԼԼԷՆ ,՝ Մորէլին յուշընելով որ պահապանները մեկնեցան :

*Զմեզ ալ ազատեց . . . . Տէր իմ ես և որդիքս քեզ շնորհապարտ եմք :*

Ռոտոլֆ Մատըլէնի կը մօտենայ , որ անոր ձեռքերը կը բռնէ · տղաքը անոր ոտքը կ'իյնան :

ՖԼՐԱՆ · ինքնիրեն ·

*Փլէօր տը Մարի՝ Սառա Կոմսուհւոյն աղջիկն է . . . իշխանազունը անոր հայրը . . . շղթան ալ ձեռքէս կորսուի՛ . . . ո՛հ , որչափ աղէկ ըրի որ Մէթրը տ'Իւքոլին գրեցի , վաղը՝ ալ Փլէօր տը Մարին իրենց ձեռքը չպիտի ըլլայ :*



## ՊԱՏԿԵՐ ՎԵՑԵՐՈՐԴ. — Տ. Տ'ԱՐՎԻՅԼԻ ՊԱՐՏԷԶԸ

Թատրոնը կը ներկայացընէ տիկին տ'Արվիյլի պարտէզին մէկ մասը։ Ձախ կողմը նոյնին դուռը կը տեսնուի, որ վանդակներով կը վերջանայ։ Այս վանդակներուն մօտ խցիկ մը՝ տեսարանին վրայ նայող դուռով մը։ Ներքին կողմը ջրբուղխ մը կայ փայտաշէնքով մը ծածկուած։ Աջ կողմը ծառեր եւ ծառանցքներ։ Քիչ մը անդին, աջ կողմը՝ ապարակ մը կ'երեւի։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ, Նստած. ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, ծաղիկներով փունջ մը շինելով անոր կը բերէ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

*Նայեցէք, տիկին, ինչ գեղեցիկ փունջ մը եղաւ։*

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

*Այո՛, սքանչելի է։*

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

*Բարեհաճեցէք ընդունելու, կ'աղաչեմ։*

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

*Մեծ հաճութեամբ, սիրելի աղջիկս... հիմա ըսէ ինձ... երջանիկ ես հոս։*

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

*Ո՛հ, եթէ գիտնայիք թէ ո՛րչափ ուրախ եմ՝ երբ ամեն առտու իմ գեղեցիկ սենեկիս մէջ քունէս կ'արթըննամ... ես որ ասկէ առաջ աշխարհիս ամենէն սոսկալի տանը մէջ կ'ապրէի։*

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

*Սիրելի աղջիկս, պէտք ես այդ ցաւալի յիշատակները մտքէդ հանել... եւ քու անցեալ ժամանակդ ամենեւին մի՛ յիշեր։*

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

*Չյիշեմ, տիկին... բայց չէ՞ որ իմ թէ ձեզ եւ թէ Նորին Բարձրութեան ունեցած խորին երախտագիտութեանս թուականը այն ժամանակէն կը սկսի։ Այնպէս անարգուած ու երեսի վրայ ձգուած վիճակիս մէջ չբարեհաճեցա՞ւ միթէ մխիթարական խօսքեր զրուցելու։ Ուստի ամեն օր կ'աղաչեմ զԱստուած որ իր պարգեւները պարգեւէ ձեզ... ըստ որում, ափսո՜ս, աղքատը իր բարերարներուն համար աղօթելէն ուրիշ բան չկրնար ընել։*

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

*Ուրեմն գոհ եղիր, աղջիկս, քու խնդիրքդ կատարուեցան... մտերմաբար կ'իմացընեմ քեզ թէ իշխանազունին հետ իմ ամուսնութեանս դաշնագրութեան ստորագրութիւնը*

վաղը գիշեր որոշուած է, ու անմիջապէս ետքը Գերմանիա պիտի մեկնինք ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ստո՛յգ է արդեօք... ո՛հ, շնորհակալ եմ, Աստուած... որ իմ աղօթքս լսեցիր ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Գաղղիայէն մեկնելուդ վրայ չպիտի ցաւիս ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Րիկօլէթէ զատ, որուն գիր գրելու երբեք հրաման տուիք ինծի, ուրիշ ինչ բանի վրայ կրնամ ցաւիլ, քանի որ ձեր և Նորին Բարձրութեան քով պիտի ըլլամ, որուն համար ամենախորին երախտագիտութիւն մը կը զգամ սրտիս մէջ ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Ո՛հ, իրաւունք ունիս... անոր պէս վեհ և բարի սիրտ մը ունեցող մէկը չկայ... Պէ՞տք է որ անոր սիրտը այնչափ սաստիկ վիրաւորուի...

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Իշխանազունը բարեսիրտ է... և ինչ վիշտեր ունի արդեօք...

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Այո՛, խիստ դառն վիշտեր ունի ։ Այս առտու ինծի իմացուց թէ դըժբաղդ անցք մը խիստ տխրալի ցաւեր պատճառեցին իր սրտին, աղջկան մը համար, զոր սաստիկ կը սիրէր, և զոր անոր մանկութեանը մէջ կորսնցուցեր է... Այս պատճառաւ է որ փարիզ կ'երթամ զան գտնելու ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Երկար ատեն պիտի մնա՞ք հոն ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Ոչ, աղջիկս, կէսօրէն ետև ետ պիտի դառնանք ։ Տիկին Տիւպրէօյլը Պասթիէն աղարակագործին վաղը կատարուելիք ամուսնութեան պատրաստութեանց համար լճին ձկնորսութեան վրայ հսկելով, քովդ պիտի կենայ, եթէ իմ բացակայութեանս ժամանակ ողորմութիւն տալ ուզես՝ գիտես որ ամեն բան ձեռքդ է...

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Շնորհակալ եմ, տիկին, շնորհակալ եմ... որ իմ զգացած ցաւերս մխիթարելով՝ ինծի կրկնակի երջանկութիւն կը պատճառէք... Որովհետև հարկ է երթալնիդ՝ գնացէք ուրեմն քանի մը ժամուան համար. ձեր սիրելի ներկայութիւնը իմ բարերարիս ցաւերը պիտի թեթեցընէ... Աղջի՛կ մը ունէր ան... ո՛հ, որչափ արդեօք պիտի սիրէր, պաշտէր զինքը... ըստ որում վերջապէս ամեն կողմանէ պիտի լսէր թէ իր հայրը աղքատաց օգնութեան կը հասնէր, տկարը կը պաշտպանէր, ողորմելիներուն ոյժ և քաջալերութիւն կու տար ու թէև իշխանուհի ծնած ըլլար, և արքայական աթոռի մօտ, իր հօրը սրտին վրայ աւելի պիտի պարծենար, քանթէ իր իշխանական ծննդեանը վրայ ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Մարի, Մարի. այս խօսքերը, այս սրտի յափշտակութիւնը մեր ամենէն քաղցր ու ամենէն սիրելի վարձքն են ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅՆԵՐԸ, ՏԻԿԻՆ ՏԻՒԳՐԷՕՅԼ.

ՏԻԿԻՆ ՏԻՒԳՐԷՕՅԼ.

Տիկին մարքէզուհւոյն կառքը պատրաստ է ։

ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՅԼ.

Մնաս բարեաւ, սիրելի աղջիկս . . .

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ներէ՛ ինձ որ հետդ գամ մինչև կառքը ։

Դուրս կ'ելլեն. Մէթրը Տ'Էքօլ խօսքին դուռը կը բանայ. ու անանց հետանալը կը փակէ ։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Շատ աղէկ, ահա կատարելապէս ամեն բան իմացայ . . . դռնապանին աս խցիկին շնորհիւը, որուն արտաքին դուռը կարող եղայ բանալ, դիտելու յարմար տեղ մը գտայ. եթէ կարենանք մեր նաւակը հոս բերել, մեր բաղդը յաջող է . . . Հիմա Ֆլէօր տը Մարիին վրայօք վէճ պիտի ծագի . . . Մէկ կողմանէ Պարպ-Րուժ, միւս կողմանէ այն կոմսուհին, որ անշուշտ կեղծ ժառանգութեան մը համար, առանց ծնողաց և անծանօթ երիտասարդ աղջկան մը հարկաւորութիւն ունի . . . Այս երկուքէն ո՞րը գոհ ընենք, Պ. Ֆէրա՞նը թէ տիկին Մաք-Կրէկօր կոմսուհին . . . Հիմա ասոր վրայ մտածելու ժամանակը չէ . . . Ամեն բանէ առաջ պէտք է աճապարենք գործ տեսնելու . . . երեկուանէ 'ի վեր բան մը չկրցանք ընել ։ ( Վարագոյրներուն կողմը նայելով ) Զարմանալի՛ բան . . . ո՛վ է արդեօք ճամբուն վրայ ան խոշոր մարդը պզտիկ երիտասարդին հետ . . . կարծես թէ զիս կը կանչէ . . . Այո՛, ահա ինծի նշաններ կ'ընէ . . . Ֆրանսուան է ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ. ՖՐԱՆՍՈՒԱ. ՍԱՌԱ

մարդու հագուստով.

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Հոս ի՛նչ բան ունիս ։

ՖՐԱՆՍՈՒԱ.

Շուէթը ըսաւ որ հոս բերեմ . . .

Կոմսուհին կը ցուցնէ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Տիկին կոմսուհին այսպէս ծպտեա՛լ. կը տեսնեմ որ տիկին կոմսուհին անհամբեր է . . . ( Ֆրանսուային ։ ) Նայէ մեզ ընդմիջող մը չ'ըլլայ ։

ՍԱՌԱ.

Ի՞նչ ըրիր ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Դեռ միայն տեղեկութիւններ ըստացայ ։

ՍԱՌԱ.

Ինծի խօսք տուիր որ երէկ գիշեր . . .

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Պարագաները յաջող չեղան ։*

ՍԱՐԱ.

*Հապա այս գիշեր ։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Այս գիշեր ալ ո՛չինչ․․․ Պարապ տեղը բերդին բոլորակքը պտըտեցայ․․․ անօգո՛ւտ աշխատութիւն․․․ բոլորովին անկարելի եղաւ ։ Անշուշտ անոր վրայ կը հսկեն ։ Պզտիկ աղջիկը ոտքը պարտէզէն դուրս դըրածին պէս՝ ծառաները անոր ետեւէն կ'երթան ։*

ՍԱՐԱ.

*Եթէ հարկաւոր է՝ քեզ խոստացած վարձքիս կրկնապատիկը կու տամ ։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Բայց ինչ պիտի ընես այդ պզտիկ աղջիկը ։*

ՍԱՐԱ.

*Ո՛հ, ամենեւին մի՛ վախնար անոր համար․․․ եթէ իմ յոյսերս յաջողին, անոր խիստ մեծ երջանկութիւն մը կը սպասէ․․․ Ան սահմանուած է երիտասարդ աղջկան մը տեղը անցնելու, որուն մահուան վրայ տասը տարուանէ 'ի վեր կու լան ։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Ո՛հ, կ'իմանամ․․․ այսպէս պիտի ըսէք իր ծնողացը․ Աղջիկնիդ մեռած կը կարծէք, բայց ան մեռած չէ․․․*

ՍԱՐԱ. առանձին.

*Եթէ իմ նպատակս յաջողի, իշխանազունը պիտի կարծէ թէ իր աղջիկը գտաւ․․․ մեր ամուսնութիւնը անոր ծնունդը օրինաւոր պիտի ընէ, ու իմ փառասիրութեանս երազները գոհ պիտի ըլլան ։ (Բարձր ձայնով ։) Աղջկան վրայով բոլոր իմ քեզ տուած մանրամասն տեղեկութիւններս պիտի հաստատես, որպէս զի գործը կատարելապէս յաջողի ։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Անհո՛գ եղիր ։*

ՍԱՐԱ.

*Վաղը, երեկոյեան ժամը տասին տունս եկու ։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Ժամը տասին տունդ պիտի ըլլամ ։*

ՍԱՐԱ.

*Պարտէզի դուռէն մտիր, որ քեզի համար բաց պիտի թողուն ։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Աղէկ․․․*

ՍԱՐԱ.

*Քեզ միայն պիտի սպասեմ․․․․ ամեն բանի մէջ կը յարմարինք․․․ սակայն աղջիկը ինծի պէտք է ։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Իմ շահասիրութիւնս այս գործին համար որքան եռանդ ունենալը կը ցուցընէ քեզ ։*

ՍԱՐԱ.

*Գուցէ հոս շաբաթ մը կամ ամիս մը մնալու պատրաստուիս․․․*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Անօգուտ է այնքան ժամանակ մընալս, վաղը գիշեր պիտի մեկնին ու աղջիկը միատեղ պիտի տանին ։*

ՍԱՐԱ.

*Ուրեմն մինչեւ վաղը․․․․ Այս մարդը արդեօք մեզ չկրնա՞ր օգնել ։*

ՖՐԱՆՍՈՒԱ.

Չեմ գիտեր թէ մինչև վաղը կըր֊նա՞նք հոս մնալ:

ՍԱՌԱ.

Ի՞նչպէս:

ՖՐԱՆՍՈՒԱ, ձեռքով ցուցընելով.

Հո՛ն, գիւղին մէջ, պանդոկին ծայրը Լէթիէրը տեսայ. պուտ գի֊տես անշուշտ.... որ ան.... իր ամուսնոյն մահուանը համար սուգի մէջ է:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Գարշելին...

ՖՐԱՆՍՈՒԱ.

Կը տեսնես որ հոս խիստ շատ կե֊նալու չկայ...

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Ո՛հ, Լէթիէրը սուգի մէ՛ջ է.. Ներեցէ՛ք, տիկին, բայց երբեմն արդեւքը միջոցի տեղ կրնանք բա֊նեցընել... Ամենևին միտս չունի, եթէ այն կնոջ առջևը երևնաք, այնպէս չէ՞:

ՍԱՌԱ.

Անտարակոյս:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Բարեհաճեցէք մինչև պանդոկը երկնալով ըսել Լէթիէրին որ հի֊մա բերդէն կու գաք, ուր իր էր֊կանը մահուան լուրը ու իր ըրած կորուստը իմանալով մեծապէս ցա֊ւեցան, և պատրաստ են իրեն օգ֊նութեան հասնելու... Զան սոխ֊ալեցէք որ այս առտու հոս գայ:

ՍԱՌԱ.

Բայց ասկէ ի՞նչ կ'ելլէ:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Հիմա ժամանակ չ'ունիմ ձեզ ա֊սոր պատճառը իմացընելու.... Ֆրանսուան հիմա ձեզի Լէթիէրին տունը պիտի ցուցընէ, ես չեմ կըր֊նար ասկէ հեռանալ...

Զանազան մինչև վանդակներուն քով կը դառնայ,
Ֆլէօր տը Մարին ալ ձախակողմէն ներս կը
մտնէ:

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ. ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.
Ետքը՝ ՖՐԱՆՍՈՒԱ.

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Կարի կողմս հոս ձգած պիտի ըլլամ, ուր գրած եմ տիկին տ'Արվիլի աղքատաց համար ինծի տուած սակը:

Դէպ 'ի բազմոցը կերթայ, Միթրը տ'Իֆօլ
ներս կը մտնէ:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Տիկին տ'Արվիլը Ֆլէօր տը Մարիին ըսաւ. Մեր բարեգործու֊թեանց գործակիցը պիտի ըլլաս... Այս խօսքը բան մը չի նշանակեր, բայց բաւական է:

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, զինք տեսնելով.

Ո՛հ, ինչ կը տեսնեմ... Ո՛վ Աստուած, Աստուած իմ, ո՛վ պիտի ազատէ զիս: Այս մարդը հոս ի՞նչ կ'ուզէ:

Ծառերուն ետին կը պահուի:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Յոյսս ասոր վրայ է... տոսյգ է

որ այն կառաղի Լէթիէրը ձեռքիս տակն էր ։ (Տեսնելով որ Ֆրանսուան ներս կը մտնէ ։) Ինչո՞ւ եկար ։

ՖՐԱՆՍՈՒԱ.

Վախուս պատճառաւ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ի՛նչ ըսել կ'ուզես ։

ՖՐԱՆՍՈՒԱ.

Կոմսուհւոյն դիմացը չկրցայ խօսիլ։ Գործը գէշի կ'երթայ ։ Պէնուա ու Պարպիլեօն բանտ դրուեցան ու Շուէթը նամակ մը տուաւ որ քեզ տամ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Նամա՛կ մը ։(Կ'առնու և կը կարդայ ։)
“Մեր վրայ կը կասկածին . . . Ե-
“րէկ եկան խուզարկութիւններ ը-
“րին, նոյն միջոցին՝ Պարպ-Րուժ
“ներս մտաւ, կ'ուզէր գիտնալ թէ
“դուն յաջողեցա՞ր . . . Զա՛ն բռնե-
“ցին ու հարցափորձ ըլլալով պար-
“տաւորեցաւ իր ո՛վ ըլլալը յայտնե-
“լու . . . . Չափազանց զարմացայ՝
“երբ տեսայ որ ան՝ Թամփլը փո-
“ղոցը բնակող Պ. Ֆէրանն էր”։
(Կենալով ։) Ժագ Ֆէրա՛ն, ա՛ն, ո՛հ, իմ իշխանութեանս տակն անցաւ ան։ Կրնամ ուրեմն անոր վրայ տիրել ես ալ։ (Կարդալը կը շարունակէ ։) “Ըստ
“որում իրեն դէմ բան մը չկար,
“իսկոյն զան ազատ թողուցին”։
Ժագ Ֆէրան, հիմա քեզ տակս առի։

ՖՐԱՆՍՈՒԱ.

Բայց դուն ի՛նչ կ'ըսես ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ես կ'ըսեմ թէ պզտիկը ձեռքերնիս անցածին պէս, Մարսիալի տունը տանինք զան՝ Աւերողաց կղզին[1] ու աս իրիկուն միասին Փարիզ երթանք եղած գործերը աւելի մօտէն տեսնելու համար ։

ՖՐԱՆՍՈՒԱ.

Ուրեմն հաւաստի ես որ պիտի յաջողի ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Հիմա կը տեսնես . . . բայց ո՛վ են եկողները . . . հեռանանք ասկէ . . .

Ֆրանսուային հետ խուցին մէջ կը մտնէ, ու դուռը կը գոցէ ։ Ֆլէօր տը Մարի ծառերուն ետեւէն դուրս կ'ելլէ։ Երաժշտութեան ձայները աւելի կը մօտենան ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Հազիւ թէ ոտքի վրայ կրնամ կենալ։ Բնաւ ըստ գիտայ չէ որ աս մարդիկը հոս կը գտնուին . . . Ամեն բան լսեցի . . . դաւաճանութիւն մը կը խորհին ինծի . . . մարքիզուհւոյն . . նմանապէս իմ բարերարիս դէմ . . . Այսօր գիշեր չեղած ինչ վտանգի մէջ ըլլալնին պիտի իմանան . . . բազմութիւնը կը լեցուի . . . ո՛հ , մինակ ըլլալ կ'ուզեմ . . . որ կարենամ լալ։

## ՏԵՍԱՐԱՆ Ջ.

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ . ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ . ԼԷԹԻԷՐ . ԲԻԷՐ . ԲԵՐԴԻՆ ԾԱՌԱՆԵՐԸ . ՋԿՆՈՐՍՆԵՐ . ԳԻՒՂԱՑԻՆԵՐ . ԳԻՒՂԱՑՈՒՀԻՆԵՐ ։

ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ, խումբ մը գիւղացիներու ։

Ա՛ղէ , պատրաստեցէք ուրկանը ,

[1] Ile des Ravageurs.

դուք նետեցէք ու միւսները պիտի քաշեն. . . . Կանայք կողմերը պիտի պատրաստեն։ (Լէթիէր, որ սուտի աչքեր հագած էր.) Մի՛ վախնար, եղբայր, օրիորդը խիստ բարի է։ (Երբ Փլէօր տը Մարի տօղը ելլելէն ետքը, Տիկին Տիւպրէօյլ զան կը կանչէ.) Օրիո՛րդ, տիկին մարքէզուհին ինծ ըսաւ որ այս խեղճ այրի կինը քեզ ներկայացընեմ։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, տեսնելով անոր նայելու, տիկին դ'Արվիյլ զատած տալը անոր ներկայացընէ։

Այո, բարի կին։

ԼԷԹԻԷՐ.

Ո՛հ, օրիորդ, ես և զաւակներս ձեր բարերարութեանը արժանի եմք, երեք ամիսէ 'ի վեր հիւանդութիւնը զմեզ աւեր ըրաւ, էրիկս քաղաքին մէջ առած վէրքերուն վրայ՝ երեք ամիս հիւանդ պառկելէն ետև մեռաւ։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ի՛նչ կը լսեմ . . . գո՛ւն ես։

ԼԷԹԻԷՐ.

Լսա՛ծ էիք արդէն մեր գլխուն եկածները։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Այո՛, այո՛, ամեն բան պիտի պատմեմ տիկին տ'Արվիյլին, ու հաւատա եղիր որ իր բարեգործութիւնները . . .

ԼԷԹԻԷՐ.

Տիկին Տիւպրէօյլ իրաւունք ունէր ըսելու թէ խիստ բարի էք։ (Անոր ձեռքը կը բռնէ որ համբուրէ, Փլէօր տը Մարի կը դառնայ, Լէթիէր կը ճանչնայ զան և կը պոռայ.) Ո՛հ։

ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ.

Ի՞նչ կայ։

ԼԷԹԻԷՐ.

Ա՛ն է։ (Ձեռքէն կը բռնէ.) Բայց երեսս նայէ անգամ մը։

ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ, զան մէկդի հանելով.

Թշուառական, ի՛նչ կ'ընես։

ԼԷԹԻԷՐ, պոռալով.

Բարեկամներ, այս աղջիկը երկանըս մահուանը պատճառ եղող աւազակաց խումբին մէջէն է։

Բազմութիւնը հետաքրքրութեամբ և զարմանալով կը մօտենայ, ըսելով,

Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ըսէ այս կինը։

ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ.

Դուն յիմար ես, տրամութենէդ կը ցնորիս, սիրելի կինս, սխալմունք ունիս . . . ըսէ՛ ուրեմն այս մարդոց որ կը սխալիս։

ԼԷԹԻԷՐ։

Ե՞ս կը սխալիմ, ահա դուք ալ նայեցէք, ինչպէս գեղնեցաւ թշուառականը, և ակռաները կը կափկափեն։

ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ.

Լիրբ կին, գո՛ւրս ելիր ասկից։ Այսպէս կը յանդգնիս օրիորդին պատուոյն դպչիլ։

ԼԷԹԻԷՐ.

Օրիո՞րդ ըսիր . . . գո՛ւն յիմարացեր ես . . . փողոցները երգող աղջիկ մ'է, որ քաղաքին մէջ ասդին անդին թափառիլը տեսած եմ, և ո՛չ օրիորդ մը։

Գիւղացիները կը մրմռան։

ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ.

Վռնտեցէք սա կինը աս տեղէն։

(Ամենքն ալ անշարժ կը կենան.) Չէ՞ք լսեր ուրեմն ըսածս, կը հրամայեմ ձեզ որ աս կինը վռնտէք։

Մրմունջները կը շատնան։

ԲՈՒԷՐ.

Եթէ զան կը ճանչնայ... խրատունք ունի... իր էրիկը մեռուցեր են։

ԼԵԹՈՒԷՐ.

Սրիկայ անձանց ձեռօք թշուառացեալ այրի կին մը վռնտել կ'ուզէք... հարցուցէք անգամ մը անոր թէ զիս չի՞ ճանչնար։

ՏԻԿԻՆ ՏԻԳՐԻՕՅԼ.

Կը լսե՞ս ինչ կ'ըսէ, օրիորդ։

ԼԵԹՈՒԷՐ.

Անունդ Կուալէօզ[1] է թէ չէ։

ՖԼԵՕՐ ՏԸ ՄԱՐԻ. ցած ձայնով և ամչնալով լռած ժամանակը.

Այո՛։

ԳՈՒՂԱՑԻՔ. կը մրմռան, և պոռալով կ'ըսեն։

Ահա՛ կը խոստովանի, ահա՛ կը խոստովանի։

ՏԻԿԻՆ ՏԻԳՐԻՕՅԼ.

Բայց ինչ, ինչ է խոստովանածը։

ԼԵԹՈՒԷՐ.

Թող որ պատասխանէ, և պիտի խոստովանի թէ այս աւազակներուն մէջ կը բնակէր, թէ զանոնք ամենն ալ կը ճանչնայ։

ՖԼԵՕՐ ՏԸ ՄԱՐԻ, ցած ձայնով.

Կրնամ զանոնք ճանչնալ, առանց երբէք...

ՏԻԿԻՆ ՏԻԳՐԻՕՅԼ, հեռանալով.

Ո՛հ, դժբաղդ աղջիկ։

Մարիին այս պատասխանին վրայ՝ բազմութիւնը կը յառաջանայ, անոր շուրջ կողմը կ'առնու ու ապառնալիքներ ընելով զան քիչ քիչ ետ կը մղէ։

ԲՈՒԷՐ.

Օրիորդ պիտի կոչէինք այս յանդուգն աղջիկը, որ մեր տէրերուն հետ կ'ապրէր։

ՖԼԵՕՐ ՏԸ ՄԱՐԻ. հեծելով.

Ո՛վ Աստուած, ինչ ըրի ձեզի, պարոններ։

ԲՈՒԷՐ.

Այո՛, այս կնոջ էրիկը մեռուցեր են... և դուն զան սպաննողները կը ճանչնաս։

Ֆլէօր տը Մարի այսպէս մինչև լճին վանդակները կը քշուի. Մէնըը տ'Իւրօլ խօսքին դառնալը կէս մը կը բռնայ, ու եղածը կը դիտէ։

ԼԵԹՈՒԷՐ.

Երկինքը արդարութիւն կայ. (Ֆլէօր տը Մարիին վրայ երթալով.) Թշուառական, իմ սև զգեստս չե՞ս տեսներ։ (Մէկալ յառաջանալով.) Բարի մարդիկ ես իրենց վրէժը հանելու միջոցը կ'ունենամ... ո՛հ, դուն կը կարծէիր թէ չպիտի՞ ճանչցուիս։

ՖԼԵՕՐ ՏԸ ՄԱՐԻ. ետ քաշուելով.

Տիկի՛ն, տիկի՛ն, հիմա զիս ջուրին մէջ պիտի նետեն։

ԳՈՒՂԱՑԻՔ.

Այո՛, այո՛, ջուրին մէջ նետենք զան։

Տիկին Տիգրիօյլ երկիւղալից ձայն մը կը հանէ։

ՏԻԿԻՆ ՏԻԳՐԻՕՅԼ. անոնց և Ֆլէօր տը Մարիի մէջ տեղը մտնելով.

Թշուառականներ, ինչ կ'ընէք։

[1] Goualeuse որ է Chanteuse երգեցիկ աղջիկ կը նշանակէ։

ԳԻՒՂԱՑԻՔ.

Ջո՛ւրը նետենք զան, ջո՛ւրը։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Շնորհք ըրէք, կ'աղաչեմ, պարոններ։

ՏԻԿԻՆ ՏԻՒԳՐԷՕՅԼ.

Կեցէք. եթէ օրիորդը յանցաւոր է՝ միթէ ձեզի՞ կիյնայ զատելը։ Զան տեղ մը պահենք մինչև որ տէրերը գան։

ՈՄԱՆՔ.

Այո՛, այո՛, ճիշդ է. . . աս աւելի աղէկ է։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. Տիկին Տիւգրէօյլին ձեռքը համբուրելով.

Ո՛հ, զիս կ'ազատես. . .

ՈՄԱՆՔ.

Այո՛, այո՛, 'ի բանտ։

Ֆլէօր տը Մարի անոնց պահապանութեներէն շրջապատուած եկեղեցիէն դուրս կ'երթայ, Մէկերը զ'Իզէօլ Թևերէն կը բռնեն, առանց անորմէ հեռանալու, զան ներս կը քաշէ, ու դուռը կը գոցէ։ Գիւղացիք պահապանութեներ ընելով հոն կը կենան։ Տիկին Տիւգրէօյլ դուռը կը բանայ և դրան բանալիքը իր հետը կ'առնէ։

ՏԻԿԻՆ ՏԻՒԳՐԷՕՅԼ.

Հիմա ձեզ խմաց կու տամ որ այս դուռը տիկին մարքէզուհւոյն միայն պիտի բանամ։

Ֆլէօր տը Մարին ձայնը կը լսուի խուցին մէջէն։



# ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

## ՊԱՏԿԵՐ ԵՕԹՆԵՐՈՐԴ. — ԲԱՆՏԸ

Տեսարանը բանտի մէջ է ։ Ներքին կողմը բակին վրայ նայող դուռ մը ունի ։ Աջ կողմը դռնակ մը, ուսկից դատաստանարան կ'երթուի ։ Մէջ տեղը կրակարան մը որուն բոլորտիքը բանտարկեալները ժողվուած են, բազմոցներու վրայ նստած կամ ոտքի վրայ կանգնած ։ Ամենքն ալ Բիքվինէկրը մտիկ կ'ընեն, որ հաստ կոճղի վրայ ու անոնցմէ աւելի բարձր նստած է ։ Մեթրը տ'Էքօլ բանտին ներքին կողմի դրան առջեւն է եւ դուրս կը դիտէ ։ Պարպիլիօն դատաստանարանը տանող դրանը քով կեցած մտիկ կ'ընէ ։ Պէնուա ուրիշ բանտարկեալներու հետ Թատրոնին մէջ տեղը նստած է ։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՊԷՆՈՒԱ. ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ. ՊԱՐՊԻԼԻՕՆ. ԲԻՔՎԻՆԷԿՐԸ. Եւլն՝ ՖՐԱՆՍՈՒԱ. ՀԱՅՐ ՌՈՒՍԷԼ. ԺԷՐՄԷՆ. ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ ։

*Բիքվինէկրը խօսելու ժամանակը՝ թատրոնին մէջ տեղը. քար մը փեղէն կը վերցունէ. և անկէ կտաւ մը՝ հողով լեցուած տոպրակներ գետնին վրայ կը դնէ. որոնք բանտարկեալները Պէնուային հնազանդելով՝ իրենց մէջ կը բաժնեն, ոմանք ալ իրենց գլխարկին մէջ կը լեցնեն ։*

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ.

Ան ատենը մշուկը ըսաւ Հմայագործին...

ՊԷՆՈՒԱ.

Է՛, եղբը, ընկեր պատմութիւնըդ, Բիքվինէկրը ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ.

Կէսօր պիտի զարնէ ։

ՊԷՆՈՒԱ.

Ո՛վ է ըսողը թէ կէս օր է ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ.

Ախորժակս ։

ՊԷՆՈՒԱ.

Ախորժակդ մէկ քառորդ առաջ կը քալէ ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ.

Շատ աղէկ...

ՊԷՆՈՒԱ. *բանտարկեալներուն.*

Անոր չորս կողմը շրջապատ եղէք ։ Բիքվինէկրի պէս ծոյլի մը վրայ

վստահութիւն չըլլալը աղէկ գիտէք։

ՖՐԱՆՍՈՒԱ. (Ծակէն մէջէն գաւիթը նայե-լէն մը դուրս հանելով.)

Քանի մը բաց հող միայն մնաց հանելու։ (Դուրսէն ծակէն ներս կը մտնէ։)

ԲՈՒՔՎԻՆԷԿԸ.

Ըն առնէր վհուկը հմայագործին բսաւ. Դուն պարոն ծեր կուզը կը պաշտպանես, ես ալ երիտասարդ բանաստեղծը, որ եկեղեցւոյ մկանց պէս աղքատ է... բայց հոգ չէ, իշխանուհին և իր բոլոր գանձերը ինքը պիտի առնու։

ՊԷՆՈՒԱ. (Ներս յայտնուելով.)

Բան մը չկայ, Մէթրը տ'Էքօլ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ո՛չ, պահապանը բակին մէջ ժուռ կու գայ։

ՊԷՆՈՒԱ, (Պարպիլիօնին որ յետ կողմի դրա-նակին աչքին կը դնէ.)

Դուն ինչ լուր ունիս հոգ։

ՊԱՐՊԻԼԻՕՆ.

Երէկուան եկող մարդը միշտ հարցուփորձի տակ է։

ՊԷՆՈՒԱ.

Օգուշայլը, վասն զի աս Ժէրմէնը իր գուոյլ և յուսահատ դէմքովը ամենեւին չեմ հաւնիր։ (Կրակա-րանին բոլորտիքը եղողներուն դառնալով.) Հէ, հէ, Բուքվինէկը կը յօրանջե՞ս։

ԲՈՒՔՎԻՆԷԿԸ.

Սուտ է. ալ պատմելու կարողութիւն չունիմ... Ընօթութենէս ձայնըս բոլորովին քաշուեցաւ. բայց ուրիշ անգամ մը ձեզ Կրէնկալէ և Քուփ-ան-Տէօրին պատմութիւնը պիտի պատմեմ. գիտնալ պէտք էք որ այս՝ այնպիսի պատմութիւն մ'է, որ թռչունները իրենց ոստերէն վար պիտի իջնեն մտիկ ընելու համար։

ՊԱՐՊԻԼԻՕՆ. (Մօտենալով. և կէս յայտնով մը.)

Ըհա՛ Ժէրմէնը բերին, Ժէրմէնը։

(Պէնուա յայտ մը կը հանէ, Ֆրանսուա ծակէն դուրս կը ցատկէ, ու իր յետ-քը տարեր բանտարկեալ մը երկնցընել կ'ուզէ, որ դեռ ծակին մէջ գտնուե-լով դուրս ելլելու համար ինքը զեր կը վերցընէ. Բայց յոյս կողմի դրան նէկէրուն յայտը լսելով՝ Պէնուա տակը տարին կը դնէ և զան իր տեղը տանելով ծակը կը գոցէ. առանց ըն-կերութեանը որ Բուքվինէկէն գաղտնի պահած էին աս եղածը, առջևն ան-դին կը ցրուին։ Ժէրմէն յոյս կող-մէն ներս կը մտնէ, ու դրդմութեամբ անկիւն մը կ'երթայ կը նստի։ Բան-տարկեալները իրեն կը հեռանան, Բուքվինէկէ զատ։ Մէթրը տ'Էքօլ ներքին կողմն կը դառնայ։)

ՖՐԱՆՍՈՒԱ, (Կամաց մը Պէնուային.)

Ի՞նչպէս միւսը ան տեղէն դուրս պիտի ելլէ, քանի որ աս նոր եկողը հոս է։

ՊԷՆՈՒԱ, (Կամաց մը.)

Ի՛նչ կայ, պէտք է որ նշանին սպասէ։ (Մէթրը տ'Էքօլին.) անոր վրայ ալ վստա՞հ ես։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ինչպէս որ իմ վրաս վստահ եմ։ Հաւրինէօր խիստ դժուարաւ մտքը որոշեց որ գողութիւն ընէ, բայց

ըստ երեւոյթից շատ աղէկը ըրաւ հիմա, ասկէ զատ պատուհանի մէկ փեղկը կոտրեց, ու թէեւ այս առտու հոս եկաւ, տեսաք որ խկոյն հաճութեամբ մեզի հետ աշխատիլ սկսաւ։

ՊԷՆՈՒԱ. Ֆրանսուային.

Ամէն բան պատրաստ է։

ՖՐԱՆՍՈՒԱ.

Միայն տախտակ մը մնաց, ան ալ հանելուս պէս, դրացի տան մը մէջ պիտի գտնուինք։ Ընկերներս անցքը լայնցընելու վրայ է։

ԲՈՒՔՎԻՆԷԿՐԸ. ճամբայ մը ժէրմէնին.

Այդպէս տրտում մի՛ ըլլար... քեզի հոս դէշ աչքով կը նային, անոնց հետը մէկ ըլլալ պէտք է. ես ո՛չ սրտոտ եմ եւ ո՛չ քաջ, բայց շատախօս եմ։ (Կէս ձայնով կը պոռայ.) Պահապանը, պահապանը։

ՀԱՅՐ ՌՈՒՍԷԼ. Ներս մտնելով.

Ըսէք նայիմ, պարկեշտ նստած էք։

ՊԷՆՈՒԱ.

Հրեշտակներու պէս, պղտիկ հըրեշտակներու պէս։

ՀԱՅՐ ՌՈՒՍԷԼ.

Կէս օրին բանտին բակը պիտի անցնիք, ըստ որում շէնքին մէջ նորոգութիւններ պիտի ըլլան, այս սրահը խօսնարան պիտի ըլլայ։

Պահապանը դուռն մը բանտարկեալներու հետ ներքին խուցը կը կենայ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ուրեմն իմ փաստաբանս հո՛ս պիտի գայ զիս գտնելու։

ՊԷՆՈՒԱ.

Դուն փաստաբա՞ն մը ունիս։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Կը յիշե՞ս այն կարմիր մօրուօք անձը, որ երբեմն քաղաքին մէջ կը տեսնուէր... Հիմա հոս պիտի գայ իմ հրամաններս ընդունելու, բայց, առանց կարմիր մօրուքի ու պարկեշտ մարդու կերպարանքով։

ԺԷՐՄԷՆ, մէկուսի.

Ի՛նչ կասկած է այս որ սրտիս մէջ կը ծագի։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Երէկ, Ֆրանսուային հետ քաղաքը հասած ժամանակնիս բռնուեցանք. ես անոր նամակ մը գրեցի, ու ան հիմա հոս պիտի գայ։ Իմ ամէն կամքս պիտի կատարէ. եւ եթէ բարեկամներս բանի մը հարկաւորութիւն ունենան, անշուշտ պէտք է որ հնազանդի ան։

ՀԱՅՐ ՌՈՒՍԷԼ.

Բա՛կը անցէք, բակը. այցելուներ եկան։

ԺԷՐՄԷՆ. մէկուսի,

Հիմա պիտի իմանամ թէ սխալա՞ծ եմ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ. Ֆէրանին ներս մտնելը տեսնելով.

Չըսի՞... ահա եկաւ։

ԺԷՐՄԷՆ. Ֆէրանի քով վազելով, երբ միւս բանտարկեալները դուրս ելլեն,

Պ. Ֆէրան, Մօրէլի բաղդին վրայ ալ չեմ մտածեր։

ՖԷՐԱՆ.

Ինչպէ՞ս։

ԺԷՐՄԷՆ.

Անոնց ապրուստը ալ դուն պիտի հոգաս...

ՖԷՐԱՆ.

Ինչո՞ւ համար։

ԺԷՐՄԷՆ.

Ինչու որ դուն գողցար ադամանդը... ինչու որ ալ ճանչցուեցար... վերջապէս։

ՖԷՐԱՆ.

Պարոն, ես հանելուկներ չեմ հասկընար, մի կարծեր թէ ասոր համար քու գործդ դատաստանարանը աղէկ մը քննելու համար պիտի դանդաղիմ պատուիրելու։ Եթէ ըսելու բան մը ունիս, ուղած ատենդ կրնաս խօսիլ։

ԺԷՐՄԷՆ.

Համդարտ եղիր, պիտի խօսիմ։

ՖԷՐԱՆ. կամաց մը ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼի.

Աս երիտասարդը աղէկ նայէ...

ՀԱՅՐ ՌՈՒՍԷԼ.

Բակը անցէք, բակը։

Ժէրմէն պահապանին հետ դուրս կ'ելլէ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՖԷՐԱՆ. ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ. Ժէրմէնին ետեւէն դիտելով.

Կը ճանչնամ զան... ինչ ունիս հետը։

ՖԷՐԱՆ.

Հիմա կը խօսիմ... բայց ինչպէս հոս գտնուեցար, ես գէթ Ա'րվիյլի բերդը կը կարծէի...

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Գացի հոն... յաջողեցայ։

ՖԷՐԱՆ.

Գտա՞ր Ֆլէօր տը Մարին։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Քու տուած տեղեկութիւններդ ճիշդ էին։

ՖԷՐԱՆ.

Աղջիկը քու ձեռքիդ տակն է։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Խիստ դժուարաւ ձեռք ձգեցի։

ՖԷՐԱՆ.

Ո՞ւր զան ինծի պիտի բերես։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Սպասէ վայրկեան մը, հաշիւ կայ ընելիք։

ՖԷՐԱՆ.

Տեսնե՛նք։

Կը նստին.

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Ֆլէօր տը Մարին ապահով տեղ մը տանելէս վերջը ու անոր զգեստներէն մէկ քանին Սէն գետոյն եզերքը ձգելէս ետքը, որ իր կամաւոր մահուանը հաւատան, փարիզ դալու դժբաղդ գաղափարը ունեցայ։ Քաղաքը հասած ժամանակս գիս բռնեցին ու հոս բերին։ Բայց Հուէթէն իմանալով քու կրկնակի անձ մը ըլլալդ, մտածեցի որ մի և նոյն մեղքին երկուքնիս ալ մասնակից ըլլալնուս համար՝ պէտք ես օգնել ինծի, ու անոր համար քեզ գիր գրեցի։

ՖԷՐԱՆ, նստարանին վրայ ծանօթ[?] մը մոռցուած հողմէ լեցուած գլխարկ մը գտնելով. ինքնիրեն։

Այս հողը... ինչ կը նշանակէ ասս։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ.

Գիտեմ որ Հուէթի ըրածը մեծ

գիտա մ'է. ո՜հ, դուն երկդիմի մարդն ես... ո՜հ, դուն քու մեղսակիցդ ես, կանաչ ակնոց գործածող փաստաբանին՝ կարմիր մօրուօք մեխ-րիմը։ Ինչպէս իրարու յարմար էիք։ Ի՜նչ զգուշութիւն, ի՜նչ հնազանդութիւն։

ՖԻՐԱՆ. Ակնոցներուն վրայէն նայելով, խնդալէն.

Դարձեալ հող կը տեսնեմ։ (Վա-րը դիմը վեր կ'ելլէ, ու գլուխ մը կը տեսնուի, որ Մոփէն կ'ըլլայ։ Ֆերրան տեսա-րանէն այս խօսքը կը լսէ։ Ցուցնելով տա-ցին քարտուղարը՝ քարշը յայտնել կ'ընէ.) Բաւական է, կրնաս զիս կորսնցընել, բայց դուն խելացի մարդ մ'ես, կրնանք իրարու հետ յարմարիլ։

ՄԻԹՐԸ ՏԻՖՕԼ.

Շատ աղէկ, բայց պէտք եմ քեզի հետ համարձակ խօսիլ. ուստի գիտցած եղիր որ քու վրադ ունեցած տեղեկութիւնս պիտի հրատարակեմ։

ՖԻՐԱՆ. Թուղթին մօտենալով. իր հաստատագիրը կը կարդէ։

Այդ հեգնութիւնը խիստ դառն է ինծի... առանց կատակի խօսինք։ Ի՞նչ գին կ'ուզես որ լուռ կենաս։ (Դրամապանակը տալը կը ցուցնէ։ — Խնդալէն.) Հո՛ս ըլլալ պէտք է։

ՄԻԹՐԸ ՏԻՖՕԼ.

Եթէ դուն անպատիւ մեղապարտ մը ըլլայիր, քեզմէ աս բանիս համար տասներկու հազար ֆրանք առնելով գոհ կ'ըլլայի... բայց քու բարուցդ խստութիւնը, բարձր առաքինութիւնդ, և անչափ վստահութիւնդ, ուրոնցմով զիս խաբեցիր, 'ի հարկէ իմ պահանջմունքներս կ'աւելցընեն։ Ուստի քեզմէ ամէն մէկ ստախօսութեանս համար տասնական հազար ֆրանք կ'ուզեմ։

ՖԻՐԱՆ.

Երեսո՞ւն հազար ֆրանք։

ՄԻԹՐԸ ՏԻՖՕԼ.

Ու եաքը դարձեալ գիրար կը տեսնենք։

ՖԻՐԱՆ, հաստատագրին ծայրը աչքին մօտեցնելով։

Դարձեալ գիրար կը տեսնենք։

ՄԻԹՐԸ ՏԻՖՕԼ. անոր ըսածը բռնելով.

Ո՜վ Աստուած։

ՖԻՐԱՆ.

Ի՞նչ կայ։

ՄԻԹՐԸ ՏԻՖՕԼ.

Ո՛չինչ։

ՖԻՐԱՆ.

Այո՛, կ'երևի թէ աս տեղէն օգ կը բանի։

ՄԻԹՐԸ ՏԻՖՕԼ.

Ո՛չ, այդ բանին աղէկ հոգ կը տանիմ հոս։

ՖԻՐԱՆ. Թուղթը վերցնելով.

Կը սխալիմ. օդ բանած տեղերուն պէս վտանգաւոր բան չկայ... երթամ պահապանին իմաց տամ։

ՄԻԹՐԸ ՏԻՖՕԼ, ակնոց մը ձեռք բռնելով։

Շնորհք ըրէ, երեք ամիսէ 'ի վեր այս դետնին տակը կ'աշխատիմ։

ՖԻՐԱՆ՝ հաստատութեամբ,

Ո՞ւր է Ֆլէօր տը Մարի։

Դուռը վեր կ'ելլէ ու գլուխ մը կը տեսնուի որ Մոփէն է։

ՄԻԹՐԸ ՏԻՖՕԼ.

Աւերողաց կողմն, ուր Մարսիալ աղջկան հետ ինծի պիտի սպասէ, այս

գիշեր Ընիէրի կամուրջին վրայ ժամը եօթին ։

ՖԷՐԱՆ.

Նրա՞նք թէ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Բայց ինչպէս գիտցար որ այս քարը . . .

ՖԷՐԱՆ.

Այն մարդը որ քեզ ցուցուցի իր դուրս ելլելու ժամանակը . . . ( Ինքնիրեն . ) Ժէրմէն , վրէժխնդրութիւնս պիտի չուշանայ քու վրադ թափելու ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ա՞ն թշուառականը . . . ո՛հ . երկու ժամէն պիտի փախչէինք ։

ՖԷՐԱՆ.

Բնաւ մի յուսահատիր , կասկած մը չտալու համար ինծի առաջարկեց որ ես զքեզ ամբաստանեմ . . . դրեթէ ժամ մը ունիս ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ժամ մը . դեռ ժամանակ ունինք մատնիչ մը պատժելու ։

ՖԷՐԱՆ.

Հիմա ալ կ'երթամ , քեզ նայիմ , այս իրիկուն ժամը եօթին Ընիէրի կամուրջին վրայ կը սպասեմ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Բայց եթէ մեր փախուստը չի յաջողի ։

ՖԷՐԱՆ.

Ըսել է որ Ժէրմէնը պիտի թողուք որ ապրի ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Բայց դուն որ կը ճանչնաս մեր գաղտնիքը . . .

ՖԷՐԱՆ.

Միթէ մեղսակիցս արդարութեան ձեռքէն ազատելու միջոցները չունիմ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Սակայն դուն ինծի սպառնացար ։

ՖԷՐԱՆ.

Քեզ վախցընելու համար . . . պատասխանելէ առաջ մտածել պէտք էր ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Իրաւունք ունիս ։ Դուն ինծմէ աւելի յաջողակ ես , ես քու տեղդ կարծեցի զիս ։ Անոր առջեւը խոնարհէ , թշուառական , և միշտ անոր հետ գնա ։

ՖԷՐԱՆ , Րուսէլին , որ վերջին խօսքերուն վրայ ներս կը մտնէ .

Եթէ կը հաճիս՝ զիս ներս մըտցուր որ դատաստանարանը երթամ ։

ՐՈՒՍԷԼ.

Ահա , պարոն , ( Դուռը Ֆէրանին բանալէն ետեւ՝ դուռը բակին մէջ եղողներուն կը խօսի ։ ) Կրնաք ներս մտնել ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ժէրմէնի վրայ խորհինք . . . ու միջոց մը գտնենք իր մատնութիւնը պատժելու ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՄԵՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ , որոց մէջ է նաեւ ԺԷՐՄԷՆ , խուռնելով ներս կը մտնեն ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ , ցած ձայնով Ժէրմէնին .

Ըսէ , նայինք , նամակ մը առիր , անշուշտ բարի լուրեր ստացար . . .

ԺԵՐՄԷՆ.

Այո՛, վաղը, աղնիւ պաշտպանի մը ձեռօք կը յուսամ՝ ազատ ըլլալ։

ԲՈՒՔՎԻՆԷԿԸ.

Մինչև վաղը շշմյշ կեցիր։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ. ականջին մը Բուլինէին.

Ի՞նչ կ'ըսես անոր։

ԲՈՒՔՎԻՆԷԿԸ.

Ն՞ս, ոչինչ.... Կրէնկալէի ու Քուփ–ան–Ցէօյի պատմութիւնը կը պատմեմ։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Շատ աղէկ։ (Պինուսան և Ֆրանսուան մէկդի տանելով։) Ինծի մտիկ ըրէք... մեր մէջը մատնիչ մը կայ։

ՖՐԱՆՍՈՒԱ.

Մատնի՛չ մը։

ՊԻՆՈՒՍԱ.

Անոր անունը ինծի տուր անգամ մը, որ հասկըցընեմ անոր... խօսէ՛, ո՞ւր է ան։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ, Ժերմէնը ցուցնելով.

Ահա աս պարոնը...

Հոս Բուլինէնը ուշադրութեամբ մտիկ կ'ընէ։

ՊԻՆՈՒՍԱ.

Ժերմէ՞նը, ինչպէս գիտես։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ապացոյցներ ունիմ... մատնիչ է։

ՊԻՆՈՒՍԱ.

Սպասէ... հիմա միաքս բան մը եկաւ... վայրկեան մը առաջ պահապանը անոր կ'ըսէր թէ քիչ մըէն գլխաւորին քովը պիտի կանչուի։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Պէտք չէ որ երթայ։

ՊԻՆՈՒՍԱ. հառաչ ձայնով մը.

Չպիտի երթայ... ես անոր հոգ կը տանիմ...

ԲՈՒՔՎԻՆԷԿԸ. զարհուրած, խնդալէն.

Կորսուած է։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Կը հասկընամ ըսածդ, բայց ե՞րբ։

ՊԻՆՈՒՍԱ.

Երբ պահապանը դուրս ելլէ։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Փախչելու ժամանակը կ'ըլլայ։

ՊԻՆՈՒՍԱ.

Երբ ամէնքն ալ վար իջնան, Ժերմէնը ինծի հետ գործ պիտի ունենայ։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ, դուռը ցուցնելով.

Միւսը միշտ հոն կը սպասէ, պահապանը չպիտի՞ երթայ։

ՊԻՆՈՒՍԱ.

Ըստ սովորութեան, պտուըը ուտելու պիտի երթայ՝ երբ մեզ տեսնէ որ Բիքվինէկրին առասպելները մտիկ ընելու սաստիկ զբաղած ենք։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ, Պինուսային.

Բարեկամները ստակ ունի՞ն։

ՊԻՆՈՒՍԱ.

Քեզի ու ինծի պէս։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ. ձայնով մը.

Եթէ մեր փախուստը յաջողի, այս իրիկուն ամէնքդ ալ կը սպասեմ Ըմնիէրի կամուրջին վրայ։

ՊԻՆՈՒՍԱ. ձայնով մը.

Ինչո՞ւ համար։

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ըստ որում քիչ մը առաջ հոս եկող մարդը հոն պիտի ըլլայ, և հոն մեզի համար գործ կայ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ. ըսելով որ ժամը չէ՞ հնչուած։

Միայն կէս ժամ մնաց։ (Բարձրաձայն։) Արդեօք կրնամ զան ազատել, պաշտպանը ինծ մօտիկ ընելու համար հոս կեցընելով . . .

ՄԷԹՐԸ ՏԻՔՕԼ. ձայնը մեղմացընելով.

Ինծի նայէ, ժամանակը կանցնի, ու համբերութիւնս կը հատնի։

ՊԷՆՈՒԱ. Բարձր ձայնով.

Բիքվինէկրը, տեսնենք, պատմէ մեզի Քուաֆ-տու-Ցէօյի պատմութիւնը։

ՌՈՒՍԷԼ.

Այո՛, շատ գոհ պիտի ըլլամ ըզձեզ հանդարտ տեսնելով, ես ալ երթամ իմ աշուռը երկու խօսք ըսեմ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ. Ինքնիրեն.

Երկնցընենք։ (Բարձր ձայնով.) Հիմա կը սկսիմ, պարոններ, բայց պայման մը ունիմ . . . անուշեղէն ծախու առնել պիտի տամ . . . ու կը խնդրեմ որ պատուաւոր ընկերութիւնը քսան ժամ ձօնէ ինծի համար . . . Քսան ժամ, պարոններ, որպէս զի հռչակաւոր Բիքվինէկրը մօտիկ ընէք։

ՊԷՆՈՒԱ.

Հիմա պատմէ, լմցընելէ ետև քեզ քսան ժամ կուտամք։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ.

Նախքը չ'ըլլար, ո՛չ . . . . առաջ կ'ուզեմ։

ՊԷՆՈՒԱ.

Բայց դուն մեզ ո՞վ կը կարծես . . . թէ քեզ պիտի խաբե՞նք։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ.

Դո՞ւք . . . չեմ կարծեր։

ՊԷՆՈՒԱ.

Ահա ես երկու ժամ կուտամ։ Այսպիսի հաճութեան մը համար երկու ժամի խնայողութիւն կըլլա՞յ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ. մատները ծալելով.

Մէկ, տասն, տասնեւմէկ, տասներկու, տասներեք, չկրցանք լմցընել, դեռ պակաս է . . . Ձեզ նայիմ, հարուստներ, սեղանաւորներ, ու անշարժ կալուածքի տէրեր, քիչ մը ևս ջանք ըրէք . . . միայն եօթը ժամ մնաց, եօթը դժբաղդ ժամ . ո՛հ, պարոններ, պէտք հաւատացընէք թէ զձեզ անկրաութեամբ հոս դրին, և կամ թէ խիստ ագահ էք։

ԺԷՐՄԷՆ.

Ահաւասիկ քեզի տասը ժամ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ. ինքնիրեն, թասը սուն առնելով.

Բուն Պրիւքէի շան կը նմանի, ինքզինքը գործին մէջ կը մղէ . . . իմ ստակ խնդրելովս տասը բոպէ կրնայի վաստկիլ։

ՊԷՆՈՒԱ, ձայն մը ՄԷԹՐԸ ՏԻՔՕԼԻՆ.

Ըստ սովորութեան անկիւնը պիտի երթայ . . . առանց բան մը յայտնի ընելու՝ իր քովը երթամ նախ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ, Ժէրմէնին յետեւէն բռնելով.

Պարոններ, սեղանաւորը բարի տղայ մ'է, կը յուսամ . . . պատմուղին քով պատուաւոր տեղ մը կը վայլէ անոր։ (Ժէրմէնին յետեւէն բռնելով, ձայն մը։) Զգոյշ կեցիր, կեանքդ վտանգի մէջ է։

ՊԷՆՈՒԱ. ձայն մը.

Աղէկ, աւելի քիչ տեղ երթալու հարկադրեալ եմ։ (Բարձր։) Սկսէ, Բիքվինէկրը։

ԲԻՔՎԻՆԵԿՐԸ, Իրենէն.

Ըսուական երկար խօսիլ պէտք եմ որ Հայր Բուսէլը հոս մնայ։ (Ըսոր-յէր։) Պատրաստ էք։

ԱՄԵՆՔԸ.

Այո՛։

ԲԻՔՎԻՆԵԿՐԸ.

Մտիկ ըրէք ուրեմն։

ԱՄԵՆՔԸ.

Մեծ ուշադրութեամբ։

ԲԻՔՎԻՆԵԿՐԸ.

Կը սկսիմ. Ատենօք Փըթիթ փօնթը փողոցին մէջ... (Հայր Բուսէլէն, որ դողալ մը եւ կը դողայ.) Քու աշխի թաղդ էր, կարծեմ, անանկ չէ՞, պաշտպան։

ՌՈՒՍԷԼ.

Ո՛չ ես Շա-քի-Փէշ փողոցը կը բնակէի։

ԲԻՔՎԻՆԵԿՐԸ.

Այն փողոցին մէջ աղբիւր մ'ալ կայ, ճշմարիտ խիստ գեղեցիկ փողոց մ'է։

ՊԷՆՈՒԱ, համբերութիւնը կորսնցնելով.

Վերջապէս պիտի խօսիս թէ չէ։

ԲԻՔՎԻՆԵԿՐԸ.

Փըթիթ-փօնթի մէջ Քուփ-ան-Ցէօ անուամբ ամենաչար մարդ մը կար, որուն երեսի գոյնը կոշկի գոյնի կը նմանէր, մազերը կարմիր էին, աչքերը կանաչ, լեզուն ալ սեւ։ Աս ձիրքերով՝ Քուփ-ան-Ցէօ չեմ գիտեր որքան կրիայ, կապիկ, Հնդկաստանի խոզ եւ աղուէսներ ունէր, որոնք կը պատասխանէին նոյն թուով Սավօյացիներու կամ թողեալ տղաներու։ (Պահապանը եւ դողալով համար դողալ մը կ'առնու.) Հայր Բուսէլ, Կրէնկալէն առաջ տեսնել կուզեմ, քեզ Կրէնկալէն պատմեմ առաջ։

ՌՈՒՍԷԼ.

Կրէնկալէն պատմէ, տեսնենք, ետքը ալ կ'երթամ։

ԲԻՔՎԻՆԵԿՐԸ.

Աս տղաներէն մէկը, որ ամենէն տգեղն էր ու Կրէնկալէ կը կոչուէր, միշտ ծեծ կ'ուտէր թէ Քուփ-ան-Ցէօէն, թէ կապիկներէն եւ թէ բոլոր փոքր անասուններէն։

ՌՈՒՍԷԼ.

Խեղճ տղայ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ, Պէնուային.

Պահապանը դեռ չերթար...

ՊԷՆՈՒԱ, ձայնով մը, բարկութեամբ.

Անգա՛մը... ինչպէս կ'երկնցընէ խօսքը...

ԲԻՔՎԻՆԵԿՐԸ.

Կրէնկալէ խիստ տկար եւ խիստ վախկոտ ըլլալուն չէր կրնար իր վրէժն առնուլ... այլ կուլար, եւ իր միայն մխիթարութիւնն էր արգիլել մեծ անասունները որ պզտիկները չուտեն։

ՌՈՒՍԷԼ.

Կը գովեմ անոր ըրածը։

ԲԻՔՎԻՆԵԿՐԸ.

Ո՛հ, կը տեսնեմ թէ պատմութիւնըս քեզ հաճելի կ'երեւի... կ'իմանաս անշուշտ որ աղուէսներուն ու կապիկներուն գործոցը չէր խառնուէր, բայց երբ կը տեսնէր որ սարդ մը իր ոստայնին մէջ դարանը մտած է՝ Աստուծոյ արեւուն տակը թռչող խեղճ տկար ճանճ մը բռնե-

լու համար, Կրէնկալէ անոր ոստայ-նը կ'աւրէր, ճանճը կ'ազատէր ու սարդը կը ճզմէր ։

ՊԷՆՈՒԱ.

Պատմութենէդ շեղեցար, Բիքվի-նէկրը ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ.

Պատմութենէս շեղեցայ, պահա-պան. զքեզ դատաւոր կ'ընեմ . . . մտիկ ըրէ Կրէնկալէի գիշեր մը տե-սած երազը ։

ՐՈՒՍԷԼ.

Մտիկ ընենք, բայց շուտ պատմէ ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ.

Կրէնկալէ երազ տեսաւ որ ինքը այն ճանճերուն կը նմանի, որոնք ինքը ազատած էր, ու ինքն ալ մեծ ոստայնի մը մէջ ինկած էր. ուստի դուրս ելլելու համար մեծ ջանք կ'ը-նէր . . . ետքը հրէշի նման բան մը տեսաւ որ Քուփ – ան – Տէօի դէմքը ունէր . . . բայց մարմինը սարդ էր . . . այս սարդը կը մօտենայ և կը բռնէ զինքը . . . խեղճը կը զգայ որ հրէշին պաղ և մազոտ մեծ թաթերուն մէջ կը գտնուի, որ կ'ուզէ զինքը կլլել, ու զինքը մեռած կը կարծէ . . . Բայց ահա՛ իսկոյն ոսկեգոյն ճանճիկ մը կը հասնի, որ ադամանդեայ ասեղի մը պէս բարակ և փայլուն կտուց մը ու-նէր, կու գայ և բարկութեամբ մը ոստայնին բոլորտիքը կը թռչտի ։

ՀԱՅՐ ՐՈՒՍԷԼ. նստելով.

Ճշմարիտ խիստ զուարճալի պատ-մութիւն մ'է ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ. ինքնիրէն.

Ազատեցաւ բարեկամս ։

ՊԷՆՈՒԱ. կամաց մը.

Հիմա երեքն ալ գետինը պիտի փռեմ ։

ԴՐՍԷՆ ՁԱՅՆ ՄԸ.

Հայր Րուսէլ, ապուրդ պատրաստ է, միայն հինգ րոպէ կայ ։

ՀԱՅՐ ՐՈՒՍԷԼ, ոտք ելլելով.

Անցածը վաղը ։

Բիքվինէկրը բանտարկելոց մէջ եղած շարժումը տեսնելով, պարապ տեղը կ'աշխատի Հայր Րուսէլը խօսք բռնելու, երբ ան դուրս կ'ելլէ, Հայրէեան մըժէրմէնին կը մօտենայ ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ, Ներքէն կողմը քաշելով.

Զգո՛յշ կեցիր, պարոն Ժէրմէն ։

ՊԷՆՈՒԱ. Ժէրմէնին վրայ նետուելով.

Իրաւունք ունի. ինչու որ ահա քու սարդդ ։

Ծակին մէջ եղող բանտարկեալը դուռը վեր կը վերցնէ, տեսարանին վրայ կը ցատ-կէ և Պէնուային վրայ կը յարձակի ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ահա ես ալ անոր ոսկեգոյն ճան-ճիկն եմ ։

ՊԷՆՈՒԱ, ձգուելով, և Ժէրմէնը թողլով.

Աս սրիկան որու դէմ ելլել կ'ուզէ ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Անոնց դէմ, որ մատնու-թեամբ Աստուծոյ խեղճ ոչխար մը սպաննել կ'ուզեն ։

Ծակը բացուելէն վերջ՝ Մէնրը տ'Լը-ֆօլ մէջը կը նետուի պոռալով. — Կրցողը թո՛ղ փախչի ։

Անոր ետեւէն ալ շատ ուրիշ բանտարկեալներ կ'երթան ։

ՊԷՆՈՒԱ և քանի մը ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ.

Երկուքն ալ 'ի մահ . . . 'ի մա՛հ ։

ԲԻՔՎԻՆԷԿՐԸ, յառաջ գալով.

Պահապանները, պահապանները ։

ՊԻՆՈՒԱ. բանտարկեալներէն կը բաժնուի. ու ծովին մէջ նետուելով. կ'երթայ Շուրինէօրին.

Ուրիշ անգամ կը տեսնուինք, այս անգամ գործս ստիպողական է։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Երբ որ ուզես պատրաստ եմ, բարի մարդ։

Ոտքը ժայռին վրայ կը դնէ, ժամի մը չինուորներ վազելով կը մտնեն ու ներքին կողմը կարգաւ կը շարուին։

ՏԱՄՆԱՊԵՏ ՄԸ. շինուորաց.

Տեղէն շարժողին վրայ կրակ ըրէք։

Ամէնքն ալ անշարժ կը կենան։



## ՊԱՏԿԵՐ ՈՒԹԵՐՈՐԴ. — ԱՆԻԷՐԻ ԿԱՄՈՒՐՋԸ

Տեսարանին մէջ տեսնը՝ Անիէրի կամուրջը։ Որուն կամարներուն տակէն կըցցինները կը տեսնուին։ Ձախ կողմը գետեզրը կ'երեւի։ Աջ կողմը երկաթ նետած նաւակ մը։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Վարագոյրը բացուելուն պէս Մէթրը տ'Էքօլ շուարելով ներս կը մտնէ, ու կամուրջին դէպ 'ի առաջին կամարը կ'երթայ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ. ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ. ԳԻՒՂԱՑԻՔ. ՋՈՒԹԱԿԱՀԱՐՔ. ՀԱՐՍԱՆԻՔ.

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Մարսիալ, հո՞ն ես։

ՁԱՅՆ ՄԸ, դուրսէն.

Այո։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Փլէօր տը Մարիի՞ն հետ։

ՁԱՅՆԸ.

Այո։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Պահէ զան մինչեւ որ քեզ իմաց տամ... Աս երաժշտութիւնը եւ աս լապտերները ինչ կրնան ըլլալ արդեօք, որ այս կողմը կու գան.... (Քիչ մը կը մօտենայ, որ կամուրջին վրայ եղածը իմանայ, ուսկից հարսանեկան խումբը կը գալ երեւնալ.) Ո՜հ, կ'իմանամ, աս տիկին Տիւպրէօյլի ագարակին հարսանիքն է։

ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ, կամուրջին վրայ կը կենայ, երբ ծառաներուն խումբը պէտուրանին առջևն է :

Ես հոս պիտի կենամ, դուք Շա-րիօ տ'Օր գացէք ու բոլոր գիշերը խաղացէք :

ԳԻՒՂԱՑԻՔ.

Մեզի հետ եկէք, տիկին Տիւպ-րէօյլ . . . եկէք մեզի հետ :

ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ.

Ո՛չ, ո՛չ, իմ բարեկամներս, երէ-կուան գիպուածին վրայ խիստ տըր-տում եմ . . . ինչ առեն տ'Էրվիյլ տիկինը այնքան կը ցաւի այն խեղճ Ֆլէօր տը Մարիին մահուանը վրայ, ինծի բնաւ չվայլեր ձեզի հետ գալ :

ԳԻՒՂԱՑԻՔ.

Թողուզածնուդ պէս ըլլայ, բայց շատ կը ցաւինք :

ՏԻԿԻՆ ՏԻՒՊՐԷՕՅԼ.

Բիէր, կը հաճիս զիս տունը տանիլ :

ԲԻԷՐ.

Սիրով, տիկին Տիւպրէօյլ:

Զինուորը կը բերեն. — Տիկին Տիւպ-րէօյլ եւ կը դառնայ, Բիէր Բիէրին տալով, եւ ամբողջ գործաւորներն ե-րախտագիտութեան հնչիւններով ճամբայ կ'ելլէ :

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Կը հեռանան . . . կորսնցընելու ժա-մանակ չունիմ, այս գիշեր ժամը տասնին պէտք է որ կոմսուհւոյս քով ըլլամ : Փարիզ դառնալը խոհեմու-թիւն է արդեօք . . . սակայն զէնքս հետս առնելու հոգ պիտի տանիմ, որ ամեն վտանգի դէմ զիս կ'ապա-հովցընէ . . . հեռանալու առենս բնաւ հետք մը կորսնցընել պէտք չէ . . . Ֆէրան պիտի գայ . . . (Ներքին կողմը երթալով.) Շուտ եկու, աղջիկս :

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. առջի կամուրջէն առաջ գալով.

Ինձմէ ինչ կ'ուզես :

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Քիչ բան . . . կը տեսնեմ որ միա-տեղ չենք կրնար կենալ . . . Ուստի դէպ Պ. Ֆէրանին քով պիտի դը-նեմ, ինչպէս որ առաջ էիր . . . առոր կը հաւանիս, այնպէս չէ՞ . . .

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Չափազանց խաբուած ես կարծե-լով թէ պատիւը և առաքինութիւնը սրտիս այժ ու եռանդ աղդած չէ . . . գիտցիր սիրելի որ քեզի դէմ գտնելու համար քեզի չափ ուժով եմ :

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ի՞նչ կ'ըսես :

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ես քեզմէ չեմ վախնար, կըսեմ, քու զիս կորսնցընելու կամ մոցը-նելու վատ ուժիդ դէմ մեռնելու քաջութիւնը կը դիմադրեմ :

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ատոնք միայն խօսք են :

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ես քաջութիւնը դուն ինծի տուիր :

ՄԻԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ե՞ս :

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Այո՛, երէկ . քանզի զիս վախցուցած ժամանակդ իմացայ որ դուն գող և մարդասպան ես եղեր :

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Ի՞նչ կ'ըսէ աս։

ՖԼԻՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Երէկ, քու մեղսակցիդ հետ ըրած խօսակցութիւնդ լսեցի։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Թշուառական։

ՖԼԻՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Զիս տարած կղզինուդ մէջ, ուսկից փախչիլ չէի կրնար... պարտաւորեալ լուռ կենալ... բայց հիմա փողոցի մը, կամուրջի մը մօտ կը գտնուիմ... ես հոս պիտի կենամ մինչև որ մէկը անցնի, մինչև որ իմ աղաղակներս լսելով ինձ օգնութեան հասնին, ու տասներկու ժամ ետքը քու ո՛վ ըլլալդ և ինչ ընելդ կ'ըսեմ... քանզի լռութիւն պահելով մեղսակիցդ ըլլալ չեմ ուզեր.... փախի՛ր ուրեմն, փախի՛ր առջևէս, ըստ որում կենացս վրայ կ'երդնում, թէոր մէկը ասկէ անցնի՝ անոր պիտի խօսիմ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Հա՛, հա՛, ըսածդ մտածելու արժանի է...

ՖԼԻՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ուզածդ ըրէ, գիտես իմ ընելիքս։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ. *Խոկալէն.*

Եթէ ուզէ՝ ես կորսուած եմ... Թշուառականը ինքզինքը կը դատապարտէ... հիմա պէտք եմ ազատութիւնս և կեանքս ապահովեմ... բայց եթէ ան կորսուի՝ ո՛չ Ֆերանէն բան մը պիտի ստանամ և ո՛չ կոմսուհիէն։ Բայց կոմսուհիէն ինչու չպիտի ըստանամ, աս գիշեր նորէն կրնամ իրեն երթալ, ու չյայտնել իրեն ինչ որ պատահեցաւ... կրնամ փախուստս ապահովցընելու չափ բաւական ստակ ձեռք բերել անորմէ կամ դուցէ յափշտակել... Ֆլէօր տը Մարի... ուրիշ միջոց մ'ալ պիտի գործեմ... միթէ կրնա՞մ ես կենալ։ Հոս եղած նաւակին տակը ծակ մը կայ, որուն խուփը թէ որ հանուի, ջուրը ներս կը լեցուի, որով նաւակը կ'ընկղմի։

ՖԼԻՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ահա կամուրջին վրայ մարդիկ կու գան։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ. *Ֆլէօր տը Մարիին վրայ վազելով ու բռնելով զան.*

Բերանդ չբանաս, եթէ ոչ կը սպաննեմ զքեզ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅՆԵՐԸ. ՇՈՒՐԻՆԷՕՐ՝ *աջ կողմէն կամուրջին վրայէն ներս մտնելով և* ԹՕՐԹԻԼԵԱՐ, *ձախ կողմէն։*

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ըսէ շուտով, բարեկամ, ինչ տեսար։

ԹՕՐԹԻԼԵԱՐ.

Ի՞նչ բան։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Բան մը տեսա՞ր։

ԹՕՐԹԻԼԵԱՐ.

Հարսանիքէն և լուսինէն զատ բան չտեսայ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Պ. Ժէրմէնը ո՞ւր է։

ԹՈՐԹԻԼԵԱՐ.

Աս փոքր անտառին եղերքը կը սպասէ ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Սակայն անոնք աս տեղս ժամադիր եղան, երէկ շատ աղէկ լսեցի ես՝ երբ ծակին մէջ պահուած էի ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, ցած ձայնով.

Շուրինէօրն է ։ (Ֆլէօր տը Մարին բռնելով որ փախչիլ կ'ուզէ.) Այդչափ մի աշխատ առներ, հիմա ես պիտի կանչեմ զան ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Դո՛ւն ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, բարձր ձայնով.

Է՛, ինծ նայէ՛, Շուրինէօր, հո՛ս եկու ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Մէթրը տ'Էքօլն է ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Հո՛ս եկու ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Հիմա կու գամ ։

ԹՈՐԹԻԼԵԱՐ. ցած ձայնելով.

Մինակ է ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Կ'ուզես որ միւսերուն սպասեմ, գնա Պ. Ժէրմէնը գտիր, ու ըսէ անոր թէ փնտռածնիս գտանք ու հոս է ։

Շուրինէօր ձախ կողմէն և Թորթիլեար աջ կողմէն անտառին կ'ելլան

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, առանձին.

Այս շատ աղէկ եղաւ. այս կերպով անորմէ ալ կազատիմ, ու մէկ քարով երկու հարուած կ'իջեցընեմ . . . (Ֆ. տը Մարիին.) Տեսա՞ր . . . քու բաղձանքդ կատարեցի . . . քեզ բարեկամ մը կանչեցի . . .

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, խնդալէն.

Բան մը չկրցայ հասկընալ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Իմ վրաս վստահութիւն չունիս

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛չ ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ, [illegible] մօտենալով.

Ինծի՞ ալ չես վստահիր, Ֆլէօր տը Մարի ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ, անոր ձեռք տալով.

Անշուշտ քեզ կը վստահիմ.

ՇՈՒՐԻՆԷՕՐ, Մէթրը տ'Էքօլին.

Հիմա փախիր ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, բարձր ձայնով.

Փախչիմ, ինչու՞, մինթէ դուն ալ մեզի պէս բանտարկեալ չէիր, դուն ալ մեզի պէս բանտէն չփախա՞ր ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ես մեծ դուռէն դուրս ելայ, կը լսե՞ս ։ Ո՛հ, կարծեցիր թէ ես ալ ձեզի պէս սրիկա՞յ պիտի ըլլայի ։ Երբ պահապան զինուորները փողոցէս կ'անցնէին՝ գիտմամբ պատուհանիս փեղկը կոտրեցի, որպէս զի ձեզի հետ ըլլամ, ու Պ. Ժէրմէնը պաշտպանեմ, զոր առանց ինծի պիտի սպաննէիք . . . Բայց ըստ օրում փեղկ մը կոտրելու համար պատիժ չկայ, թէ որ զան շինել տանք, և երբ ես գործին եղելութեանը պատճառները պատմեցի, և անոնք եղածները իմացան, վրաս ծիծաղելով զիս վռնտեցին, իմ ուզածս ալ աս էր. որովհետև գիտէի որ զքեզ հոս պիտի գտնեմ . . . վասն զի երէկ բան-

տին ծակին մէջէն քու Փէրանի հետ ունեցած խօսակցութիւնդ մտիկ ըրի։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ուրեմն նայէ հիմա գործը ուր է, Փլէօր տը մարին հիմա ինծի պատճառներ յառաջ բերաւ, որով չուզեր ալ ինծի հետ ըլլալ... Միւս կողմանէ՝ մեր օտար երկիր երթալը անհրաժեշտ ըլլալուն, կը հասկընաս, ալ մեզի խիստ ծանրութիւն կը պատճառէ ան... ուստի ազատութիւն կը շնորհեմք իրեն... և դուն կրնաս զան հետդ տանիլ։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ստո՞յգ է ըսածդ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Հիմա իսկոյն։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Փլէօր տը Մարի ու՞ր կ'ուզես երթալ։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Տիկին տ'Արվիլի բերդը։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Եկուր, Մէթրը տ'Էքօլ, ուրիշ ընկեր մը ունիս։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Երթանք, երթանք։

Գետեզրը կը մօտենան։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, ցած ձայնով.

Ատե՛նը չէ դեռ։

Կանչելու ձայն մը կը հանէ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ, ձենալով.

Ի՞նչ ըրիր։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Միթէ չի լսեցիր։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Նշան տուիր։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Հասկնալու համար բաւական սըրամիտ ես։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ա՞ս նշանը որո՞ւ տուիր։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Բարեկամացս, որոնց հետ պիտի մեկնիմ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ, վերստին դէտարանը իջնելով.

Ստոյգ է, հոս մօտ տեղեր կը գտնուին անոնք, ու դուն ինծի դարան մը կը լարես։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ե՞ս քեզի դարան մը լարեմ, միթէ գիտէ՞ի որ դուն հոս պիտի գաս, գիտէ՞ի որ այդ կողմէն պիտի երթաս։

Դէպ 'ի նաւակը կ'երթայ. ու կը պատրաստուի որ ճամբայ ելլէ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Մենք այն ճամբայէն չպիտի երթանք, ուր աս գժբաղդ աղջկան կը սպասեն։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, նաւակը մտնելով.

Ուսկից կ'ուզես գնա։

ՇՈՒՐԻՆԷՕՐ, անոր քովը կ'երթայ և զան կը բռնէ.

Դուրս ելիր անկէ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, ձայնելով.

Ինչո՞ւ պիտի ելլեմ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Այդ նաւակը կ'ուզեմ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Իմս չէ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Քեզի չափ ես ալ կրնամ զան իր

ափրոջը տալու ։ (Ֆլէօր տը Մարիին.) Նաւակը մտիր, աղջիկս ։

ՄԷԹՐԸ ՏԷՔՕԼ, նաւակը էր առնել ուզելով.

Մենք աս նաւակին պէտք ունինք, քան զի աստ՝ պիտի փախչինք ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. Ֆլէօր տը Մարիին հետ նաւակը մտնելով.

Նոյնպէս մենք ալ ։

ՄԷԹՐԸ ՏԷՔՕԼ. բռնել կուզէ.

Աս մեր ազատութեան վերջին միջոցն է ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. կը պոռայ.

Ե՛տ քաշուէ . . .

ՄԷԹՐԸ ՏԷՔՕԼ. նորէն նստի կ'ելնէ.

Բարեկամներ, ինձ օգնութեան հասէք ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Հաւաստի էի որ այսպէս պիտի ըլլայ, (նաւակը ցէղ է ծոցը հանելով.) Հիմա ալ ազատեցանք ։

ՄԷԹՐԸ ՏԷՔՕԼ.

Կորսուած են ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛վ Աստուած, շնորհակալ եմ որ ինձ ազատիչ մը խրկեցիր ։

ՄԷԹՐԸ ՏԷՔՕԼ.

Նախ Աւերողայ կղզին երթանք, ու ժամը 10ին փարիզ . . . Աստ կոմսուհւոյն տունը ։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՇՈՒՐԻՆԷՕՐ. ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. ԹՕՐԹԻԼԵԱՐ. ԺԷՐՄԷՆ. ԳԻՒՂԱՑԻՔ ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. որ Շուրինէօրի ինկած ժամանակը ծնկան վրայ եկած էր.

Բայց անգամ մը հոս նայէ ։ (Ոտք ելլելով.) Նաւակին մէջ ջուր կայ ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. վար ինկնելով.

Բան մը չէ, մի վախնար ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Տես ջուրը վեր կ'ելլէ, վեր կ'ելլէ ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. ինքը նետելով.

Ո՛հ, գարշելիներ, մատնութիւն մ'է աս ։

Բաճկոնը կը հանէ ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Կ'աղաչեմ զիս մի թողուր ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Հոգ մ'ըներ ։

Նաւակը կամաց կամաց ջրին հետ հաւասար կըլլայ ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Օգնութիւն, օգնութիւն ։

Շուրինէօր մէկ ձեռքով կամուրջին մէկ օղակին կը կախուի և միւս ձեռքով զան նաւակէն կը վերցընէ ։

ԺԷՐՄԷՆ. Թօրթիլեարի հետ կամուրջին վրայ կը հասնի.

Ահա նաւակ մը որ ընկղմի է, օգնութեան հասէք, օգնութեա՛ն ։

ԹՕՐԹԻԼԵԱՐ, կը վազէ կամուրջին վրայ կ'ելլէ ։

Ո՛հ, ո՛հ, աս կողմն ։

ՇՈՒՐԻՆԵՕՐ, Փլէօր տը Մարէին.

Ինքզինքդ աղէկ բռնէ, զքեզ չեմ թողուր։

ԺԵՐՄԷՆ.

Քաջալերութիւն, ձեռքերնիդ աղէկ բռնեցէք, չուան մը, չուան մը։

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Նաւ մը բերէք, նաւ մը, աղջիկը աղէկ վիճակի մէջ չէ, ես ալ նոյնպէս։

ԳԻՒՂԱՑԻՔ, վազելով կու գան.

Աս կողմը նաւակ չկայ։

ԺԵՐՄԷՆ, խամուրջէն ցատկելով.

Ո՛հ, զանոնք այսպէս տեսնելով սիրտս կտոր կտոր կ'ըլլայ։

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Կ'ուզէ որ երեք հոգի մեռնինք։

ԳԻՒՂԱՑԻՔ.

Ահա նաւակ մը, նաւակ մը, ահա նաւակ մը... (Գիւղացիի մը առաջնորդութեամբ նաւակ մը աջ կողմէն դուրս կելլէ.) Շուտ հասիր, հասիր, քիչ մը աւելի քաջալերութիւն։ Շուտ, շուտ, ահա եկաւ նաւակը, հասաւ։ (Նաւակը վարող մարդը՝ Փլէօր տը Մարին Շուրինեօրին գիրկէն կ'առնու.) Ազատեցաւ աղջիկը։ Կեցցես, կեցցես յաւիտեան։

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Նախ պզտիկին խելքը գլուխը բերէք։

ԳԻՒՂԱՑԻՔ.

Հապա դուն, Շուրինեօր։

ՇՈՒՐԻՆԵՕՐ.

Մի՛ վախնաք... ես սորված եմ...

Նաւակը խամուրջին կը հեռանայ, ու Շուրինեօր ինքզինքը ջուրին մէջը կը նետէ։ Նաւակին մէջի մարդը իր գլխարկը վեր կը վերցնէ, ու ամէն մարդ Փերանը կը ճանչնայ։

ՓԵՐԱՆ.

Այս անգամ ձեռքէս չպիտի ազատիս։



# ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՊԱՏԿԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ· – ՄԱՐՍԻԱԼԻ ՏՈՒՆԸ

Տեսարանը Աւերոցաց կղզւոյն մէջ Մարսիալի խրճիթին ներքին կողմը կը ներ-կայացնէ։ Որկաններ ու ձկնորսութեան ուրիշ գործիներ կը տեսնուին։ Աջ կողմը դուռ մը։ Ներքին կողմը պատուհան մը, ուսկից գետը կ'երեւի։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ. ՊԷՆՈՒԱ. ՓՐԱՆՍՈՒԱ. ՊԱՐՊԻԼԻՕՆ, *և երկու ուրիշ փախստական* ԲԱՆՏԱՐԿԵԱԼՔ։

*Վարագոյրը բացուած ժամանակը ասոնք գետնի վրայ և հին սեղանի մը բոլոր-տիքը ժողվուած են՝ կրակին քովիկ ծածկուած և յառաջացնելու մարդոց պէս։*

ՊԷՆՈՒԱ.

*Ահա բաղդերնիս բանեցաւ։ Ան-շուշտ չէիր սպասեր որ Ֆէրան հոս գայ ու մենք զան կողոպտենք։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Բայց ամեն բանէ առաջ այն լըր-տես աղջիկը կորսնցընելու հոգ տար, ափսոս Շուրինէօրին որ հոն զըտ-նուեցաւ։*

ՊԷՆՈՒԱ.

*Ան Ամերիկացիի մը պէս կը լողայ. իսկ Փրանսուան ո՞ւր է արդեօք։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

*Կղզւոյն ծայրը կեցած է դիտելու. բայց ահա կու գայ։*

ՊԷՆՈՒԱ· *Փրանսուային.*

*Ի՞նչ կայ։*

ՓՐԱՆՍՈՒԱ.

*Նաւակ մը կղզին կը մօտենայ։*

ՊԷՆՈՒԱ.

*Զինուո՞ր են արդեօք։*

ՓՐԱՆՍՈՒԱ.

*Ո՛չ, մէջը միայն մէկ մարդ կայ, որ թի կը քաշէ, ու խելաց վրայ ճերմակ բան մը կը տեսնուի։*

ՊԱՐՊԻԼԻՕՆ· *ներսէն խոշոր պատուհանէն նայելով.*

*Ցամաքը կ'ելլեն։*

ՊԷՆՈՒԱ· *որ նոյնպէս պատուհանէն կը նայի.*

*Այն ճերմակ երեւցածը նուազեալ կին մ'է, զոր գրկացը մէջ առած այս կողմը կու գայ։*

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ· *դուռէն.*

*Բարեկամներ, Ֆէրանն է։ (Տեսա-րանին մէջտեղէն ներս պառկելով.) Մար-սիալ, ներս ընդունէ զան, ու աս կողմը զրկէ։ (Դուռը կը գոցէ.) Մի՛ երեւիք, ահա ներս կը մանէ, մտիկ*

ըրէք, մտիկ ըրէք թէ Մարսիալին ինչ պիտի ըսէ։

ՊԷՆՈՒԱ. մտիկ ընելով.

Կը հրամայէ որ կրակ վառէ, ու աղջկան խնլքը գլուխը բերելու աշխատի։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, դրան բանալիին ձայնէն կը դողէ.

Փլէօր տը Մարին է, ու դեռ կ'ապրի.... (Ձայնին.) Փէրանի ձեռքը անցնի՛...ո՛չ, դարձեալ յաղթութեայ, միշտ յաղթութեայ անօրմէ ... թող սատանան աւիթ մը ներկայացընէ ինծ ու ես իմ վրէժս պիտի լուծեմ։

ՊԷՆՈՒԱ.

Ահաւասիկ եկաւ։

Ամենքն ալ ներքին խուցը կը քաշուին ու Փէրան առանց զանոնք տեսնելու ներս կը մտնէ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅՆԵՐԸ. ՓԷՐԱՆ։

ՓԷՐԱՆ. ձեռքը մինակ հուրծելով.

Դարձեալ բաղդը ինծ օգնեց, հիմա մինակ չպիտի փախչիմ, այլ Փլէօր տը Մարին ալ հետս պիտի առնում։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ. անոր մօտենալով.

Ես ալ կը վախնայի որ չըլլայ թէ Ռնիէրի կամուրջը դքեզ սպասեցընեմ։

ՓԷՐԱՆ. զարմանալով.

Դուն հո՞ս ես։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ, ձեռքերը ցուցընելով, որոնք [illegible]։

Քանի մը բարեկամաց հետ։

ՓԷՐԱՆ.

Ուրեմն դարան մը կայ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Այս առտուան քու ըրած զգուշութիւնդ մեզ մեծ ծառայութիւն մը ըրաւ։ Պէտք է որ այսպիսի վեհանձնութեան սկսուած գործ մը կատարես։

ՓԷՐԱՆ.

Ի՞նչ ըսել կ'ուզես։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Մենք մեկնելու սախալուած ենք, ու Ճամբու ծախքը ընելու սակ չունինք։

ՓԷՐԱՆ.

Ուրեմն դժուար կացութեան մէջ կը գտնուիք։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Ալ դժուարութիւն չկայ, ըստ որում դուն հոս ես։

ՓԷՐԱՆ.

Պարզ և յայտնի խօսքերը կ'ախորժեմ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՔՕԼ.

Շատ աղէկ, կամքդ կը կատարեմ։ Մէջերնէս մէկուն գիր մը պիտի տաս, որով Թօմբէլը փողոցի տանը մեծ և փոքր դուռները անոր առջևը պիտի բացուին։ Պիտի յանձնես նաև անոր՝ գրատանդ, գրասեղանիդ և միւս բանալիները. և երբ աս տեղաց գացողը գոհացուցիչ գումարով մը ետ դառնայ հոս, կրնաս ասկէ ազատ դուրս ելլել։ Ինչպէս որ մենք ալ այնպիսի քաղաք մը պիտի երթանք, ուր մարդկային աչքերը այնչափ բաց չըլլան ու բանտին դռները աւելի քիչ բացուած ըլլան։

ՖԷՐԱՆ.

Իսկ եթէ խօսքերնիդ չկատարեմ։

ՄԻԹՐԸ ՏԷՔՕԼ, դաշոյն մը կը շարժէ.

Ըս նայէ, թունաւորեալ է։

ՊԷՆՈՒԱ.

Հապա գէտը...

ՖԷՐԱՆ.

Ըհա ստուգիւ այս խօսքը պարզ է, ես ալ նոյն ճշտութեամբ պիտի պատասխանեմ ձեզի։ Էս ձեր ուզածին պէս գիր մը կու տամ ձեզ, բանալինները և ձեզ կը յանձնեմ։ Ձեր ըրկած անձը զգուշութեամբ ամէն բան պիտի ըննէ, և 'ի դարձին պիտի զարմանամ ես, բայց դուք խիստ պիտի յուսահատիք անոր բերած ամենաչնչին կողոպուտը տեսնելով, որուն համար անոր և ձեր գլուխը վըտանգի մէջ դրած կ'ըլլաք։

ՄԻԹՐԸ ՏԷՔՕԼ.

Ուրեմն գանձդ ուրիշ տեղ փոխադրեցիր։

ՖԷՐԱՆ.

Այդպիսի դէշ կատակ մի' ըներ... միթէ ամէն ունեցածս տունս կոխելով չառնի՞ն։

ՊԷՆՈՒԱ.

Մեզ սատկ պէտք է, կը լսես։ Ուրիշ խօսք չենք հասկընար. սատկ, շատ սատկ կ'ուզենք... ինչպէս պիտի ձեռք բերես, իմ հոգս չէ... գտիր, ինչ կ'ուզես՝ ըրէ. բայց շուտ, ես սատկ կ'ուզեմ։

ՖԷՐԱՆ.

Ես ալ իմ ուզածս հիմա ըսեմ ձեզ։ Ամենքդ ալ պիտի մեկնիք, հոն ճըղղ կինն անդամ հետերնիդ առնելով, ու հիմա իսկոյն զիս Ֆլէօր տը Մարիին հետ աս կղզւոյն մէջ մինակ պիտի թողուք։

ՄԻԹՐԸ ՏԷՔՕԼ.

Բայց աղջիկը իմ գաղտնիքս գիտէ։

ՖԷՐԱՆ.

Ընհոդ եղիր, ան ցքեզ չպիտի մատնէ. քանի՞ նաւակ կայ հոս։

ՄԻԹՐԸ ՏԷՔՕԼ.

Մերը, մէկ հատ մը կղզւոյն ծայրը կայ, մէկ մ'ալ դուն բերիր։

ՖԷՐԱՆ.

Ուրիշ չկա՞յ։

ՄԻԹՐԸ ՏԷՔՕԼ.

Ու ոչ մէկ հատ։

ՖԷՐԱՆ.

Երբ ցամաքը ելլէք, ձեր նաւակը ընկղմեցէք, որպէս զի հոս բնաւ մէկը չկրնայ գալ։

ՊԷՆՈՒԱ, ձեռնաւորն ձեռքը սղմէ.

Է՛, վերջը...

ՄԻԹՐԸ ՏԷՔՕԼ.

Մաիկ ըրէ, դո՛ւն ալ։

ՖԷՐԱՆ.

Ու այս վայրկենէս եւե, Գաղղիոյ մէջ, դուրսը, կամ որ և իցէ տեղ մը ձեզմէ ով որ ինծի համար նշան մը ընէ, կամ խօսք մը խօսի, ցուցընելու համար թէ զիս կը ճանչնայ, իրաւունք պիտի ունենամ զան սպաննելու։

ՄԻԹՐԸ ՏԷՔՕԼ.

Ո՛հ, պայմանները խիստ են։

ՖԷՐԱՆ.

Ինչու որ վարձքը խիստ մեծ է։

ՄԻԹՐԸ ՏԷՔՕԼ.

Ի՞նչպէս։

ՖԷՐԱՆ.

Մեծ հարստութիւն մը։

ԱՄԵՆՔՆ ԱԼ.

Մեծ հարստութիւն մը:

ՊԻՆՈՒԱ.

Եթէ ըրած խօսքդ ստոյգ է, ա-մենուն կողմանէ կ'երդնում, ու աս երդումը ամենքն ալ պիտի բռնեն, կ'երդնում որ, ինչ որ ուզես՝ պի-տի ընենք... Հիմա խօսէ...

ՖԻՐԱՆ. ՄԷԹՐԸ Տ'ԻՖՕԼԸ ԿԸ ՑՈՒՑԸՆԷ:

Թող ան խօսի:

ՊԻՆՈՒԱ.

Ի՞նչպէս:

ՖԻՐԱՆ. ՄԷԹՐԸ Տ'ԻՖՕԼԻՆ.

Այս գիշեր չէ՞ որ Փէրօլըթէյն իշխանազունը տ'Արվիյլ մարքէզու-հւոյն հետ կը կարգուի:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Այո՛:

ՖԻՐԱՆ.

Ամուսնութեան հանդէսէն անմի-ջապէս ետքը չպիտի մեկնին:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Աս ալ ստոյգ է:

ՖԻՐԱՆ.

Իրենց բերդը շրջապատող կարան անտառին մէջէն չպիտի անցնին:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Բոլորովին ճիշդ:

ՖԻՐԱՆ.

Քանի՞ հոգի պէտք է որ կառքը կեցընէք, թէ և անոնք ծառաներ և սուրհանդակներ ունենան, ու իշխա-նազունին սակի սնտուկը յափշտա-կէք, որուն մէջ երեք հարիւր հա-զար ֆրանգ կայ, և մարքէզուհւոյն ադամանդները նոյն գումարին կրկին արժողութիւնը ունին:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Վեց հոգի:

ՖԻՐԱՆ.

Կը յուսա՞ք թէ կարենաք գլուխ հանել:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Իրաւունք ունի... Տիկին տ'Ար-վիյլի մօտերիմն էր, անշուշտ անոր յանձնած է.... Աս մեր բարեկամն է, մեր ազատիչը, կարծեմ. պէտք եմք հաւատալ:

ԱՄԵՆՔԸ.

Այո՛, այո՛:

ՖԻՐԱՆ.

Ի՞նչպէս ուշ կը հասկընաք.

ՊԻՆՈՒԱ. ՖԷՐԱՆԻՆ.

Կարանի անտառը.... արդեօք չե՞ս սխալիր:

ՖԻՐԱՆ.

Բերդէն հինգ հարիւր քայլ ան-դին... միլեօ՛ն մը կայ:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Միրն է:

ՊԻՆՈՒԱ.

Աստու չ'եղած ամենքս ալ հարս-տացած ենք:

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Նտաէս եկէք, դուք ալ... ե-կէք, եկէք:

ՖԻՐԱՆ, ՊԱՏՈՒՀԱՆԸ ՑՈՒՑԸՆԵԼՈՎ,

Ո՛չ, աս կողմէն... (Պարտէզէ-նէն.) Դուն Մարսիալն ալ հետդ առ:

ՄԻՒՍՆԵՐԸ ՊԱՏՈՒՀԱՆԷՆ ԴՈՒՐՍ ԿԸ ԵԼԼԵՆ: ԳԻ-ՇԵՐԸ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԿՈՒԳԱՅ ՆԵՐՔԻՆ ԿՈՂՄԷՆ ՄԱՐՍԻԱԼԻՆ ՊԱՐՏԻԶԷՆՆ ՀԵՏ ԱՆՑՆԻԼԸ ԿԸ ՏԵՍՆՈՒԻ:

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՖԻՐԱՆ. ԱՌԱՆՁԻՆ,

Մեկնեցէք, դուք որ գլխ ղոհ ը-

նել կը խորհէիք, ես զձեզ իմ զործիքս կ'ընեմ . . . առաքինութիւն, ակարութիւն, մոլութիւն, մեղք, ամեն բան ինծի ծառայեցուցի, ինչպէս որ երէկուանէ 'ի վեր իմ վրաս արտօրող սպառնալիքներուն յաղթեցի։ Միայն թէ յիմարներէն ձեռք ձգած կողոպուտներուս հետ շուտ փախչելու խորհուրդս քիչ մը սխալական է, ուրիշ գործ չունիմ . . . իմ երկու բաղձացածներս, իմ կըրկին կեանքս, զանձս ու Ֆլէօր տը Մարին, ամենքն ալ ինձ պահեցի . . . իմ զանձս, հողին մէջ թաղած արկղիկս, որ բնաւ մարդկային էակ մը չկրնար զան զանել, և Ֆլէօր տը Մարին, այն Ֆլէօր տը Մարին որ ինծի պիտի ընկերանայ . . . այո, պէտք է որ զայ . իմ խոստմունքներըս, իմ աղաչանքներս զան պիտի համոզեն։ Ո՛հ, որչափ կը սիրեմ զան, որքան ոսկի ունիմ։ (Պզտիկ 'ի պատուհանը երթալով։) Ո՛հ, ցամաքը կ'երեւն, արդեօք իրենց խօսքին վըրայ պիտի կենա՞ն . . . ո՛չ, նաւակը աներեւոյթ կ'ըլլայ, հիմա ալ առանձին եմ . . . մարդ չկրնար հոս զալ . . . (Բաց մնացած դռնէն նայելով։) Ֆլէօր տը Մարին . . . . . տակաւին նուաղեալ է . . . Ո՛չ, շարժում մը ըրաւ, ոտքի վրայ կ'ելլէ, կու զայ . . . ո՛հ, երա՞զ է արդեօք, փափաքելի վայրկեան, որ այնչափ երկար ատենէ 'ի վեր ձնշուած սրտիս ձայներովը կանչուած են . . . ուրախութեան, ազատութեա՛ն ժամեր, աՀա՛ հասաք ինձ վերջապէս։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՖԵՐԱՆ. ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. (ընթերցած կարդալով.)

Ազատեցէք զիս, ազատեցէք զիս։

ՖԵՐԱՆ. (զան իր գրկածը մէջ առնելով.)

Ալ վտանգ չկայ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. (պարտաւորած էր խաղալով.)

Դո՛ւն ես . . . ո՛վ Աստուած։

ՖԵՐԱՆ.

Այո՛, ես եմ, որ ստոյգ մահուանէ մը ազատեցի զքեզ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Որեւիցէ վեհանձնութիւնդ կատարեալ ըրէ, նորէն զիս իմ բարերարներուս տունը տար։

ՖԵՐԱՆ.

Ա՛լ մոռցիր զանոնք։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Բայց առանց անոնց ի՞նչ պիտի ըլլամ։

ՖԵՐԱՆ.

Եթէ ուզես, քու բաղդդ ալ անոնց բաղդին չափ պայծառ և երջանիկ պիտի ըլլայ. թէև մինչև հիմա թշուառ էր։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Չեմ հասկընար ըսածդ։

ՖԵՐԱՆ.

Ո՛ւր որ երթաս, քու վիճակդ բըտորին և նաւաստ պիտի ըլլայ. իսկ ինծի հետ թագաւորական կեանք մը պիտի անցընես։ Մենք ալ Գաղղիայէն պիտի մեկնինք։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ես՞ քեզի հետ փախչիմ։

ՖԵՐԱՆ.

Կը վախնաս որ քեզ առանձին և ոխուր կեանքի՛ մը պիտի մատնեմ,

ինչպէս որ ես իմ թշուառ բնակարանիս մէջ կ՚անցընէի, ապահով եղիր։ Բաւական երկար ժամանակ թըշուառութեան, զրկանաց և խիստ աղաչութեան մէջ անցուցի կեանքս․․ հիմա ուրիշներուն պէս և ուրիշներէն աւելի զարգարանքը, ուրախութիւնները և տօնախմբութիւնները կը սիրեմ, ու հիմա այն փառասիրութիւնս յաղեցընելու միջոցները ունիմ, որոնց դուն ինծի հետ մասնակից պիտի ըլլաս։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ․

Ես, ե՞ս։

ՖԷՐԱՆ․

Այո՛, դուն․ ո՛հ, դուն զիս չես ճանչնար։ Դուն զիս կասկածաւոր և դժնեայ վիճակիս մէջ ճանչցար, կործող ծանրութեանը տակ ճնշուած, կեղծ խոնարհութեան մը տակ կորացած։ Դուն զիս ծեր, տրտում և խստաբարոյ կարծեցիր։ Ո՛չ, ո՛չ, ես տակաւին երիտասարդ եմ թէ եռանդեամբ և թէ ուժով։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ․

Ո՛հ, կը սոսկամ․․․

ՖԷՐԱՆ․

Ո՛հ, արդեօք ինչ ընել պէտք է քեզ ապահովցընելու համար։ Պէտք եմ քեզ իմ սէրս խոստովանիլ․ ուրեմն մտիկ ըրէ, այո՛, քեզ կը սիրեմ յիմարաբար։ Զու իմ տունէս մեկնելէդ ետև չես գիտեր թէ որքան վիշտ կրեցի․․․ գիտցած ըլլաս, որ շահերս, պարտաւորութիւններս, ընտանիս անգամ մոռցայ․․․ և միայն քեզ կը մտածէի, և միայն քեզ կ՚ուզէի․․․ զատ զքեզ․․․ աղատեցի․․․ ու հիմա աւելի կ՚ուզեմ որ զիս ըսպաննեն, քան թէ զքեզ իմ սէրէս բաժնեն․․․ ու յաւիտեանս չպիտի բաժնուինք իրարմէ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ․

Երբեք չես կրնար ստիպել զիս, որ քեզի հետ ընկերանամ․․․ երբեք։

ՖԷՐԱՆ․

Բայց դուն կը մոռնաս, որ իմ իշխանութեանս տակն ես։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ․ փախչիլ ուզելով․

Ո՛հ։

ՖԷՐԱՆ․ բռնելով զայն․

Ապահով եղիր․․․ այս իշխանութիւնը չարաչար չպիտի գործածեմ, բայց գոնէ բարեհաճէ ընդունիլ զիս որ հոս ոտքերդ ինկած, խոնարհ, հրամանիդ տակ, աղաչելով կեցած եմ․․․ Լսէ՛, թող որ ես խօսիմ․․․ միայն իմ աղաչանքներս մտիկ ըրէ՛, միայն լսէ աս անծանօթ և անգութ սիրոյս պարագայները, աս սիրոյս, որ բոլոր միւս կիրքերս կը նուաճէ․ իմ ձայնիս մէջ միթէ չե՞ս զգար այն լացերը, որ այնչափ անգամ զիս խեղդեցին։ Բայց երեսս նայէ, արդեօք դիմացս վրայ իմ կրած ցաւերուս մէկ հետքը չե՞ս նշմարեր։ Կ՚ուզէի որ աւելի ցաւ զգացած ըլլայի, որպէս զի երեսիս վրայ իմ սէրս աւելի աղէկ կարդայիր։ Իմ հետս եկու։ Ես քու կամքիդ պիտի հնազանդիմ, ալ նոյնը չպիտի ըլլամ, քու քովդ բարեբարոյ, մարդասէր և ազնուած պիտի ըլլամ։ Բարիք պիտի գործեմ․․․ Ըսէ աւելի ինչ ընեմ,

ինչ ընեմ որ քու սիրտդ շարժեմ։ Մտիկ ըրէ.... ոչինչ խօսքեր մի ըներ... ես ոսկի ունիմ... բայց շատ ունիմ... ուզած ատենդ պիտի տամ քեզ.... Քեզի հետ պիտի բաժնուինք... արդեօք ըսե՞մ... վերջապէս՝ զքեզ կնութեան պիտի առնում... Այո՛, իմ հարստութիւնս, իմ անունս բոլորն ալ քուկդ են։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Գո՛ւն, գո՛ւն... որ այնչափ մեղքերու մէջ թաթխուած ես։

ՖԷՐԱՆ.

Ի՞նչ մեղք։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Նրեք ամիս կայ՝ քաղաքին մէջ...

ՖԷՐԱՆ.

Ո՞վ ըսաւ քեզ...

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Նրէկ քու մեղսակիցներէդ լսեցի։

ՖԷՐԱՆ.

Ֆլէօր տը Մարի, կը սխալիս ա-տոնք ինծի ըսելով։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛չ, ուրեմն հասկըցիր թէ ո՞րչափ կ'ատեմ զքեզ... բայց միշտ հոս չպիտի ըլլամ, անօգնական։

ՖԷՐԱՆ.

Ադ ալ ինծի ըսելով կը սխալիս, միշտ կը սխալիս...

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ի՞նչ կրնաս ընել, սպաննե՞լ զիս։ Օրհնեալ է Աստուած, կեանքս խիստ դառն է ինծի։

ՖԷՐԱՆ.

Կրնամ սպաննել զքեզ, հոս քե-զի հետ մինակ եմ ես։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Օգնութեան հասէք։

ՖԷՐԱՆ.

Ինծ մտիկ ըրէ... տակաւին քու ձեռքդ է։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Մարդասպան, կորսուէ։

ՖԷՐԱՆ.

Գութ ունեցիր վրադ։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Չար սատանայ, կորսուէ։

ՖԷՐԱՆ. ընկճուած համբերել.

Կորսուած ես։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Վերջապէս մա՛հ, մա՞հ կըսպառնաս։

ՖԷՐԱՆ.

Ո՛չ տակաւին։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Աստուած իմ, դուն օգնութեան հասիր։

ՖԷՐԱՆ.

Աստուած չլսեր։

«Սերքէն կողմէ պատուհանը ատրճանով մը կը ճայթուի, ու Ժերմէն ներս կը նետուի, նոյնպէս և Շուրինէօր պատուհէն ներս կը մտնէ։ Ասոնք միայն իրենց անդրավարտիքովը և շապիկով են, որով ջուրէն ելած ձկներուն կ'երևին։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՖԷՐԱՆ. ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.
ԺԷՐՄԷՆ. ՇՈՒՐԻՆԷՕՐ.

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ո՛չ, Աստուած կը լսէ։

ՖԷՐԱՆ, սեղանին վրայէն ատրճանակ մը առնելով ու Շուրինէօրին վրայ պարպելով,

Ուրեմն զԱստուած քեզի օգնու-թեան կանչէ։

Ֆլէօր տը Մարի Ժէրմէնին քով կ՚ապաստանի. որ Շուրինէօրի երեւալը տեսնելով քայլ մը դէպ 'ի անոր կը յառաջանայ։

ԺԷՐՄԷՆ.

Վիրաւորուեցա՛ւ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. Ֆէրանը իր գիրկը մէջ բռնելով.

Ո՛չ, ո՛չ . . . փախեցէք։

ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Բայց դուն . . .

Ժէրմէն զան տանելով կը փախչի։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. Ժէրմէնին որ արդէն դուռը ելած էր.

Նա՛ւը մտէք, շո՛ւտ։

ՖԷՐԱՆ, Շուրինէօրին.

Արիւնդ կը վազէ, եւ ոյժդ կ՚սպառի։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ո՛չ տակաւին։

Ֆլէօր տը Մարի և Ժէրմէն նաւակը մտնելով տեսարանին ներքին կողմէն կ՚անցնին։

ՖԷՐԱՆ. Վերջին ուժով զան հրելով.

Անիծեա՜լ ըլլաս։

ՇՈՒՐԻՆԷՕՐ. Ուժը հատած գետինը կ՚իյնայ.

Ատենին հասանք։

ՖԷՐԱՆ.

Նաւա՛կ մը . . . նաւա՛կ մը . . .

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Կղզւոյն միւս կողմը գնա՛ փնտռէ։

ՖԷՐԱՆ.

Թշուառական, անոնց ուրախութիւնը չպիտի տեսնես։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ալ պիտի չկրնաս անոնց հասնիլ։

ՖԷՐԱՆ.

Տ. տ՚Արվիլլի տունը կը տանին զան։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Այո՛, և իշխանազունին քով։

ՖԷՐԱՆ, անոր յետեւէն կը կաղէ.

Ուրեմն ես կ՚ուզեմ որ կատաղութենէ մեռնիս։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ի՛նչ կուզես՝ ըրէ ինծի։

ՖԷՐԱՆ.

Զորս ժամէն երէկուան քու բանտի ընկերներդ անտառին մէջ պիտի յարձակին քու իշխանազունիդ և տիկին տ՚Արվիլլի վրայ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ի՞նչ կ՚ըսես, սրիկայ։

ՖԷՐԱՆ. որ Հայրէնան մը քովէն անցնելու մտած էր, Շուրինէօրին քովը կը դառնայ և կ՚ըսէ

Զորս ժամէն Ֆլէօր տը Մարին ըլլալու կողոպուտէն իմ բաժինս պիտի լինայ, իսկ դուն հիմա պիտի մեռնիս։

Քովէն անցնելէն մէջ բոցեր կը տեսնուին։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Կրա՛կ։

ՖԷՐԱՆ.

Որպէսզի քու սիրելիներուդ գլուխը եկածները տեսնելու ցաւը չունենաս։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Թշուառական . . . (Բոցերը կը շատնան։ Ֆէրան ներքին կողմէ պատուհանէն վրայ կ՚ելլէ.) Ո՛վ Աստուած իմ, տակաւին ապրիլ կ՚ուզէի . . .

ՖԷՐԱՆ.

Ես ալ կ՚ուզեմ որ մեռնիս։

Պատուհանէն դուրս կը ցատկէ։



# ՊԱՏԿԵՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ. – ՍԱՌԱ

Մաք–Կրէկօր կոմսուհւոյն տան մէջ սրահ մը։ Ներքին կողմը դուռ մը։ Աջ եւ ձախ կողմերը երկու ուրիշ դուռներ։ Տեսարանը լուսաւորուած է։

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՍԱՌԱ. Ետքը՝ ԾԱՌԱՅ ՄԸ։

Քանի մը րոպէէն այն մարդը հոս պիտի ըլլայ, այն մարդը, որուն ձեռքն է իմ ապառնի և ներկայ վիճակս... Թող աճապարէ ուրեմն... դուցէ մինակ ժամ մը ունիմ այն արհամարհելի ամուսնութիւնը ետ ձգելու համար, որ այս գիշեր պիտի կատարուի, և որ զիս յաւիտեանս անդունդին մէջ պիտի դահավիժէ... (Զանգակը կը հնչեցնէ.) Անհամբերութիւնը ժամանակը կ'երկարէ... (Ծառայի մը, որ ներս կը մտնէ.) Իշխանազունին պալատը գացի՞ն։

ԾԱՌԱՅՆ.

Այո, տիկին կոմսուհի։ Նորին Բարձրութիւնը հոն չէր։

ՍԱՌԱ.

Նամակս հոն թողուցի՞ն, և պատուիրեցի՞ն որ դարձածին պէս իր ձեռքը յանձնեն։

ԾԱՌԱՅՆ.

Այո, տիկին,

Դուրս ելլելու կը պատրաստուի։

ՍԱՌԱ, առանձին.

Ո՛հ, երբ պիտի կարծէ թէ իր աղջիկը գտնուեցաւ, արդեօք տարակոյս պիտի ունենա՞յ զան ճանչնալու... ու իմ իրաւունքներս ինծի տալու... Անշուշտ, խելացի մարդ մը երթայ, իշխանազունին սպասէ, և անոր պալատէն չմեկնի առանց տեսնելու և առանց զան իր հետը բերելու։

ԾԱՌԱՅՆ.

Բաւական է, տիկին կոմսուհի։

ՍԱՌԱ.

Ճամբուն վրայ եղած պզտիկ դուռը բա՞ց է։

ԾԱՌԱՅՆ.

Մէկ ժամէ 'ի վեր բաց է։

ՍԱՌԱ.

Իսկ դահլիճին դուռը։

Պարտէզին վրայ նայող աջ կողմը ցուցընելով։

ԾԱՌԱՅՆ.

Նոյնպէս բաց է։

ՍԱՌԱ.

Հոս աղէկ... ուրեմն առանց իմ հրամանիս մէկը ներս չմտնէ... եթէ իշխանազունը գայ, զան ներս պիտի մտցընես. գնա։ (Ծառան դուրս կ'ելլէ։) Եթէ Ռոտոլֆին հոս գալէն առաջ ան մարդուն հետ գործս յարմարցընեմ, ես ինքս պիտի երթամ զան գտնելու... ու եթէ հարկաւոր, անոր ետեւէն կ'երթամ, ու անոնց ամուսնութեան մէջ տեղը կ'ըլնամ և

իմ հակառակորդուհւոյս յուսահատութիւնը իմ երջանկութիւնս պիտի աւելցընէ ։ (Ինքնիրեն.) Ներս մարդ մտաւ. վերջապէս... յաղթութիւնն ու կարողութիւնն ինծի կը հասնին.... երբէք սիրտս այսպէս թունդ ելած չէր... Չեմ կրնար տեղէս շարժիլ։

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍԱՌԱ. ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ, դահլիճին դուռէն հեռուէն յառաջնելով.

Ներս մտնելու հրաման կա՞յ, տիկին։

ՍԱՌԱ.

Այո՛, դուն ազատ ես մտնելու և ելնելու, և բնաւ մէկը չպիտի գայ մեր խօսքը ընդմիջելու ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ. Ինքնիրեն.

Գիտնալը աղէկ է ։

ՍԱՌԱ.

Ի՞նչ եղաւ ան երիտասարդ աղջիկը։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Երէկ ամէն բան յաջողեցաւ ։

ՍԱՌԱ.

Ե՞րբ զան հոս ինծի պիտի բերես։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Այսօր նախ իրարու հետ յարմարինք ու վաղը զան հոս կը բերեմ (Ինքնիրեն.) Եթէ միւսը հաճի զան ինծի յանձնել։

ՍԱՌԱ.

Երիտասարդ աղջիկը մեր խաղալու խաղին անստուգութիւնը գիտնալ պէտք չէ ։ Ես իմ վրաս կ'առնում անոր այնպիսի պարագաներ սորվեցընելու, որոնց ինքն ալ հաւատայ։ Բայց որպէս զի ամէն բան այս առասպելին մէջ համաձայն ըլլայ, պէտք է անոր տղայութեանը մանրամասն պատմութիւնը գիտնամ, որքան ինքն ալ գիտէ ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Երկար պատմութեան հարկաւորութիւն չկայ ։ Միայն աս գիտէ ան թէ զինքը փողոցի մէջ գտած են ։

ՍԱՌԱ.

Ո՞րքան ժամանակէ 'ի վեր։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Տասը տարի է ։

ՍԱՌԱ.

Ան ատենը քանի՞ տարեկան կրնար ըլլալ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Հինգ կամ վեց ։

ՍԱՌԱ.

Բայց աւելի բան մը չե՞ս գիտեր։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Կարելի է ։

ՍԱՌԱ.

Գիտե՞ս թէ որո՛ւ աղջիկն է ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Ինծ չիմացուցին որ գիտնամ։

ՍԱՌԱ.

Քեզ չիմացուցի՞ն...ուրեմն մէկը զան քեզ յանձնեց ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Չէ չեմ ըսեր ։

ՍԱՌԱ.

Ո՞վ յանձնեց ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՖՕԼ.

Ո՛հ, առանց վճարման չըլլար. և շատ սուղ կ'ուզեմ ։

ՍԱՌԱ .

*Խօսէ , ոսկի պիտի առնուս ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Ուրեմն մտիկ ըրէ ։ Իրիկուն մը կին մը պզտիկ աղջիկ մը բերաւ , ըսելով թէ զան ձեռքէ հանել կ'ուզէր , ու իբր մուրալ պիտի հրատարակէր զան ։*

ՍԱՌԱ .

*Այդ կնոջ անունը ինչ է ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Շատ ատենէ ետքը իմացայ որ տիկին Սարաֆէն կ'անուանէր ։*

ՍԱՌԱ .

*Տիկին Սարաֆէ՛ն . ինչ գործ կ'ընէր այդ կինը ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Պ . Քաղ Ֆէրանին ծառայութեանը տակն էր ։*

ՍԱՌԱ .

*Քաղ Ֆէրա՛ն ըսիր . Թոմբըը փողոցին Քաղ Ֆէրանը ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Նոյն ինքն ։*

ՍԱՌԱ .

*Խարտեաշ փոքր աղջիկ մը ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Այո՛ , խարտեաշ ։*

ՍԱՌԱ .

*Կապոյտ աչքերով ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Ճիշդ այդպէս ։*

ՍԱՌԱ .

*Երէկուան բերդէն յափշտակուած նոյն աղջիկն էր ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Որուն համար գուքմիդ մ'ձարեցիք՝*

ՍԱՌԱ . ծունր վրայ իյնալով .

*Ո՛վ Աստուած իմ , ո՛վ Աստուած իմ , ան իմ աղջիկս է . քու գործերդ անքննելի են . . . կարելի՞ է այսպիսի բարեբաղդութիւն մը պատահիլ ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ . որու խօսքը կը դիտէ .

*Հոս ո՞րչափ հարստութիւն կայ ։*

Քանի մը վայրկեան մը յետոյ կը լռէ ։

ՍԱՌԱ . շուտ ելլելով .

*Կամուք մը , ինքն է ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ . առանձին , երբ Սառա դրամապանակին մէջ կ'երթայ .

*Առանց սպասելու եղեր երթամ , ո՛հ , ոչ . . .*

ՍԱՌԱ .

*Այսպիսի վայրկենի մէջ ան հոս դայ ։ Աստուած է զան խրկողը (Մէթրը տ'Իքօլին ) մանկան գիտցած գծագրութիւնը կը յիշէս ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Այո՛ , կը յիշեմ ։*

ՍԱՌԱ .

*Եթէ քեզ պատկեր մը ցուցնեմ , կրնա՞ս ճանչնալ ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Այո՛ ։*

ՍԱՌԱ .

*Եկո՛ւր ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ .

*Ո՞ւր ։*

ՍԱՌԱ . ակնոցը ձեռքէն առնելով .

*Հոն գոհարներուն մէջ ։*

ՄԻԹՐԻԴ Տ'ԻՔՕԼ . խնդալով , երբ Սառա իրաւունքին վրայ եղած ակնոցը ձեռքէն առնելով կ'երթայ .

*Այս ո՛րչափ գոհարներ են ։*

ՍԱՌԱ . ակնոցը դարձնելով .

*Եկո՛ւ , նկու ։*

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՌՕՏՕԼՖ՝ մինակ։

Երբ Սառա և Մէրին մէկտեղ աջ կողմէն դուրս կ'ելլեն, ծառայ մը ներսէն կողմի դուռը կը բանայ, ու ճրագամանը ներս կը մտնէ։

Մարդ չկայ, երբ իր նամակը այնքան ստիպողական էր, որ դարձեալ գալու նուաստութիւնը ունեցայ... բայց խաբէութեան ու սրտախօսութեան դէմ զգոյշ պիտի կենամ։ (Աջ կողմի դրան նէջին դրունքերուն յայնը կը լռէ։) Զարմանալի բան, այս դրան նիգը ինչու՛ դրին արդեօք... բայց այս վերջին օրն է որ այս կընոջ չարութեանցը ենթակայ պիտի ըլլամ, քանզի քանի մը ժամէն Գերլէմանսի հետ կը մեկնիմ, այս քաղքէս հեռու, ուր տասը տարի կայ՝ անձրապարծութեամբ աղջիկս յափշտակեցին, ուր երկու օր կայ՝ քանի մը չարագործներ յուսահատութեան ու անձնասպանութե՛ մատնեցին այն խեղճ աղջիկը, զոր իրենց ձեռքէն ազատած էի... տակաւին կրնայի տարակուսիլ... բայց գետին եղերքը Փլէօր տը Մարիի զգեստները գտնելով... ո՛հ, իմ սիրած զաւակներուս դժբաղդութե՛ պատճառ եղայ, գոնէ զան ճանչցողներուն կամ սիրողներուն բաղդը ապահովցուցի։ (Աջ կողմի դռնակէն ծեծի ձայն մը կը լսուի։) Հոն ինչ կայ արդեօք, ձայն մը լսեցի։ (Գնալով դուռը կ'երթայ ու բանալու կ'աշխատի։) Բացէք, դուռը բացէք։ Մէկը կայ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՍԱՌԱ Եւ ՌՕՏՕԼՖ.

Սառա դռնակէն կ'ելլէ և իշխանաբար զանը կը կեցնէ։

ՍԱՌԱ.

Կեցի՛ր, մարդ մի՛ կանչեր, մարդ մի՛ կանչեր։

ՌՕՏՕԼՖ.

Տիկին, դուն վիրաւորուած ես, վրադ արիւն եղեր է։

ՍԱՌԱ.

Բան մը չէ... չարագործ մը կոպտել ուզեց զիս։ Միայն թեթև վէրք մը ստացայ։

ՌՕՏՕԼՖ.

Բժիշկ մը կանչենք։

ՍԱՌԱ.

Մարդ մը չեմ ուզեր, բան չէ կ'ըսեմ քեզ, միայն քեզ, այլ միայն քեզ պէտք է որ խօսիմ։

ՌՕՏՕԼՖ.

Ի՞նչ ըսել կ'ուզես... Ըս քու վէրքիդ չնայելով, քու դիմացդ վրայ ուրախութիւն մը կը տեսնեմ։

ՍԱՌԱ, ձեռքով ընէզ բռնել.

Ո՛հ, ուրախ եմ, այո՛, ուրախ եմ, Ռօտոլֆ, Ռօտոլֆ, մեր աղջիկը...

ՌՕՏՕԼՖ, սարսափանօք.

Մեր աղջի՞կը ըսիր...

ՍԱՌԱ.

Կենդանի է... կենդանի է...

ՌՕՏՕԼՖ.

Ի՞նչ ըսիր... Ո՛չ... ո՛չ... անկարելի է, կը խաբես զիս, այս խաբեբայութիւն ու անիրաւ ստախօսութիւն մ'է։

ՍԱՌԱ.

Ռոտոլֆ, ինձ մտիկ ըրէ։

ՌՈՏՈԼՖ.

Ո՛չ, կը ճանչնամ քու փառասիրութիւնդ, գիտեմ թէ ինչ բանի կարող ես։

ՍԱՌԱ.

Այո՛, այո՛, ես քեզ խաբել ուզեցի, ու երկտասարդ աղջիկ մը գտնելու աշխատեցայ, զոր մեր զաւկին տեղ պիտի ներկայացնէի։

ՌՈՏՈԼՖ.

Բաւական է, տիկին, ո՛հ, բաւական է...

ՍԱՌԱ.

Գուցէ աս խոստովանելէս ետև պիտի հաւատաս ինձ. քեզ կ'ըսեմ որ բոլոր եղածը Աստուծոյ նախախնամութենէն է։ Քանի մը ամիսէ 'ի վեր երկտասարդ աղջիկ մը թշուառութենէ ազատեցիր ու զան գեղը տարիր...

ՌՈՏՈԼՖ.

Տիկին տ'Արվիլի տունը։

ՍԱՌԱ.

Միայն հիմա իմացայ որ դուն անոր պաշտպանն ես եղեր, և թէ ան տիկին տ'Արվիլին տունը կը գտնուէր, բայց որովհետև ան բոլոր իմ խորհուրդներս կը յաջողցնէր...

ՌՈՏՈԼՖ.

Նա՞քը, տիկին...

ՍԱՌԱ.

Զան մեծցընող անձանց հետ խօսքըս մէկ ընելով... երէկ զան յափշտակել տուի... ու հիմա անոնց ձեռքը կը գտնուի։

ՌՈՏՈԼՖ. շփոթմամբ.

Ալ ձեռքերնին չէ ան։

ՍԱՌԱ. Հեւ խառնուած շարժմամբ մը.

Ալ ձեռքերնին չէ՞։

ՌՈՏՈԼՖ.

Յուսահատութեամբ և երկիւղով ինքզինքը սպաննեց։

ՍԱՌԱ.

Ի՞մ աղջիկս։

ՌՈՏՈԼՖ.

Ի՞նչ կ'ըսես։

ՍԱՌԱ.

Ո՛հ, մեռա՜ւ, մեռա՜ւ աղջիկս։

ՌՈՏՈԼՖ.

Ֆլէօր տը Մարի քու աղջի՞կդ... ո՛հ, աս չկրնար ըլլալ... Սուտ, խելքդ գլուխդ ժողվէ, հանդարտէ.... Շատ անգամ երևոյթները մարդս կը խաբեն։

ՍԱՌԱ.

Ո՛հ, այս վերջին հարուածը զիս կը ճնշէ.... կարգա.... կարգա այս յայտարարութիւնը. (Ռոտոլֆ անմիջապէս Սառային ձեռքը կ'առնու.) Այն մարդուն բերանին խօսքերն են, զորոնք գրած ժամանակս զիս զարկաւ։

ՌՈՏՈԼՖ. Սառային նայելով.

Ո՛չ, չեմ հաւատար... ո՛վ Աստուած, դուն չես ներեր այս բանիս։

ՍԱՌԱ. անոր պատկեր մը ցուցնելով.

Հապա այս պատկե՞րը։

ՌՈՏՈԼՖ, պատկերը կ'առնու ու դիտելէն ետք կը համբուրէ.

Մարի՛, Մարի՛, ո՛հ, դո՛ւն էիր... (Աթոռի մը վրայ իյնալով։) Ես քեզ տեսայ, ես քեզ իմ քովս առի, և ափսո՛ս, չիմացայ թէ դուն իմ աղջիկս էիր։

ՍԱՌԱ.

Ո՜հ, արիւնս երակներուս մէջ կը սառի. . . ուրեմն առանց զան տեսնելու, և անոր հօրմէն նախատուած պիտի մեռնիմ։

ՌՈՏՈԼՖ. ոտքի ելլելով.

Ո՜հ, դուն քու աղջկանդ մահուան վրայ չես ողբար, այլ այն պատուոյ աստիճանին կորուստն է, որուն եռևէն ինկար անդրդուելի յամառութեամբ մը։ Ուրեմն այս անգութ վիշտերը քու պատիժդ ըլլան։

ՍԱՌԱ.

Ո՜հ, այո՛, աս վերջինն է կարծեմ։

ՌՈՏՈԼՖ.

Բայց պէտք է որ քու աղջկանդ քաշած տանջանքները ճանչնաս. . . Այո՛, տիկին կոմսուհի, նոյն միջոցին որ դուն զեղխութեան մէջ թագ մը կ՚երազէիր. քու աղջիկդ իր մատղաշ հասակին մէջ ամենահին լաթեր հագած, իրիկունները փողոցները կը պտըտէր ողորմութիւն մուրալու համար՝ ցուրտէ և անօթութենէ նեղուելով. ձմեռ գիշերները վերնայարկի մը մէջ քիչ մը յարդի վրայ խեղճութեամբ ցուրտէն կը սառէր։

ՍԱՌԱ.

Ի՞նչ կը լսեմ, ո՛վ Աստուած իմ։

ՌՈՏՈԼՖ.

Եւ երբ իր բերանէն սխալմամբ տրտունջ մը հանէր, անմնաչար կատաղի կնկան մը հայհոյանքները ու բարբարոսի մը հարուածները կ՚ընդունէր։ Ո՜հ, ո՛րչափ խիստ է սիրտըդ և ո՛րչափ անողորմ քու անձնահաճութիւնդ. . . բայց դուն այնպիսի վիճակի մէջ տեսնելով անշուշտ լալու էիր։

ՍԱՌԱ, ոտքի վրայ ընկնալով կենալ.

Այս վէրքը արդեօք մահացո՞ւ է։

ՌՈՏՈԼՖ.

Ո՜հ, մտիկ ըրէ, տակաւին չի լմնցաւ. . . կը յիշե՞ս այն գիշերը որ զիս այն սոսկալի թաղին մէջ գըտնելու եկար, ուր այնպիսի մարդիկ տեսար, որոնցմէ սոսկացիր. լսեցիր, տիկին կոմսուհի, այն սրիկաները, այն աւազակները կ՚ըսեմ, աղջկանդ հետ խստութեամբ կը վարուէին։

ՍԱՌԱ.

Ո՜հ, լռէ, Ռոտոլֆ։

ՌՈՏՈԼՖ.

Անիծեա՜լ ըլլաս, ինչու որ զան թող տալուդ պատճառաւ է որ այն աս սոսկալի վիճակին մէջ ինկաւ. անիծեա՜լ ըլլաս, ըստ որում երբ ան դժոխային տեղէն աղջիկս ազատելով, անոր հանդիստ բնակարան մը տուած էի, դուն զան իմ քովէս յափշտակեցիր։

ՍԱՌԱ.

Յանուն Աստուծոյ, լռէ՛։

ՌՈՏՈԼՖ.

Ըստ որում այս յափշտակութիւնը անոր մահուան պատճառ եղաւ։ Անէ՛ծք, անէծք թափին գլխուդ վրայ։

ՍԱՌԱ, պատուհանին նեցուկին կռնակը կայն ընելով դէպ ի հոն կը յառաջանայ։ — Ծառայ մը կը ներկայանայ.

Թշուառական, քեզ ո՛վ կանչեց։

ԾԱՌԱՅՆ.

Ներեցէք, տիկին կոմսուհի, բայց հիմա երիտասարդ մը եկաւ որ առանց

ժամանակ անցընելու Նորին Բարձ-րութեանը հետ խօսիլ կ'ուզէ. ըստ որում հրաման չունէի, չթողուցի որ ներս մտնէ... կ'ըսէ թէ իր անունը Քէրմէն է, ու այս նամակը գրեց:

ՌՈՏՈԼՖ.

Տուր:

Ցասման դուրս կ'ելլէ:

ՌՈՏՈԼՖ. նամակը առնելով.

Ինչ պատահեցաւ արդեօք, այս նամակը որմէ է, արդեօք Քէլէման-սէն է, չեմ կրնար գիս զսպել... ու ակամայ կը վախնամ: (Նամակը կը բանայ, հազիւ թէ քանի մը բառ կը կար-դայ որ տարաբախտաբեան ձայն մը կը հանէ.) Ո՛հ, դեռ կենդանի է:

ՍԱՐԱ.

Մ՛եր աղջի՞կը:

ՌՈՏՈԼՖ. խորդալը շարունակելով.

Այո՛ն է:

ՍԱՐԱ.

Մ՛եր աղջի՞կը:

ՌՈՏՈԼՖ.

Երթամ տեսնեմ զան.

ՍԱՐԱ. անոր թեւէն բռնելով.

Մ՛եր աղջի՞կը:

ՌՈՏՈԼՖ.

Թող զիս:

ՍԱՐԱ.

Քեզ թողո՛ւմ: ( Առանձ. ) Բայց չեմ գիտեր թէ ինչ տարօրինակ բան մը սրտիս մէջ կ'անցնի... ներսս կ'այրի... կը դողամ... Ինձ մօտիկ ըրէ. բոլոր ուժովս և բոլոր եռան-դովս այս ակարութեանս դէմ պիտի դնեմ: Ռոտոլֆ, թող որ աղջիկս տեսնեմ:

ՌՈՏՈԼՖ.

Գո՛ւն:

ՍԱՐԱ.

Ո՛հ, գիտեմ որ արժանի չեմ... բայց երդում կ'ընեմ որ զաւն և խորին զղջում մը կը զգամ... Նոր լոյս մը կը լուսաւորէ զիս. փառասի-րութեան և զռռողութեան գաղափար-ները կ'ոչնչանան. և մայրական սէրը կը յաղթէ անոնց:

ՌՈՏՈԼՖ.

Ո՛չ, իր երջանկութեանը համար պէտք է որ աղջիկը եղածներէն բան մը չգիտնայ...

ՍԱՐԱ.

Թո՛ղ այնպէս ըլլայ:

ՌՈՏՈԼՖ.

Ի՞նչպէս:

ՍԱՐԱ.

Թող զիս որ տեսնեմ, անգամ մը միայն տեսնեմ զան... ու երկար ա-տեն... Ռոտոլֆ, կ'երդնում, իրեն չպիտի ըսեմ թէ իր մայրն եմ...

ՌՈՏՈԼՖ. շանթահար կը մնայ.

Վ՛արը կառքին մէջ եղող երիտա-սարդ աղջիկը վեր հանեցէք:

ՍԱՐԱ. ծնկան վրայ կու գայ.

Ո՛ն երախտապարտ շնորհակալ եմ քեզ:

ՌՈՏՈԼՖ. զայն կը վերցնէ ու դէպ ի բազմոցը կը տանի.

Ոտք ելիր, տիկին, և յիշէ ըրած երդումդ...

ՍԱՐԱ.

Երդումս պիտի պահեմ, չպիտի ըսեմ թէ ցաւ կը զգամ, միայն անոր երեսը պիտի նայիմ, բայց դուն, Ռոտոլֆ, վրաս թափած անէծքդ ետ չպիտի առնես:

ՌՈՏՈԼՖ.

Գուցէ:

ՍԱՌԱ.

Շուտ ըրէ ուրեմն, քիչմըէն չի պիտի կարենաս անոր առջնը··· ըստ որում ան ատենը ամէն բան պիտի իմանայ։

ՌՕՏՕԼՓ.

Երկինք մարգոյն աւելի ողորմած է, ըստ որում աղջիկս ինձ կը վերադարձնէ։

ՍԱՌԱ.

Լուէ, ահա եկաւ։

ՌՕՏՕԼՓ, դուռը դիտելով.

Ո՛հ, չեմ կրնար սրտիս բաբախումը զսպել։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՆՈՅՆԵՐԸ, ՓԼԻՕՐ ՏԸ ՄԱՐԻ։

ՓԼԻՕՐ ՏԸ ՄԱՐԻ, աշխուժիւ իշխանազունին քովը կ'երթայ.

Տէր իմ, օրհնեալ է Աստուած, որ վերստին արժանի եղայ զձեզ տեսնելու։ (Իշխանազունը ձեռն կը դնէ առանց բան մը ըսելու.) Այնքան բաղձանք ունէի ձեզ տեսնելու··· ներեցէք որ մինչև հոս եկայ։

ՍԱՌԱ.

Հիմա քու խօսքդ կ'ընէինք, Մարի։

Փլէօր տը Մարի զարմացմամբ եւ շփոթելով կը նայի։

ՌՕՏՕԼՓ.

Խիստ տկար կ'երևիս։

ՓԼԻՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Բայց, տէր իմ, ձեր աչքն արտասուօք թրջուած կը տեսնեմ··· Երբեք այսպէս չնայեցաք ինծի։ (Տեսնելով որ Ռոտոլֆ և Սառա իրարու նշաններ կ'ընեն.) Բայց կ'աղաչեմ, ինչ կայ արդեօք։

ՍԱՌԱ.

Պատճառը աս է, Մարի, որ քու բացակայութենէդ 'ի վեր շատ բաներ պատահեցան։ (Մարի խոխադարյաբար իշխանազունը և Սառան կը դիտէ.) Դուն զիս չես ճանչնար··· մօտեցիր առանց վախնալու։ (Իշխանազունը անոր նշան կ'ընէ որ մօտենայ.) Իմացուեցաւ որ բոլոր քու թշուառութեանցդ պատճառը խիստ մեղապարտ կին մ'է եղեր։

ՌՕՏՕԼՓ.

Անշուշտ այն կինն ալ խաբուած պիտի ըլլայ։

ՍԱՌԱ, կամաց մը, իշխանազունին.

Ո՛հ, շնորհակալ եմ. (Փլէօր տը Մարիին.) Բայց դուն ալ վրէժդ առիր, Մարի··· ու թէ որ բոլոր քու դժբաղդութիւններդ վերցուած ըլլային, պիտի կարենայիր մոռնալ որ այն կինը քու թշուառութեանցդ պատճառ եղած է։

ՓԼԻՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Խիստ երջանիկ ըլլալուս համար պէտք եմ մոռնալ։

ՍԱՌԱ.

Կը ներե՞ս անոր։

ՓԼԻՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Այո, կը ներեմ. Թող Աստուած

լինձ ներողամիտ ըլլայ, ինչպէս որ ես ալ իրեն համար եմ։

ՍԱՌԱ.

Մարի, այս կինը քեզ պիտի օրհնէ... իր վերջին աղօթքը պիտի ըլլայ, ո՛չ թէ գթութիւն իրեն համար, այլ երջանկութիւն խնդրել քեզի համար... ու այս երջանկութի՛ը պիտի ունենաս... այո՛, Մարի, այնպիսի մեծ երջանկութիւն մը որ դուն չես յուսար։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ի՞նչ ըսել կ'ուզես, տիկին։

ՌՈՏՈԼՖ, ցած ձայնով.

Խնդրեմ եղիր, տիկին։

ՍԱՌԱ.

Մարի, քու ընտանիքդ գտնուեցաւ...

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ո՛վ Աստուած։

ՌՈՏՈԼՖ. ցած ձայնով.

Կ'աղաչեմ։

ՍԱՌԱ. ցած ձայնով.

Ո՛հ, թող որ աս միակ ուրախութիւնը ունենամ... (Բարձր ձայնով.) Գիտենք ո՛վ է քու հայրդ։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Հա՛յրս։

ՍԱՌԱ.

Ի՛նչպէս պիտի սիրես երբ ճանչնաս զան։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ես զան չեմ ճանչնար և միայն իմ աղնիւ տիրոջս պարտաւոր եմ ամեն բան։

ՍԱՌԱ.

Քեզի համար նոր կեանք մը պիտի սկսի։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Իմ նոր կեանքս տիրոջս վրաս ըսած ունեցած օրէն սկսաւ։

ՍԱՌԱ.

Կը սիրե՞ս զան...

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Այո՛, կը սիրեմ զան, վասն զի ազատեց զիս, վասն զի ինծի ըրած բարերարութիւնները անչափ են։

ՍԱՌԱ.

Ուրեմն միշտ սիրէ զան... վասն զի քու հայրդ է։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Ի՛մ հայրս։

ՌՈՏՈԼՖ.

Նկո՛ւ գրկացս մէջ, աղջիկս։

ՍԱՌԱ. ցած ձայնով.

Իսկ իմ մասիս քու ձեռքդ ալ ինծի շնորհէ...

[illegible] Փլէօր տը Մարիին գրկած ժամանակը յետոյ Սառային ձեռքերնուն, որ կը համբուրէ զայն։

ՓԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ.

Դուն հայրս ես, հապա մայրս ո՞ւր է։

ՍԱՌԱ.

Մեռաւ։

ՌՈՏՈԼՖ. անոր դառնալով.

Ի՞նչ կըսես... ո՛վ մեծդ Աստուած ...ինչպէս երեսին գոյնը նետեց... օգնութեան հասէք։

ՍԱՌԱ.

Խիստ ուշ է... թող կար վէրքիս մէջ անշուշտ... (Փիեռ տը Մորէնի ձեռքը բռնելով.) Այո՛, Մարի, ես քու մայրդ եմ... քու դժբաղդ մայրդ... որ առանց զքեզ գրկելու կը մեռնիմ։

Իր աղջիկին երեսը նայելով կը մեռնի։



## ՊԱՏԿԵՐ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ. — ՔԱՌԱՌԱՁ ՓՈՂՈՑԸ

Անտառի մէջ քառառաջ փողոց մը, ուր ցանցան ճամբաներ կը վերջանան։ Աջ կողմը բերդակ մը՝ որուն տակովը ծառերէ շրջապատեալ ջրանցք մը։

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԹՈՐԹԻԼԵԱՐ. ՇՈՒՐԻՆԵՕՐ՝ Նուաղեալ.

ԹՈՐԹԻԼԵԱՐ. Շուրինեօրի քով ծնկան վրայ եկած է և անոր գլուխը ծունկը բերելով կ'աղաղակէ.

Շուրինեօր, Շուրինեօր, պատասխան տուր ինձ... ձայնս չլսեր... ահա ժամէ մը աւելի է որ բոլորովին նուաղեալ է... ասոր պատճառը անշուշտ իր վէրքը և խոնջենքն է... վասն զի Աւերոզաց կղզիէն մեկնելնէս ի վեր երկար ժամանակ քալեցինք։ (Աջ կողմը Պիէռոս ու Պարպիլէօն կը փնտռուին, որոնք ջրանցքին մէջ կը պահուին։) Ինծի անանկ կ'երևի թէ տերեւներուն մէջ շարժում մը կայ։ Երանի թէ մէկը գտնուէր... ու ինծ օգնութեան հասնէր։ Արդեօք մարդ մը կա՞յ հոն։ (Պիէռոս ու Պարպիլէօն կը հեռանան։) Մարդ մը չկայ... գուցէ հովն էր տերեւները շարժողը։ Այս անտառին

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ, որ խմաց մը անոր մօտեցած էր․

Քեզ խօսելիք ունիմ ։

ՓԷՐԱՆ․

Ի՞նչ կ'ուզես ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ, գէնուային որ ներսէն խօսք կը լսենայ․

Գէնուա, այդ կոչմը հակէ ։ (Փէ. րանին․) Ոսկիիդ կէսը ։

ՓԷՐԱՆ․

Ես ոսկի չունիմ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ․

Այս անտառը մտած ժամանակդ, ձեռքդ փոքր սնտուկ մը ունէիր․․․ հոս պահեցիր զան, մեր բաժինը մեզ տալ պէտք ես ։

ՓԷՐԱՆ․

Օխ պիտի վախցընե՞ս․․․ կը մոռ. նա՞ս որ ևաւնէս բնկած են ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ․

Մէկտեղ մտնինք կամ մէկտեղ ազատինք ։

ՓԷՐԱՆ․

Հաս աղէկ, այնպէս թող ըլլայ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ․

Այնչափ չարութիւն ըրի, ինչ շահեցայ ։ Թշուառութիւն, վախ ու նախատինք կրեցի ։ Եւ այս տեսակ կեանք պէտք չէ ինձ ։

ՓԷՐԱՆ․

Փոխէ զան եթէ կարող ես ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ․

Ես ալ այն տեսակ կեանք մը վա. րել կ'ուզեմ, որ դուն կ'անցընէիր ։ Մենք քեզի հետ չարութեան գոր. ծերը մէջերնիս բաժնած էինք․ ես բիրտ և կատաղի զօրութիւնն ունէի, իսկ դուն՝ խաբեբայութիւն, ստա. խօսութիւն և կեղծաւորութիւն․․․ Այսօր մէջերնիս հաւասար բաժնել պէտք ենք այս դժոխային միակցու. թեան պտուղը ։

ՓԷՐԱՆ․

Իմ պատասխանս այս է․ Չեմ ուզեր ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ․

Ես պատրաստուած եմ փախչելու և առանց ստակի եմ ։ Նկուր հաւանէ ։

ՓԷՐԱՆ․

Ո՛չ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ․

Երկու հոգի ենք․․․ պիտի հաւա. նիս ։

ՓԷՐԱՆ․

Ո՛չ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ․

Երկար ատենէ 'ի վեր դուն չարու. թիւն մը կը մտածես, ու ես զան 'ի գործ կը դնեմ․․․ եթէ այս ժամուս մէջ համբերութեանս ծայրը հասնե. լով, թէ մտածելու և թէ 'ի գործ դնելու ըլլամ․․․ զգոյշ կեցիր․․․ վերջը սարսափելի պիտի ըլլայ ։

ՓԷՐԱՆ․

Օխ սպաննէ, գաղտնիքս հետս կը տանիմ ։

ՄԷԹՐԸ Տ'ԷՖՕԼ․

Քեզ չպիտի սպաննեմ, ու դուն ինքնին զիս քու գանձիդ պիտի տա. նիս․․․ դարձեալ կըսեմ, սարսա. փելի պիտի ըլլայ վերջը․․․

ՓԷՐԱՆ․

Փորձ ըրէ ըսածներդ 'ի գործ դը. նելու ։

ՊԷՆՈՒԱ, Նօէլ-ի պէտարանը կը մտնէ.

Կու գան, կը մօտենան ։

ՖԻՐԱՆ. Միթրը տ'Իքօլին.

Փախչինք... թէ պահուինք ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Միատեղ պահուինք ։

ՖԻՐԱՆ.

Այս խրձիթին մէջ.

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ. Պէնուային.

Գիտես քեզ ինչ ըսի, ըսածս պիտի կատարես ։

Երեքն ալ խրձիթին մէջ կը պահուին ։

---

# ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԵՐԿՈՒ ՊԱՀԱՊԱՆ. ՇՈՒՐԻՆԷՕՐ. ԹՕՐԹԻԼԵԱՐ. Ետքը՝ ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ. ՊԷՆՈՒԱ. ՖԻՐԱՆ. ՌՕՏՕԼՖ. ՖԼԷՕՐ ՏԸ ՄԱՐԻ. ՏԻԿԻՆ Տ'ԱՐՎԻՑԼ. ՁԻՆԱԿԻՐՆԵՐ. ԳԻՒՂԱՑԻՆԵՐ. ԳԻՒՂԱՑՈՒՀԻՆԵՐ ։

ԹՕՐԹԻԼԵԱՐ.

Այս կողմէն եկէք, այս կողմէն... ես տեսայ զանոնք ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Այս ծառաստանը աղէկ մը պաշարեցէք... բոլոր փախչելիք տեղերը բռնենք ։

Խորին լռութիւն ։ Յանկարծ Չրանտօին կողմը ձայն մը կը լսուի ։ Ամենքը ձորի մէջ կ'իյնան ։

ԹՕՐԹԻԼԵԱՐ.

Ձայն մը լսեցի, Շուրինէօր, այն կողմը...

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Լռէ ։

Ամենքն ալ ծառերուն ետևը կը պահուին ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ. ձայնը նեղած խրձիթէն դուրս ելլելով.

Ասոր ձայնը զիս սոսկացուց ։

ՊԷՆՈՒԱ.

Սպասենք որ դուրս ելլայ ։

Պահապան զինուորները անոնց քով կողմը չ'անցնին ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Ինթէ ձայն մը հանէք, մեռած էք ։

ՖԻՐԱՆ. յուսահատութեամբ, խրձիթէն դուրս ելլելով.

Կոյր, կոյր, ո՞ւր ես... ո՞ւր կը գտնուիս արդեօք... վրէժս պիտի հանեմ... ո՛չ, ո՛չ, չեմ կրնար ։ (Վախնալու շարժում մը. Շուրինէօրին նշանին վրայ խորին լռութիւնը կը տիրէ.) Գիշե՜ր, տխո՜ւր գիշեր, ո՛հ, ինչպէս սոսկալի է ։ Պէնուա, ո՛հ, կ'աղաչեմ... զիս մինակ մի' թողուր... գութ ունեցիր վրաս... հոդ ես, պատասխան տուր ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ. պահապանի մը ազանուէրներէն առնելով.

Այո՛ ։

ՖԻՐԱՆ.

Զիս մինակ մի' թողուր, հիմա գանձիս ուր ըլլալը իմացընեմ քեզ... բաժինս ինծի պիտի թողուս... Այս խրձիթին ձախ կողմը... առաջին ծառին տակը... տերևներուն տակը կը գտնուի ։

Շուրինէօր այս ամէն պէղէնութեանց վրայ ձեռուկը կը դնէ ։

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Պզտիկ սնտուկ մը ։

ՄԻԹՐԸ Տ'ԻՔՕԼ.

Ընկծեա՛լ ըլլաս ։

ՖԻՐԱՆ.

Մատնուեցայ (շինուորները շէնքը կը բռնեն.) բռնուեցայ:

ԴՈՒՐՍԷՆ ՁԱՅՆԵՐ.

Ահա կառքը, ահա կառքը:

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Այս երեք թշուառական դարշելինները աղէկ մը շրջապատեցէք որ Ֆ. տը Մարին չկրնայ զանոնք տեսնել:

ԺԵՐՄԷՆ, ՐԻԿՕԼԷԹ, ագարակին պահապանին և իր մարդիկը ուրախութեան ձայներով ներս կը մտնեն ու կառքին դիմացը կ'երթան. որ ներս կը մտնէ. և որուն մէջ կը գտնուին Ռոտոլֆ, որ առջևը նստած է. իսկ տիկին տ'Արվիլ և Ֆլէօր տը Մարի էտևը նստած:

ԱՄԷՆՔԸ.

Կեցցէ մեր տէրը, կեցցէ Պ. Ռոտոլֆ:

ՌՕՏՕԼՖ.

Մնաք բարեաւ, բարեկամներ, առմենուդ ալ երջանկութիւն կը բաղձամ, ազնիւ մարդիկ:

ՇՈՒՐԻՆԷՕՐ.

Աղատեցաւ Ռոտոլֆ, երջանիկ է Ֆլէօր տը Մարի, ահա իմ փափագիս հասայ: Երթաս բարեաւ, Ֆլէօր տը Մարի (Աչքը կառքէն վրայէն չվերցնելով.) Երթաս բարեաւ Ֆլէօր տը Մարի:

ՖԻՐԱՆ. Երկու պահապաններէ շրջապատեալ տեղւոյն մէջ կը մնայ,

Ֆլէօր տը Մարին կը մեկնի: Ալ ոսկի չունիմ: Կոյր մնացի: Յաղթուեցայ: Գուժ ունեցիր վրաս, ո՛վ Աստուած իմ, Աստուած իմ, Աստուած իմ:

Երկու պահապանները կը բռնեն զինքը:

ՎԵՐՋ

ՀՀ Ազգային գրադարան
NL0349396